

Ա. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Պատմական ակնարկ և տեսական ուսումնասիրություն)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականագիտական, ոճագիտական և տաղաշափական տերմինաբանությունը առանձին ուսումնասիրության նյութ չի դարձել։ Հիշյալ բնագավառի տերմինները որոշ շափով արտացոլվել են բառարանների, քերականության, ճարտասանության, գրականության հարցերին վերաբերող առանձին աշխատություններում, շոշափվել են մեծ մասամբ կողմնակիորեն, այն առումով, որ հայ մատենագրության կամ գրականության պատմությունը ներկայացնող արժեքավոր բազմաթիվ աշխատությունների հեղինակները, այս կամ այն առիթով, գործածել են համապատասխան մասնագիտական տերմիններ, սակայն համեմատաբառ շատ սակավ դեպքերում բացատրել դրանց իմաստն ու բովանդակությունը, ձևակերպել գրական ուղղությունների, սեռերի, տեսակների սահմանումը։

Առաջմ հրապարակի վրա շոմենք մեզ հետաքրքրող բնագավառի տերմինաբան, որի մեջ ամփոփված լինեն հայերեն համապատասխան տերմինները՝ սահմանումներով։ Տարիներ առաջ լույս տեսած է. Տիմոֆեյի և ն. Վենգրովի «Գրականագիտական տերմինների համառուս բառարանի» հայերեն թարգմանությունը հեռու է հայերեն գրականագիտական տերմինների բառարան լինելուց։

Գրականագիտական սերմինաբանությունը համեմատաբար առավել շափով ամփոփված է ու գիտականորեն համակարգված Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տաղաշափություն (մետրիկա)», էղ. Զրբաշյանի «Գրականության տեսություն», Գ. Վահանյանի «Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ» և Գ. Բ. Զահուկյանի, Ֆ. Հ. Խլղաթյանի «Հայոց լեզու» ուսումնասիրություններում ու ձեռնարկներում, որոնք նույնպես նպատակ չունեն հավաքելու տվյալ բնագավառի հայերեն բոլոր տերմինները, սակայն ձեռնարկի պահանջով և սահմաններում տալիս են ընդգրկված իրակությունների անվանումներն ու բացատրությունները, տերմինների

սահմանումները։ Հայերեն գրականագիտական տերմինների միակ բառարանը էդ. Զարաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանն» է, որի մասին կիսումի բառարանների բաժնում։

Մեր նպատակն եղել է հայ գրականության հարցերին ու պատմությանն առնչվող շուրջ հարյուրամյա գրականությունից, ընթացիկ մամուլից հավաքել և կազմել, հնարավորության սահմաններում, ընդարձակ ցանկ և ներկայացնել այդ տերմինների արտահայտած հասկացությունների զարգացման՝ պատմությունը, իմաստափոխությունը<sup>3</sup>, ինչպես նաև որոշել, թե դրանք ինչ ձևով ու շափով են ներկայացված հիշված հրատարակություններում՝ իրենց տարբերակներով, իմաստային նրբերանգներով։ Որոշել հայերեն մատենագիտության, հատկապես գրական բառապաշարի կազմավորման հիմնական միջոցները։ Բացահայտել հին գրականությունից ավանդված տերմիննաբանական միավորների վիճակը, որոնք գործածվել են XIX դարում և գործածվում են այժմ։ Որոշել ավանդական տերմինների տեղը ժամանակակից գրականագիտական տերմինների համակարգում։

Գրականություն և գրականագիտություն.—Ընդհանրապես գրականություն ասելով հասկանում ենք միայն գեղարվեստական գրականությունը, այսինքն՝ արվեստի մի տեսակը, որի մեջ կերպարներ ու պատկերներ ստեղծելու միջոցը խոսքն է, լեզուն։

Դոյություն ունեն գեղարվեստական գրականության երեք հիմնական սեռեր՝ վիպերգական, քնարական և թատերգական, որոնք ընդգրկում են գրական ստեղծագործության բազմաթիվ կոնկրետ տեսակներ ու ձևեր։

Գրականագիտությունը գիտություն է գեղարվեստական գրականության մասին։ գրականագիտության առանձնահատկությունները պայմանավորում են նրա ինքնուրույնությունը մյուս հասարակական գիտությունների շարքում։ Գրականագիտությունը սերտորեն շաղկապված է գեղագիտությանը, որն ուսումնասիրում է գեղարվեստական ստեղծագործության ընդհանուր օրենքները։ Պատմական զարգացման ընթացքում գրականագիտությունից անջատվել են հետևյալ ինքնուրույն ճյուղերը։ ա) գրականության տեսությունը, բ) գրականության պատմությունը, գ) գրական քննադատությունը և դ) բնագրագիտությունը։ XIX դարի կեսերին ծնունդ առավ մարքսիստական գեղագիտությունը։ Վերջինս գրականությունը դիտում է որպես հասարակական երևույթ, իրականությունը ճանաչելու յուրահատուկ ձև։ Մարքսիզմի զարգացման լենինյան փուլը նոր էջ բացեց գրականագիտության զարգացման պատմության մեջ։

Տերմին և տերմինաբանություն.—Գրական լեզվի բառակազմի մեջ պայմանագրությունը տերմինները, այսպիս կոչված տերմինացին բառապաշարը, որը զարգանում է բազմածև և արագորեն: Միաժամանակ տեղի է ունենում փոխազդեցություն ընդհանուր ազգային գրական լեզվի բառապաշարի և գիտության, տեխնիկայի, մասնագիտական աշխատանքի, արվեստի և այլ բնագավառներին վերաբերող տերմինաբանական ոլորտների միջև:

Տերմինի և տերմինային համակարգի ուսումնասիրությունը ընդհանուր լեզվաբանության տեսության խնդիրն է: Այն, ինչ կապված է տերմինի հասկացության պարզաբանման հետ, լեզվաբանությունը մերձեցնում է ոչ միայն գիտության զանազան բնագավառների, այլև առտադրական պրակտիկայի, արտադրության, մասնագիտական աշխատանքի տարրեր ոլորտների հետ: Տերմինաբանության մեջ ակնառու կերպով բացահայտվում է լեզվի զարգացման, նրա բառային համակարգի կապը ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի պատմության հետ: Գիտության այս կամ այն ճյուղի, մշակույթի, արտադրական գործունեության տերմինաբանության պատմությունը միաժամանակ բնության և հասարակության վերաբերյալ գիտելիքների զարգացման օրինաչափությունների պատմություն է:

Տերմինի կերտման և սահմանման աշխատանքն ունի երկու կողմ՝ տերմինի կառուցվածքային-լեզվական կեղևը և հասկացության իմաստային բովանդակությունը, որոնք պայմանավորված են այս կամ այն գիտաճյուղի հասկացությունների համակարգի զարգացումով: Այս երկու կողմերը փոխադարձաբար կապված են և միաժամանակ պայմանավորված են տվյալ ժողովրդի պատմությամբ, մշակութային, պատմական ավանդույթներով:

Բանասիրական գիտությունների ոլորտում նույնպես հարցեր են ծառանում՝ կապված տերմինի հասկացության անկայունության և անորոշության հետ: Զգացվում է գրականագիտական տերմինների ընդարձակ բառարան ունենալու պահանջ:

Տերմինները, ինչպես լեզվի բոլոր բառերը, մտնում են տվյալ լեզվի բառակազմի մեջ և ենթարկվում նրա հնչյունական ու քերականական կանոններին: Սակայն գիտության, տեխնիկայի և մշակույթի որոշ ճյուղերի կամ բնագավառների տերմինային համակարգի առանձին միավորներ առօրյայում ստանալով լայն կիրառություն, ապատերմինացվում են և դառնում լեզվի հիմնական բառագանձի բազկացուցիչ մաս, ինչպես՝ զերմաշափ, սպիրտ, հեռուստահեռություն, ռադիոկայայն, բատրոն, կինոնկար և բազմաթիվ այլ տերմիններ: Եվ հակառակ՝ լեզվի

Հիմնական բառապաշարի որոշ բառեր կամ նրանց մասնավոր իմաստ-ներ գործածվում են որպես տերմիններ, այսինքն տերմինացվում են, ինչպես՝ զլուս (մարմնի մաս և գրքի մաս), ոտք (մարմնի մաս և տաղաշափական տերմին), շափ (շափի միավոր և տաղաշափական տերմին), տուն (շենք, բնակվելու տեղ և ոտանավորի մաս) և այլն:

Տերմինը լինելով բառ կամ կայուն բառակապակցություն, զգալիուրեն տարբերվում է լեզվի մյուս բառերից իր մի քանի առանձնահատկություններով: Նախ՝ տերմինները մասնագիտական բառեր են, առարկաների, երևույթների անվանումներ: Ուստի նրանք զուրկ են զգացականությունից: Հետևաբար վեպիկ, խաղիկ տերմինների մեջ -իկ վերջածանցը փաղաքական մասնիկ չէ, ինչպես բարիկ և այլ բառերի մեջ:

Տերմինի առանձնահատկություններից, լիարժեքության շափանիշներից է նրա բառակազմական ճկունությունը: Եթե տերմինը գոյական անուն է, ապա նրանից կազմվում է բայ, ածական, տվյալ տեսակի առարկաների ամբողջություն կամ հատկություն արտահայտող նոր գոյական անուն, ածական անունից՝ գոյական և այլն, օրինակ՝

բանաստեղծ	-բանաստեղծաբար
	-բանաստեղծական
	-բանաստեղծականացնել
	-բանաստեղծականացում
	-բանաստեղծականուրյուն
	-բանաստեղծանալ
	-բանաստեղծապես
	-բանաստեղծացնել
	-բանաստեղծացում
	-բանաստեղծել
	-բանաստեղծորեն
	-բանաստեղծության

Համեմատության մեջ դնելով պնես փոխառյալ բառը, կտեսնենք վերջինիս հնարավորությունների սահմանափակությունը նոր բարդություններ կազմելիս: Այս հանգամանքը հաշվի է առնվում զուգահեռ ձևերից մեկին նախապատվություն տալիս:

Ցավոք, գրականագիտական բազմաթիվ հիմնական հասկացություններ առայժմ կա՛մ զուրկ են պահանջվող ճշգրտությունից, հստակությունից, կա՛մ այդ հատկություններն ունեցած հնուց ավանդված մի շարք տերմիններ հետագա գործառության ընթացքում կորցրել են իրենց երբեմնի որոշակիությունը: Օրինակ՝ վեսլ տերմինը հին գրականության մեջ ունի մեկ որոշակի իմաստ, որն արձանագրված է նոր հայկագյան բառարանում, այսպես՝

Վեպ, վիպի, պաց. գ. Հին զրոյցք՝ իրական կամ ստալօդ. պատմութիւն արձակ կամ քերթողական, լուր՝ բանիւ կամ գրով:

Բառարանի հեղինակները ստուգաբանորեն հայերեն վեպ բառը կապում են հունարենի հետ, որպես համարժեքներ տալով հունարեն էպոս և լատիներեն վեցետ բառերը, ապա վկայություններ են բերում Ոսկեբերանից, Ագաթանգեղոսից, Խորենացուց և Գանձակեցուց: Բառարանում առկա են այս արմատով (հնչյունափոխված) կազմված հետեւյալ բառերը՝ վիպագիր, վիպագործ, վիպագել, վիպապատում, վիպասան, վիպասանաբար, վիպասանական, վիպասանել, վիպասանություն, վիպասել, վիպիլ: Սակայն, ինչպես հայտնի է, հետագայում վեպ տերմինին տրվեց նոր բովանդակություն, սկսեցին այն գործածել որպես համարժեք ֆրանսերեն բուռություն, սկսեցին այն գրականությանը վերաբերող ուսումնասիրությունների և հողմածների մեջ զուգահեռաբար գործածվում են վեպ բառի այդ երկու ըմբռնումները, սակայն Ս. Մալխասյանցն իր կազմած հայերեն բացատրական բառարանում վեպ բառի առաջին իմաստը բացատրում է հիմք ընդունելով նոր հայկապյան բառարանի բացատրությունը.

Վէպ (վեպի, աց), գ. 1. Զրոյց՝ ավանդություն պատմական բովանդակությամբ, արձակ կամ ոտանավոր, ստույգ կամ մտացածին, մեծ մասամբ ամենահին ժամանակի անձերի կամ անցքերի վերաբերյալ: Վեպը ունի մի քանի ստորաբաժանումներ:

Ապա՝ նույն բառահոգվածում տալիս է վեպի ենթատեսակները՝ դյուցագենական վեպ, ծողովդրական վեպ, կենդանական վեպ, իրենց բացատրություններով և համապատասխան վկայություններով: Դյուցագենական վեպի օրինակ են բերված «Էլիականը», «Էնեականը», «Շահնամեն», իսկ որպես ծողովդրական վեպ՝ «Սասունցի Դավիթը»:

Հետաքրքրական է, որ նույնիսկ 1945 թ. Ս. Մալխասյանը վեպ տերմինի բուն իմաստն ընդունում է միայն հին գրականության միջոցով ավանդված «զրոյցի» նշանակությունը, որովհետև վեպ բառի երկրորդ իմաստը բացատրում է հետեւյալ կերպ.

Ներկայումս հաճախ գործ է ածվում ոռմանի նշանակությամբ, որից շփոթություն է ծագում:

Այնինչ, դարիս սկզբից եթ վեպ բառը արդեն գործածվում էր որպես եվրոպական ոռմանի միակ և հասկանալի համարժեքը հայերենում (Ա. Արփիարյան, Լ. Մանվելյան և ուրիշներ):

Նույն պատկերն է ներկայացնում վիպական բառը: Բայ նոր հայկացան բառարանի.

Վիպասան, ի. աց. գ. Վիպագիր, պատմաբան. և վիպագործքերթող պատմաբան.

ապա՝

Վիպական, ա. Վիպասանական, պատմական:

Ա. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանում.

Վիպասան, ի (աց), ած. գ. 1. Հին Հայաստանում՝ ժողովրդական երգի, որ երգում էր պատմական բովանդակությամբ քերթվածներ: 2. Վիպագիր, պատմաբան, պատմիչ:

Իսկ երրորդ իմաստը գրաբարյան նշում ունի.

ած. Վիպասանական, պատմական:

Չորրորդ իմաստը հազվադեպ գործածվող նշում ունի.

Անճառելի բաները պատմող՝ բացատրող:

Ժամանակակից կենսունակ, գործածական իմաստը բերված է վերջում, այն էլ՝ հազվադեպ գործածական նշումով:

Վէպ՝ ոռման գրող հեղինակ:

Վեպ տերմինի բացատրությունների հերթագայությունը պայմանակորված է բառի նշանակությունների պատմական զարգացմամբ, սակայն 5-րդ իմաստը հազվադեպ գործածական (\*) նշանով տալը չի արդարացվում.

Մի ուրիշ օրինակ ևս. շատ գործածական ուսալիզմ տերմինի մասին: Երբ այն երևան եկավ XIX դարում, նրանով արտահայտում էին պարզ ու որոշակի գրական երևույթներ: Խրոկհառուղի և եֆրոնի հանրագիտարանում ուսալիզմը ձևակերպված է այսպես. «Ծեալիզմը իրականությունը ճշտորեն վերարտադրելու ինդիք է դնում արվեստի առաջ» («Թանգարական հանրագիտարան» 1-ին, 2-րդ և 3-րդ համարականությունների նույն բառահոդվածը, նկատելի է, որ նրանցում ուսալիզմի էությունը նույնն է, սակայն ձևակերպման մեջ կան տարբերություններ):

Գրականագիտության և, ընդհանրապես, գիտության մյուս բնագավառների տերմինները սահմանելիս և հրահանգավորելիս անհրաժեշտություն է առաջանում խորապես ուսումնասիրելու տվյալ տերմինի պատմական զարգացման ընթացքը:

Գիտության յուրաքանչյուր բնագավառ տերմիններով արտահայտվող հասկացությունների որոշակի համակարգ է:

Երկարամյա պատմության ընթացքում, բնականաբար, իր համակարգն է ստեղծել նաև գրականագիտությունը: Այդ համակարգը, անշուշտ, ունի իր սկիզբը, զարգացման պատմությունը, որը նույնպես փոփոխության ընթացքի մեջ է՝ կապված գրականագիտության զարգացման հետ: Առաջանում են գրական նոր երևույթներ, իրակություններ,

խորանում ու հարստանում են մեր զիտելիքները այդ ասպարեզում։ Գրականագիտական տերմինաբանության մեջ որոշ բան հնանում է, ժամանակի ընթացքում նույնիսկ մահանում։ Դրա հետ մեկտեղ նոր հասկացությունների երևան գալու հետևանքով առաջանում է նոր տերմինների պահանջ։ Ուստի հաճախ ավանդված տերմիններին տրվում է նոր բովանդակություն, նոր նշանակություն և կիրառություն։ օրինակ՝ վիպագիր տերմինը, նոր հայկագյան բառարանում բացատրված է՝

Քրող զվեպս, պատմագիր, վիպասան, քերթող պատմաբան։ իսկ Ա. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանում գրանցված է նաև երկրորդ նոր իմաստ։

ած, գ. 1. Պատմական վեպեր գրող, պատմիչ, պատմագիր։

2. Վեպ (2)՝ ոռման գրող, ոռմանիստ։

Ժամանակակից գրականագիտության մեջ տարածված ու սովորական է վիպասան տերմինը րոմանց նշանակությամբ։

Քննենք նաև վիպասանություն տերմինը, որը նոր հայկագյան բառարանում ունի մեկ որոշակի իմաստ։

Վիպասանություն, գ. Վէպ. Հին կամ քերթողական պատմութիւն, հիշատակագրութիւն, պատմագրութիւն։

Ա. Մալխասյանցի բառարանում քերված է երեք նշանակությամբ։

1. Վեպ, հին անցքերի պատմություն։ 2. Քերթողական գրվածք պատմական բովանդակությամբ։ 3. տ. Ոռման։

Ժամանակակից գրականագիտական գրականության մեջ վիպասանություն տերմինը կիրառվում է մի նոր՝ «վեպերի ամբողջությունը» իմաստով, որպես համանիշ վիպագրություն տերմինի՝ դուրս մղելով «վեպի» նշանակությամբ կիրառությունը։

Ինչպես յուրաքանչյուր գիտության, այնպես էլ գրականագիտության տերմինաբանությունը պետք է ունենա, հնարավորին չափ, կայունություն, նշգրատություն, որոշություն։ Միաժամանակ այն պետք է լինի ընդհանուրի կողմից ընդունված և ընդհանուրի համար պարտադիր թեև ամեն տերմին միշտ էլ ինչ-որ շափով պայմանական է, սակայն անհրաժեշտ է նրան տալ մեկ խստորեն և հստակորեն սահմանված բովանդակություն։

Պարզ է, որ գրականագիտական, ինչպես և մյուս հասարակագիտական տերմինները շեն կարող ունենալ այն աստիճանի որոշություն, ինչ որ բնական ու ճշգրիտ գիտությունների, մասնավորապես մաթեմատիկական գիտության տերմինները։ Ուստի որոշ գրականագիտական հասկացություններ, հետևաբար և նրանց բովանդակությունը դրսենորդ տերմինները նույնպես, գործածվում են ոչ պարզորդ կամ կայուն իմաստով։

Համաշխարհային գրականագիտական տերմինաբանության մասին խոսելիս՝ պատմությունը սովորաբար սկսում են հին հնդիկների և հին չինացիների պոետիկայի և դնագիտության տերմիններից, սակայն գլուրանք շատ ներփակված են եղել այդ ժողովուրդների հայրենի երկրներից սահմաններում, ուստի չէին կարող ազդեցություն ունենալ հետագա ելքոպական գրականագիտության և համապատասխան տերմինաբանության վրա: Նույնիսկ, եթե վերջինս ազդեցություն կրած էլ լինի, ուրեմն նվազագույն շափով, այն էլ՝ XX դարի սկզբին միայն:

Ինչպես հայտնի է, եմրոպական գրականագիտության պատմությունը սկսվում է հին հույների աշխատություններով:

Դեռ Արիստոտելից առաջ հայտնի են եղել թեագենի և Գլավկի անունները, սակայն շոշափելի, փաստացի գրեթե ոչինչ չի հասել մեզ, և չենք կարող ասել՝ նրանք արդյոք ունեցել են մշակված գրականագիտական տերմինաբանություն, ի՞նչ էին ներկայացնում նրանց պատմագրական և տեսական-գրական աշխատանքները: Ցավոք, պահպանվել են միայն աննշան պատառիկներ:

Այդ իսկ պատճառով՝ դասական բանասերները գտնում են, որ գրականագիտությունը, որպես գիտություն, սկիզբ է առել Արիստոտելի ժամանակներից: Արիստոտելի «Ճարտասանություն» և «Պոետիկա» աշխատությունները տեսական ընդհանրացում են հսկայական փաստական նյութի, հատկապես հեղինակին մատշելի ամբողջ հումական գրականության:

Հասկանալի է, որ Արիստոտելի Ճարտասանության ու Պոետիկայի մեջ պետք է հանդես գար ու մշակվեր գրականագիտական տերմինաբանությունը: «Պոետիկայի» մեջ ամենաէականն այն է, որ մեծ մտածողը կարգի է բերել մինչ այդ գոյություն ունեցող, ավանդաբար անցած ժառանգությունը, ապա այն համալրել է իր լրացումներով:

Տվյալ դեպքում մեզ համար ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում Արիստոտելի «Պոետիկան», որի մեջ հանդես է գալիս գրականագիտական տերմինաբանության մինչ օրս պահպանված միավորների զգալի մասը. ինչպես՝ պոետիկական ստեղծագործություն, էպոս, տրագեդիա, կոմեդիա, դիֆիրամբային պոեզիա, կերպար (143)<sup>4</sup>, էպիկ գրաներ, շափ, դիալոգ, արիմետր, էլեգիա (144), երկ, նատուրալիստ, ռապսոդիա, հիմն (145), պրոզա, պարոդիա (149), դրամա (147), ոիքմ, իմպրովիզացիա (149), գովասանական երգեր, պարսավող երգեր, կոմիկ երգեր, յամբային շափ, յամբիկներ, էպիկներ (150), սատիրա, չրսութանի բարեյ (151), նեխամետր, էպիգող (152), գործողություն (154),

կոմպոզիցիա (155), պիես (159), ներոս, պոեմ, պոետ, շափածո, արձակ ստեղծագործություններ (163), պոեզիա, գործող անձեր (164), միֆեր, պարզ ֆարովա, միջադեպային ֆարովաներ (165), նախերգանք (169), ողբ (կոմոս), անապեստ, տրոֆեա (170), բնեադատ (172), հանգուցալուծում (179), սյուժե (տ) (184), հանգույց (186), պարետիկ տրագեդիա (187), էպիկական կոմպոզիցիա (188), մետաֆորա (195), յամբային տող, բանաստեղծական տող (201), դիֆիրամբ, յամբ (202), դրամատիկական պոեզիա (203), բանաստեղծական-հերոսական շափ (206), էպիքական երկ (207), գեղարվեստական կերպար (216), էպոպեա (219) և բազմաթիվ այլ տաղաշափական, ոճաբանական տերմինային միավորներ, բառակապակցություններ:

Արիստոտելը բացատրում, պարզաբանում է գրականագիտական, ոճագիտական ու տաղաշափական զանազան իրակություններ: Բարկանին հանգամանորեն խոսում է տրագեդիայի (ողբերգության) և կոմեդիայի (կատակերգության) մասին: Նա տալիս է կոմեդիա բառի նաև ստուգաբանությունը<sup>5</sup>: Կոմեդիան վատերի վերարտադրությունն էր համարվում, սակայն ոչ նրանց ամբողջ արատավորության, այլ լոկ ծաղրական կողմերի, քանի որ ծաղրականը վատի մի մասն է կազմում:

Քննելով գրական երկի կառուցվածքը՝ Արիստոտելը սահմանում է ֆարովան. «Փարովա ասելով ես հասկանում եմ գործողությունների կապակցումը»<sup>6</sup>: Ֆարովան ունի երկու տարր՝ պերիպետիա և ճանաչում:

Հանգամանորեն քննված է ողբերգության տեսակը: «Պոետիկայի» հատկապես 19-րդ դլխում խոսվում է ողբերգության տարրերից՝ խոսքի և մտածելակերպի մասին: Ըստ հեղինակի՝ «մտածելակերպը պատկանում է ճարտասանության բնագավառին, առավել հատուկ լինելով ճարտասանության իմացության եղանակին: Մտածելակերպի բնագավառը ընդգրկում է այն ամենը, ինչ պետք է ստեղծել խոսքի օգնությամբ: Խոսքի և մտածելակերպի խնդիրն են՝ ապացուցումը, հերքումը, կրքերի գրառումը, օրինակ՝ կարեկցում, երկյուղ, զայրացում և համանաները, նմանապես և վեհացումն ու նվաստացումը» (190): 20-րդ դլխում խոսվում է խոսքի մասերի (տառ, բառ) մասին որպես մետրիկայի (տաղաշափության) խնդիրների, ինչպես նաև կատարվում է վանկի և հնչյունի տարրերության քննությունը:

Քննության առանձին հարց է դարձել նաև էպոսը: Վերջում՝ հակիրճ եղրափակման մեջ, հեղինակն իր աշխատառության նպատակն ու խընդիրը ամփոփում է այսպիս. «Մենք բավականաշափ խոսեցինք տրագեդիայի և էպոսի մասին: Բացատրեցինք նրանց էությունը, տեսակները, բաղկացուցիչ մասերը, վերջինների թիվը, նրանց տարրերությունները, ցույց տվեցինք բանաստեղծական այդ ստեղծագործությունների հա-

շղության և անհաջողության պատճառները, քննադատության պատճառները և նրանց իրագործման եղանակները» (221), ուստի իրավամբ այն կարելի է ճանաչել որպես գրականագիտության հիմնաբար հանդիսացող աշխատություն, որից հետո և որի հիման վրա հետագա դարերում զարգացավ գրականության տեսությունը, գրականագիտությունը և համապատասխան տերմինաբանությունը:

Հստ էության, հետագա հունական և հոռմեական (նույնպես և միշնադարի, ապա վերածննդի, ընդհուպ մինչև XIX դարը) գրականագետները այս կամ այն ձևով ներկայացնում են արիստոտելյան ճարտասանության զարգացումը, որն աստիճանաբար փոխարկվեց գրականության ընդհանուր տեսության՝ տվյալ ժամանակին հատուկ նեղ իմաստով: Ընդ որում, Արիստոտելի հետևորդների մեջ նկատվում է մի հետաքրքրական ձգուում, այն է՝ գրական սեռերի և տեսակների անվանումները, տերմինները պահպանել հունական ձևով, որոշ դեպքերում՝ նույնությամբ կամ թեթևակիորեն հարմարեցված փոխառու լեզվին, իսկ մնացյալ տերմինները տալ թարգմանաբար:

XVIII դարում ձևավորվող կապիտալիստական հասարակության պայմաններում ուժեղացավ բուրժուազիայի պատմական դերը, և մշակութային կյանքում իշխող դարձավ ազգային սկզբունքը: Առաջին հերթին գրականության, հետևաբար և գրականագիտության առաջ ծառանում են ավելի շատ ընդհանուր գեղագիտական, քան միայն գրականագիտական բնույթի նոր հարցեր, ինչպես՝ «ճաշակի» հարցը որպես գեղագիտական շափանիշ:

Գեղագիտությունը սկսեց աստիճանաբար ասպարեզից դուրս մղել և կլանել ճարտասանությունը: Վերջինս մեռավ որպես առանձին գրական գիտություն, սակայն շմեռավ նրա հիմնական սկզբունքը՝ գրականության ընդհանուր տեսության անհրաժեշտությունը, անկախ նրա լեզվից, դարաշրջանից, համաշխարհային նշանակությունից: Նրա տերմինների զգալի մասը պահպանվեց մինչև մեր օրերը. ի դեպ, նշենք, որ հենց այդ տերմիններն են, որ այժմ վեճ շնոր առաջացնում, համեստյան դեպս ո՛չ այնպիսի կրքու վեճեր, որպիսիք ծավալվում են հետագա դարաշրջաններում ստեղծված բազմաթիվ տերմինների շուրջը:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբին ավելի հաճախ է խոսվում ոճաբանության հարցերի մասին, այն դիտվում է որպես լեզվաբանական-գրականագիտական գիտության առանձին ճյուղ:

Զգտում է նկատվում ոճաբանության դարձվածքներն ու տերմինաբանությունը համարել փիլիսոփայական-գեղագիտական, ինչպես նաև ճարտասանական տերմինաբանության համարդությունը: Ճարտասանությունը հին գիտություն է. ինչպես հայտնի է, նրա տերմիններն էլ հու-

նա-լատինական են, ուստի վերջիններս ավելի կայում են և փոփոխության քիչ են ենթարկվում: Դրան հակառակ՝ ոճաբանությունը, որպես ավելի նոր ժամանակների գիտակարգ, զարգացման մեջ է և բնականաբար ավելի շարժում է, ուստի այդ բնագավառի տերմինները նույնպես ավելի կենսունակ են ու մեծ մասամբ կերտվում են մայրենի լեզվի ընձեռած բառակաղմական միջոցներով:

\* \* \*

Վերջին տասնամյակների ընթացքում գրականագիտությունն ապրում է իր զարգացման մի նոր փուլ, առաջացել և առաջանում են նոր բնագավառներ (ինչպես՝ կինոյի և հեռուստատեսության մասին գրականությունը):

Հանդես եկող նոր երևույթները կյանքի են կոչում նոր պատկերացումներ ու հասկացություններ, որոնք, իրենց հերթին, պահանջ են ներկայացնում նոր բառային դրսեւորումների՝ տերմինների: Դրականագիտական իրակությունների մասին անցյալի գիտելիքների խորացումը և նրանց նոր իմաստավորումը երբեմն անհամաձայնություն են առաջացնում հնում գոյություն ունեցող հասկացությունների համակարգի հետ:

Ավանդաբար գործածվում են բազմաթիվ տերմիններ՝ հաճախ ստանալով այլ իմաստ, ուստի առաջանում են տվյալ տերմինների բազմիմաստություն և զուգահեռ ձևեր:

Ժամանակակից հայ գրաքննադատական գրականության մեջ առատորեն գործածվում են մի ժամանակ հնացած համարվող գրականագիտական տերմիններ, որոնք կիրառությունից աստիճանաբար դուրս են մղում իրենց օտար համարժեքները, ինչպես՝ բնարական (լիրիկական), կատակերգություն (կոմեդիա), ողբերգություն (տրագեդիա) և այլն: Կամ՝ հակառակը, երևան են գալիս անհարկի, չհիմնավորված նորաբանություններ, նոր տերմիններ՝ ստեղծելով անորոշ վիճակ գրականագիտական տերմինաբանության մեջ, նաև անորոշություն որոշ գրականագիտական հասկացությունների ըմբռնման մեջ, որի հետևանքով առաջանում է շփոթություն համապատասխան տերմինների գործածության ժամանակ:

Արտասահմանյան որոշ բանասերներ առաջ են քաշում այն դրույթը, որի համաձայն ամեն մի գիտություն լոկ սահմանված տերմինաբանություն է: Այսպիսի պնդումը, իհարկե, ոմի ձևական իմաստ, սակայն կասկածից վեր է, որ լավ սահմանված տերմինների համակարգ անհրա-

Ժեշտ է յուրաքանչյուր գիտաճլուղի համար և, անշուշտ, նրա արդյունավետ զարգացման պայմաններից մեկն է:

Դիտության այս կամ այն բնագավառի տերմինակերտման աշխատանքն ընդհանուրի գործն է, որը պահանջում է, առաջին հերթին, փոխըմբռնում: Եթե ամեն մի հողմածագիր, ուսումնասիրող ինքնակամ և ազատորեն նոր իմաստներ ներմուծի ցանկացած տերմինի բովանդակության մեջ, անխուսափելիորեն կառաջանա տերմինի բազմիմաստություն, հետևաբար խառնաշփություն՝ նրա գործառության ոլորտում:

Գրականության պատմության, քննադատության և տեսության հարցերը շոշափող գրականության մեջ գործածվում են բազմաթիվ տերմիններ, որոնց պարզորոշ, հստակ բացատրությունը, սահմանումը չի ձևակերպված, ինչպես՝

Արձակ տերմինը, թվում է, թե շատ հասկանալի է, թե՛ գիտական և թե՛ գրական լեզվում ունի ճիշտ և որոշակի կիրառություն, սակայն բառարաններում բացատրվում է տարբեր կերպ և գիտական որոշակի սահմանում չունի: Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» արձակ բառի տաղաջափական, գրականագիտական իմաստը բացատրված է այսպես՝

Տաղաջափության պահանջներից ազատ, ոչ տաղաջափորեն գըրված: Հկո. ոտանավոր, տաղաջափական:

Ինչպես տեսնում ենք, բացատրված է արձակ տերմինի ածականական կիրառությունը: Իսկ «Գրականագիտական տերմինների համառոտ բառարանում» բացատրված է միայն գոյական իմաստը.

Արձակ, պրոզա—գեղարվեստական երկ, որ շարադրված է սովորական, ազատ կազմություն ունեցող, և ոչ թե շափական, շափածո խոսքով:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» թեև կրկնվում է Ս. Մալխասյանցի բացատրությունը, բայց ավելացված է մի նոր, հավաքական իմաստ:

Հ. ա., գ. Տաղաջափական պահանջներից ազատ, ոչ-շափածո (գրվածք): Յ. գ. Ոչ-շափածո գրականություն, արձակագրություն:

Արձակագրություն տերմինը բացակայում է Ս. Մալխասյանցի և հիշված գրականագիտական բառարաններում, իսկ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» կրկնվում է արձակ տերմինի երկրորդ նշանակության բացատրությունը, այն է՝

Արձակ, ոչ-շափածո գրականություն:

Միայն էդ. Զրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանում» է, որ տրված է ընդարձակ, գրականագիտական բացատրություն՝ «գրական-գեղարվեստական ստեղծագործության կառուցման երկու հիմնական ձևերից (արձակ և շափածո) մեկը։ Արձակի մեջ բացակայում են շափածոյի ոիթմական միավորները (ոտք, անդամ, բանատող, տոն), շարադրանքը զարգանում է ազատ, բնական կարգով։

Բանաստեղծություն տերմինը բացակայում է գրականագիտական համառոտ բառարանում, իսկ Ս. Մալխասյանցի բառարանում բացատրված է.

1. Ստեղծագործություն խոսքի միջոցով, գեղարվեստորեն՝ պատկերավոր կերպով միտքը արտահայտելու արվեստ։ 2. Գրականության ընդարձակ ճյուղ, որ գեղարվեստական կերպով պատկերացնում է կյանքը, արտահայտում է մարդկային հոգու գաղափարական ձգումները։ 3. Տաղաշափական գրվածք։ Հկու. Արձակ։

Այս վերջին իմաստը Ս. Մալխասյանցը համարում է «Անձիշտ՝ բայց հաճախված գործածություն»։

Բանաստեղծություն տերմինը ավելի ամփոփ և սեղմ է բացատրված ԺՀՀԲ-ում։

1. Զափածո գեղարվեստական երկ։ 2. Գեղարվեստական շափածո գրվածքների ամբողջությունը։

Մակայն այս բառարանում անտեսված է մի այլ, գուցե ոչ շատ գործածական իմաստ, այն չ՝ «բանաստեղծելու» իմաստը, օր. «Բանաստեղծությունը նրա տարերքն է»։

Նման ոչ որոշակի, թերի, միակողմանի բացատրություններ են տըրված տարբեր բառարաններում նաև հետեւյալ տերմիններին. գրող, հեղինակ, մատենագիր, դյուցազներգություն, դյուցազներգ, էպոպեա, պատմվածք, պոեզիա, վեպ, վեպիկ, վիպակ, վիպերգություն, վիպասանություն և այլն։

Նույնպիսի երեսութ նկատվում է ոչ միայն հայ գրականագիտական տերմինների, այլև ոռւսերեն տերմինաբանության մեջ։ Այդ հարցը բազմիցս արծարծվել է գրական-տեսական մամուլում և բանավեճերի ընթացքում։ Այստեղից բխում է հայերեն գրականագիտական տերմինների հավաքման, հետազոտման և տերմինարանի հրատարակության խընդիրը։

Դրականությունը, գրական իրակություններն ու տեսակները հայքանասիրության մեջ վաղուց են դարձել հետաքրքրության և ուսումնասիրության առարկա:

Դրերի գյուտից հետո ստեղծվեցին թարգմանական ու ինքնուրուցնազմաթիվ արժեքավոր աշխատություններ՝ նվիրված կրոնի, փիլիսոփայության, տրամաբանության, դավանաբանական տարրեր խնդիրների և գիտության այլ ճյուղերին վերաբերող հարցերի քննությանը:

Ինչպես հայտնի է, գեռ հուները ամենից առաջ ու խոր զբաղվեցին գրականության ու նրա տեսության հարցերով: Սակայն նրանց երկերում գրականության իրակություններն ու համապատասխան տերմինները ուսումնասիրվում էին քերականության, ճարտասանության հարցերը քննելիս:

Դրականությունը (մատենագրությունը) ընդգրկում էր գրավոր արտահայտված ամեն ինչ՝ փիլիսոփայության, քերականության, կրոնի, պատմագրության, ճարտասանության խնդիրները ներկայացնող ու քննող աշխատությունները, թղթերը: Ուստի գրականագիտական հայերեն առաջին տերմինները հանդիս են գալիս նաև՝ ճարտասանական և քերականական թարգմանական ու ինքնուրուցնա երկերի մեջ:

ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅ  
ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վ դարում Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտներն սկսեցին հունարենից թարգմանել քերականության, ճարտասանության, փիլիսոփայության և արվեստի վերաբերյալ բազմաթիվ երկեր, դասագրքեր և մեկնություններ:

Թարգմանական աշխատանքին զուգընթաց, գրվեցին նաև ինքնուրուցնա երկեր և մեկնություններ, որոնց հեղինակները ստեղծեցին ու մշակեցին գիտության լեզու, համապատասխան գիտաճյուղերի տերմինաբանություն:

Գիտելիքների հետագա զարգացմանը նպաստող կարևոր ազդակներ էին դպրոցական ուսուցումը, ճարտասանական արվեստի մշակումը, գրականության և բանասիրության առօրյա կարիքների բավարարումը:

Նման նպատակ էր հետապնդում «Գիրք Պիտոյից»-ը: Ուստի հայերեն առաջին գրականագիտական տերմինները գրանցված են մեր մշակութի մի քանի տարբեր բնագավառների հիմնաքարը դնող մեծ պատմահոր կողմից:

Հայերեն առաջին գրքերից է «Գիրք Պիտոյից»-ը: Հեղինակը իր աշակերտին ճարտասանական ուսումը ավանդելուց հետո, նրան վարժեցնելու նպատակով, հարկ է համարում օրինակներ կազմել և ավելացնել հունարեն բնագրում եղածին, իսկ գրքի վերնագիրը հունականի նմանությամբ դնել «Պետք» կամ «Պիտոյից»:

Գիրքը բաղկացած է տասը ճառից կամ գրքից, որոնց վերնագրերն իսկ հետաքրքրություն են ներկայացնում քննվող հարցի տեսակեափից (պեսք, խրատ, եղծումն, հասարակ տեղի, ներողյան, պարսավ, բաղդատուրյուն, բարանուրյուն, արտասանուրյուն և գրուրյուն): Այս հասկացություններն ու գրականագիտական իրակությունները քննության առարկա են դարձել միայն ճարտասանության տեսանկյունից, որպես ճարտասանական ձևեր: Հեղինակը նոր օրինակներ է բերում շրչապատող իրականությունից և բացատրում աշակերտին, սակայն այդ օրինակներն իրենց ոճով ու գրելածեով շատ են տարրերվում զույն և լատին մատենագիրների ճարտասանական կանոններից: Գրքի մասերի վերնագրերն իսկ թվարկումն են այն տերմինների, որոնք մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ վերաբերում են նաև գրականագիտությանը:

Այսպիսով՝ հայ դպրության առաջին իսկ երկերում գործածված են գրականագիտական մի շարք տերմիններ: Փորձ է արվել սահմանելու ներքող, համեմատուրյուն, բարանուրյուն և այլ հասկացություններ:

Պիտոյից գրքում թեև գրականագիտության տեսանկյունից չեն քննվում հիշված տերմինները, այնուամենայնիվ նա գրականագիտական տերմինների առաջին աղբյուրներից է, ուր գրանցված են մեզ հետաքրքրող բնագավառի հնուց ավանդված բազմաթիվ տերմիններ:

Գրականագիտական տերմինաբանության ստեղծմանն ու հարցուացմանը նպաստել են նաև քերականական երկերի թարգմանությունը և ձեռնարկների ստեղծումը: Ժամանակի քերականական աշխատությունները նույնպես մեծ արժեք են ներկայացնում տրամաբանության, փիլիսոփայության, արվեստի, գրականության և ընդհանրապես հայ հին մշակույթի պատմության համար:

Մեզ հասած առաջին ամբողջական քերականական աշխատությունը Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանությունն է, որի թարգմանչի և հետագայում՝ մեկնիշների կողմից ստեղծվեց ու մըշակվեց քերականական տերմինաբանությունը<sup>8</sup>, թեև մինչ այդ հայերը ունեին քերականական որոշ գիտելիքներ:

Մինչև Թրակացու Քերականության թարգմանությունը «քերականություն» հասկացության համար գործածվում էր դպրուրյուն բառը, հետագայում հունաբան հեղինակները այն փոխարինեցին քերականու-

թյուն բառով, իսկ դպիր, որ գործածվում էր նախապես «քերական»-ի իմաստով, հոնարան հեղինակների երկերում փոխարինվեց ֆերող բառով, որն ստացավ «քերական» և «բանաստեղծ» իմաստները:

Հնում ֆերականությունը շատ ավելի ընդարձակ բովանդակություն ուներ, այն ընդգրկում էր բուն քերականությունից բացի նաև բանամիրությունը և տաղաշափությունը:

Դպիրները՝ գրագետները ուսուցանում էին դպրություն՝ գրագիտություն: Աշակերտները գրել սովորում էին մոմած տախտակի վրա գրչի սուր ծայրով քերծելով-գրելով տառերը, որը յուրացնելուց հետո ջնջում էին: Այստեղից էլ ֆերել, ֆերական, ֆերականություն բառերը առնչվում են զիր, գրական, գրականություն բառերին: Գրականությունը նախապես նշանակել է գրավոր արտադրանք, գրվածքների՝ գրքերի ամբողջությունը:

Հայ հին քերականները, հետևելով հույների օրինակին, ֆերականություն բառը ստուգաբաննել են «գրականություն»՝ զիր բառը բխեցնելով ֆերել բառից, որից և ծագում է ֆերական և ֆերող (քերդող) բառերի գործածությունը մեկը մյուսի փոխարեն:

Մինչև Դիոնիսիոս թրակացու «Արվեստ քերականության» թարգմանությունը, «քերական» նշանակությամբ գործածվել են դպիր և գրամափիռս բառերը, իսկ «քերականություն» իմաստով՝ դպրություն:

Թրակացու քերականությունը բաղկացած է բազմաթիվ գլուխներից ու հատվածներից, որոնցից գրականագիտության համար հետաքրքրական են «Յաղագ» վերծանութեան», «Յաղագ» հագներգութեան» և «Յաղագ» ոտից» հատվածները:

Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ հանդիպում են հոնարեն համապատասխան գրականագիտական տերմինների հետևյալ պատճենումները. շարագրող (արձակագիր, մատենագիր, վիպագիր), շարագրած (շարագրություն, գրվածք, գիրք, պատմագրություն, մատենագրություն), շարագիր (նշանագիր, տառ), ենթադատություն (խոռքի իմաստը արտաքին ձևի հետ բաղդատելը), ողբերգություն (եղերերություն), կատակերգություն (ուրախ և ծիծաղելի բովանդակությամբ թատերագրական ստեղծագործություն), դամբանական (տխուր, թախծալի քնարական բանաստեղծություն), տաղ (բազմաթիվ իմաստներով՝ երգող պատմվածք, ոտանավոր), տող (գեղարվեստական ստեղծագործության, ոտանավորի), ֆերական ֆերդություն, ֆերություն, ֆերողական (խանդաղատանքով, գուրգուրանքով լի, գթալի, թախծալի խոսքի, երգի մասին), հագներգություն (քերթված, տաղ, վեպ), հազներգող (վիպերգական բանաստեղծություններ քերթող երաժիշտ կամ ասմունքող):

Թրակացու երկը քանի որ հունարենի քերականություն էր, և այն-  
տեղ խոսվում էր հունարենին վերաբերող քերականական, լեզվական  
հարցերի մասին, ուստի որոշ իմաստով դժվարհասկանալի, երբեմն և  
անմատչելի էր հայ աշակերտների համար: Այդ իսկ պատճառով թարգ-  
մանիշը և հետագա դարերում ապրած, այսպես կոչված, մեկնիշները  
(Դավիթ Փիլիսոփա, Անանուն մեկնիշ, Ստեփաննոս Սյունեցի, Գրիգոր  
Մագիստրոս, Համամ Արևելցի) ջանում են հունական բնագրի թարգմա-  
նության իրենց մեկնությունների մեջ բացատրել այն իրակությունները,  
որոնք չեն սահմանված հույն հեղինակի կողմից և ավելի հասկանալի՝  
դարձնելու համար բերում են օրինակներ ու կապում հայերենի հետ:

Մեկնիշներից առաջինը՝ Դավիթը, հունարեն էպոս բառը թարգմա-  
նել է տաղ և տվել է սահմանումը: Վերջինս համընկնում է հույն հեղի-  
նակների սահմանմանը, որոնք գրական սեռերը մեկնաբանելիս հիմնը-  
վում էին Դիոնիսիսի վրա: Դավիթի սահմանումը կրկնում են հետագա  
հայ մեկնիշները՝ հավելումներով կամ լրացուցիչ բացատրություննե-  
րով և օրինակներով:

Հոմերյան էպոսը երգել և տարածել են «Հուափսոդները», որոնց եր-  
գած երգերը կոչվում էին «Հուափսոդիա», որ հունարեն բառացի նշա-  
նակում էր «գավազաներգություն», իսկ Դավիթը հայերեն թարգմանու-  
թյունը հարմարեցրել է հունարենի բովանդակությանը և համապատաս-  
խանարար թարգմանել հազներգություն և հազմերգող:

Դավիթը խոսում է նաև «քերթողական արվեստի» մասին: Իսկ Մով-  
սես Քերթողը ավելին՝ տարրերում է միմյանցից ենրուրյուն, ենրողու-  
րյուն և շարագրուրյուն իմաստները: Քերթուրյունը վերաբերում էր  
հատկապես շափածո երկերին՝ անկախ նրանց բովանդակությունից (դի-  
ցարանական թե պատմական): Վերջինները դիտվում էին որպես սեռա-  
յին առանձնահատկություններ և նրանց տրվում էր առանձին անվանում:  
Նարագրուրյունը վերաբերում էր արձակ երկերին, առավելապես Աստ-  
վածաշնչին, իսկ ենրողուրյունը ուներ ավելի ընդարձակ բովանդակու-  
թյուն և համանիշ է ենրականությանը, որը պետք է զբաղվի շափածո և  
արձակ երկերի ուսումնասիրությամբ, ուրեմն՝ քերթությունն ու շարա-  
գրությունը քերթողության ուսումնասիրության առարկան են:

Հստ Մովսես Քերթողի՝ ենրող նշանակում է նա, ով գիտե խոսքի  
մասերը, դեմքերը և լեզուն: Ուրեմն, նախ նշանակել է այսօրվա իմաս-  
տով «քերական», իսկ «բանաստեղծ» նշանակությամբ համապատաս-  
խանում է հունարեն պոետան բառը:

Թրակացու քերականության մեջ հիշվում է «զքնարական քերդու-  
թյուն ներդաշնակապես», ուր ենարական տերմինը հունարենի բառացի  
թարգմանությունն է, իսկ արտահայտությունն ամբողջությամբ՝ գուսա-

նական երգերն է ակնարկում։ Օրինակ՝ Սահմաննոս Սյունեցին «քնարական քերթության» տակ հասկանում էր գուսանական երգերը։

Երգիլ բարի «բանաստեղծ» իմաստը գալիս է հին ժամանակներից, որովհետև ինչպես հույների, այնպես էլ Հայերիս մեջ սկզբնապես երգն ու երաժշտությունը անանջատ են հանդես եկել։ Երգիչը միաժամանակ ստեղծագործող, բանաստեղծ էր։ Սակայն, ըստ Դավթի, ֆնարական բանաստեղծությունը կամ եերբուրյունը կազմում էր փիլիսոփայության մասը, որի բաղկացուցիլ մասերի մեջ դասվում էին («Գիրք սահմանաց») թվաբանությունը, երկրաշափությունը և աստղաբաշխությունը, որոնց ազգակից գիտակարգ էր համարվում երաժշտությունը, քանի որ դրանց հիմքում ընկած էր բանակը։

Ըստ Ստեփաննոս Սյունեցու՝ քերականությունը միայն ուղղագրության և ուղղախոսության ուսուցման միջոց չէ, այլև գրական ստեղծագործական աշխատանքի անհրաժեշտ նախապայման։ Գրականությունն ու քերականությունը գտնվում են փոխադարձ կապի, փոխազդեցության մեջ։ Քերականության մեջ կանոնների բացատրությունը կատարվում է գրական լավագույն երկերի հիման վրա, իսկ քերականությունը գրողին, ստեղծագործողին սովորեցնում է լավ, անսխալ գրել։

Սյունեցու կողմից գրականություն բարը ստանում է իմաստային շատ լայն ընդգրկում՝ մոտենալով ֆիլոլոգիա (բանասիրություն) իմաստին, որովհետև գրականությունը ոչ միայն գրական բոլոր երկերի ամբողջությունն է, այլև դրանց իմացումն ու քննությունը, իսկ քերականության իմաստը նեղանում է, այն գիտակցվում է որպես լեզվի ուսումնասիրություն, քանի որ Թրակացու աշխատության քերականական հարցերը քննող բաժինները Սյունեցին համարում է գրականության (բանասիրության) բաժիններ։

«Զրուցագրություն ըստ ներգոյս քերդողական եղանակս» բաժնում Սյունեցին խոսում է գրական տեսակների մասին։ Նա կարևոր է համարում ոչ միայն «եղյալ»՝ իրական, այլև «ոչ եղյալ»՝ անհրական պատմությունները և «ըստ պիտակության, հագներգության և փոխաբերության» տարրերում առասպելների երեք տեսակ։ Խոսվում է ողբերգություն, կատակերգություն, առաջ, ֆնարական եերբուրյուն, խանդաղատական, դամբանական, եկեղեցական և այլ տերմինների մասին, ուր հանդես է գալիս քնարերգության, ճարտասանության և քերականության փոխազդեցությունը։ Սյունեցին նշում է վերոհիշյալ գրական տեսակների գործադրումն ու տարրածվածությունը հայկական միջավայրում։ Գիտնականները, քերականները ավելի ուշ շրջանում նույնպես անդրադարձել են գրական տեսակների և գրականագիտական այլ հարցե-

րին, ինչպես՝ Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Երզնկացին, Առաքել Սյունեցին և այլք:

Գրիգոր Մագիստրոսը նույնպես պահպանում է քերականության լայն ըմբռնումը և քերականությունը նույնացնում է գրականության հետ, իսկ Հովհաննես Երզնկացին տարրերում է ոչ միայն ֆերուրյուն (բանաստեղծություն), ֆերողուրյուն (լեզվի ծանոթություն, խոսքի մասերի ուսմունք), շարագրուրյուն (արձակ) հասկացությունները, այլև քերականությունը՝ քերթողությունից: Քերականուրյունը քերթողության գործադրումը, կիրառումն է գրականության մեջ, այսպես է պատկերացնում Երզնկացին քերականության և գրականության կապը: Իսկ Առաքել Սյունեցին քերականությունը կապում է երաժշտության ու ճարտասանության հետ: Նա պարզաբանում է նաև այն հարցը, թե ինչու է քերականությունը նաև առասպելաբանություն կոչվում:

Տաղաշափության տերմինների ստեղծումն ու զարգացումը նույնպես կապվում է մեր դպրության հին շրջանի հետ, քերականական աշխատությունների, առանձնապես Գիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության և մեկնությունների հետ:

Թրակացու Քերականության թարգմանիչը ջանացել է քերականական գիտելիքների հետ զուգահեռաբար հայ ընթերցողին ծանոթացնել հունական դասական տաղաշափության տարրերին ու արվեստին (հավելվածի «Յաղագս ոտից» հատվածում): Այս հատվածի թարգմանության ընթացքում նա թարգմանել ու կերտել է հայերեն տաղաշափական տերմիններ՝ դրանով հիմք դրել նաև հայերեն տաղաշափության տերմինարանության:

Մեզ հետաքրքրող հատվածը վերնագրված է «Յաղագս ոտից», որովհետև հունական տաղաշափության համակարգի հիմքը վանկն է, որի թվով որոշվում էին տաղաշափության միավորները՝ «ոտքերը»:

Թրակացու Քերականության թարգմանչի՝ հունարենից թարգմանած, պատճենած կամ կերտած տաղաշափական տերմիններն են՝ ուսք (տաղաշափության միավոր), համրուց (երկվանկ ոտք, քառամանակ), ստեղն (եռավանկ ոտք, քառամանակ), մեծասար, մեծավերջ, անգայտ, վերջատանջ, բողաքոր, բողաշավտ, հավեղ, ավարեղ, ներգև, սոնե:

Թրակացու Քերականության թարգմանչի կերտած գրականագիտական և տաղաշափական բազմաթիվ տերմիններ գործածական են նաև ժամանակակից գրականագիտության մեջ:

Գրիգոր Մագիստրոսը նույնպես զբաղվել է տաղաշափության հարցերով: Նա համեմատության մեջ է դում հունական և արաբական տաղաշափությունը և հանգում այն եզրակացության, որ տաղաշափու-

Թյան օրինաշափությունը, որպես ներդաշնակության արտահայտության մի ուրույն ձև, իր մեջ պարունակում է մաթեմատիկական տարրեր:

Հին շրջանում հայ իրականության մեջ քնարական քերթությունը առավելապես եղել է կրոնական բովանդակությամբ (շարականներ), իսկ աշխարհիկ բանաստեղծությունը ներկայացնում էին գուսանական երգերը (հայրեններ): Մինչև XIX դարը հունարենից գեղարվեստական երկեր չէին թարգմանվում, միայն «Գիրք սահմանաց»-ի մեջ բերված են Թեոդինեսի բանաստեղծությունները: Հույն դասական հեղինակները մուտք են գործել հայ գրականության մեջ Փիլոն Երրայեցու, Նոննոսի երկերի թարգմանությունների միջոցով, ուր հիշվում են Հոմերոսը, Հեսիոդոսը, Էսքիլեսը, Եպիփափիդեսը, Պինդարոսը:

Այսպիսով, «Գիրք Պիտոյից»-ի հեղինակը և Թրակացու քերականության թարգմանիչն ու մեկնիշները քննեցին տարբեր ու բազմաթիվ հարցեր և ըստ անհրաժեշտության ստեղծեցին գրականագիտական առանձին բաժինների (գրական տեսակների, բանաստեղծական արվեստի, տաղաշափության) հայերեն տերմիններ, որոնցից շատերը պահպանվել և ավանդաբար անցնելով՝ գործածական են նաև այժմ: Այդ աշխատանքը արվում էր, գրականագիտությունը դիտելով քերականությունից շանջատված բնագավառ, որից բխում է ժամանակին գործածված տերմինների բազմիմաստությունը: Բանասիրական, այդ թվում և գրականագիտական տերմինաբանությունը որպես ինքնուրույն համակարգ առանձնացավ միայն քերականությունը բանասիրությունից անջատվելուց հետո:

Դրականագիտությունը, որպես առանձին և ինքնուրույն գիտաճյուղ, ուսումնասիրության նյութ է դառնում հատկապես XIX դարում:

#### ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԹԱՌԱՐԱՆՆԵՐ

Ոուս իրականության մեջ ավելի շատ փորձեր են արվել գրականագիտական տերմինների բառարան կազմելու ուղղությամբ: Դեռ XIX դարի առաջին քառորդում լույս է տեսել Ն. Ֆ. Օստոլոպովի «Словарь древней и новоой поэзии» բառարանը երեք հատորով:

Տասը տարի անց հրատարակվում է «Опыт литературного словаря» աշխատանքը, որի մեջ գրականագիտական տերմինների շարքում բացատրվում են նաև լեզվաբանական ու քերականական հասկացություններ: Սակայն այս բառարանը չի կարելի համեմատության մեջ դնել նախորդի հետ: Օստոլոպովի հիշված բառարանը ցայսօր չի կորցրել իր պատմական արժեքը:

1925 թ. լուս է ընծայվում «Словарь литературных терминов» բառարանը, որն արտացոլում էր այդ շրջանում գրականության ու գրականագիտության տերմինարանության ասպարեզում տիրող անկայունությունն ու խառնաշղփությունը: Բառահոդվածները կազմող հեղինակների տեսական տարածայնություններն իրենց կնիքն են դրել տերմինների բացատրությունների ու սահմանումների վրա:

1940 թ. հրատարակվեց Ա. Պ. Կվյատկովսկու «Словарь поэтических терминов» բառարանը: Լայն տարածում գտավ 1951 թ. հրատարակված Լ. Ի. Տիմոֆեևի և Ն. Վենդրովի «Краткий словарь литературоведческих терминов» բառարանը, որը վերահրատարակվեց 1952 թ.: Այս բառարանը թարգմանվել է շատ ժողովուրդների լեզուներով՝ ՍՍՀՄ-ում և արտասահմանում: Նման և նույն նպատակը հետապնդող բառարան 1961 թ. լուս է տեսել Կիևում (Վ. Մ. Խեմիկ և Օ. Ս. Պուչինեց, Կօրուկի լեզուարանում):

1974 թ. լուս տեսավ Լ. Ի. Տիմոֆեևի և Ս. Վ. Տուրակի կազմած ու խմբագրած «Словарь литературоведческих терминов» ընդարձակ բառարանը, որը պարունակում է 600-ից ավելի տերմին:

Այս բոլորին կարելի է ավելացնել սովետական առաջին «Литературная энциклопедия»-ում (1926—1939 թթ., հրատարակությունը չի ավարտվել), Մեծ և Փոքր հանրագիտարաններում, երեք հատորանոց հանրագիտական բառարանում (1953—1955 թթ.) և 9 հատորանոց «Краткая литературная энциклопедия»-ում (1962—1978 թթ.) տեղ գտած գրականագիտական իրակություններին վերաբերող բառահոդվածները:

Մեծ թվով գրականագիտական տերմինների տեղեկատուններ և բառարաններ են հրատարակվել արտասահմանում, հատկապես 50-ական թթ. և վերջին տարիներին: Այդ բազմաթիվ և տարրեր ծավալի տեղեկատուններն ու բառարանները, ներառյալ նաև ոռուերեն տերմինարանները, հետապնդում են ուսուցողական նպատակներ, որոշ դեպքերում տալով նույնիսկ տվյալ տերմինի ծագման և զարգացման պատմությունը, հաճախ նշում են տերմինի տարրեր գործածությունները, բայց ոչ տվյալ բնագավառի տերմինների կանոնավորման, միօրինակացման նպատակով<sup>10</sup>:

Հայ իրականության մեջ մինչ այդ գրականագիտական տերմինների բառարան հրատարակելու փորձ չի արվել, ուստի Լ. Տիմոֆեևի և Ն. Վենդրովի «Գրականագիտական տերմինների համառու բառարանի», հայերեն հրատարակությունը առաջին փորձն է. այն ոռուերեն երկրորդ հրատարակությունից որոշ հավելումներով և կրճատումներով փոխադրել են Հ. Հայրապետյանը և Գ. Պարիսը՝ միջնակարգ դպրոցի աշակերտների:

Համար որպես ձեռնարկ: Այս բառարանի հրատարակումը շատ օգտակար գործ էր, որովհետև դա իր տեսակի մեջ առաջինն է մեզանում: Հեղինակները, անշուշտ, շնորհակալ գործ նն կատարել, փոխադրելով այս բառարանը, որը նրանք ոչ միայն թարգմանել են, այլև մասամբ իրենց սեփական, հեղինակային խոսքն են ավելացրել: Բացի բառացանկում կատարած փոփոխություններից (ավելացրել են հայ մատենագրությանն ու գրականությանը առանձնահատուկ երևույթներ արտահայտող տերմիններ), նրանք փոփոխել, այսպես ասած, հայացրել են նաև բառահոդվածները, որը և պետք է համարել հայերեն բառարանի առավելություններից ամենահիմնականը՝ ուսւերեն բնագրի համեմատությամբ<sup>11</sup>:

Ավելի մեծ ուշադրության է արժանի 1972 թվականին լույս տեսած էդ. Զրբաշյանի և Հ. Մախչանյանի կազմած «Գրականագիտական բառարանը»՝ Զրբաշյանի ընդհանուր խմբագրությամբ:

Բառարանի շատ սեղմ բնութագրումը տրված է «Երկու խոսքում», ուր կարդում ենք. «Ներկա բառարանը պարունակում է գրականագիտության առավել կարևոր և հաճախակի հանդիպող տերմինների բացատրությունը և ներկայացնում է գրականության տեսության, իբրև գիտության, հիմնական հասկացությունների համակարգը»:

Բառարանն ընդգրկում է շուրջ հինգ հարյուր տերմին ու հասկացություն, որոնք բացատրված են հիմնականում հայ գրականության նյութի հիման վրա, և հասցեագրված է 8—10-րդ դասարանների աշակերտներին, սակայն լինելով այս կարգի առաջին ինքնուրույն գործը հայ իրականության մեջ, կարող է օգտակար լինել նաև ընթերցող լայն շրջաններին: Մի շարք բառահոդվածներ կրում են հանրագիտարանային բընույթ, գրական որոշ իրակություններ, հասկացություններ ունեն զուգահեռ անվանումներ: Ուստի հայ գրականագիտական տերմինների միօրինակացման նպատակով տողերին հեղինակը կազմել է տերմիննարանի նախագիծ վերը հիշված գրականագիտական բառարանի հիման վրա, ուր փորձ է արվում զուգահեռ տերմիններից ընտրել մեկը, տալ հասկացության սահմանումը և ուսւերեն համարժեքը:

1980 թ. լույս տեսավ էդ. Զրբաշյանի և Հ. Մախչանյանի կազմած «Գրականագիտական բառարանի» երկրորդ, լրացված և վերամշակված հրատարակությունը:

Հեղինակները բառարանի բառացանկը համալրել են շուրջ երեք տասնյակ բառահոդվածով՝ ժամանակակից գրականագիտության նորագույն հասկացություններով ու տերմիններով, օրինակ՝ Երկաշար, Էկրանավարում, Խսիս, շեշտանելում, պատմողի կերպար, ոփթմական արձակ, տիպարանական կապեր և ընդհանրություններ և այլն: Աշակերտների և ընդհանրապես ընթերցողի գրականագիտական գիտելիքները հարստաց-

նելու նպատակով ներմուծված են գրականության հին, ինչպես նաև հետագա շրջանին վերաբերող հասկացություններ և տերմիններ, որոնք դուրս էին մնացել բառարանի առաջին հրատարակությունից, ինչպես օրինակ՝ այնպոս, բարդ, բուժոնդ, գեորգիկներ, էխապրեսիոնիզմ, միննեգինգեր, պրասոլիա, ոոկոկ, ստրուկտորալիզմ, տետրալոգիա, ֆարլիո և այլն:

Սույն գրականագիտական բառարանի մեծ արժանիքն այն է, որ հեղինակները գրականագիտական հասկացությունները բացատրում են հիմնականում հայ գրականության նյութի հիման վրա, զուգահեռներ են անցկացնում բացատրվող գրական իրակության և հայ գրականության մեջ նրա դրսերման ձևերի միջև։ Ավելին՝ նրանք ջանացել են ներկայացնել հայ գրականությանը և ժողովրդական բանահյուսությանն առանձնահատուկ գրական ըմբռնումներն ու գրական տեսակների անվանումները։

«Գրականագիտական բառարանը» կոչված է լրացնելու միջնակարգ դպրոցում գոյություն ունեցող այն բացը, որ հնարավոր չէ դասավանդել գրականության տեսության հատուկ առարկա, ուստի պարունակելով գրականագիտական առավել կարևոր և հաճախակի հանդիպող տերմինների բացատրությունը, բառարանը ներկայացնում է գրականության տեսության, իրեւ գիտության, հիմնական հասկացությունների համակարգը և կարող է կատարել ձեռնարկի դեր։

Գրականագիտական տերմինաբանության կարգավորման և նորմավորման մեջ մեծ դեր ունի Հայկական սովետական հանրագիտարանը, որը հրատարակվում է 1974 թվից։ Հանրագիտարանը պետք է իր վերջնական խոսքն ասի գրականագիտական տերմինների ճշգրտման և նորմավորման, գոյություն ունեցող զուգաբանությունների վերացման գործում։

Հիշատակության արժանի է Ֆ. Հ. Խոլդաթյանի կազմած «Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատուն» (Երևան, 1976), որն «ամփոփում է հին և նոր ժամանակների հայ քերականագիտության, ճարտասանության, գրչության արվեստի, գրականագիտության մեջ գործածված այն բոլոր տերմինները, որոնք ոճաբանական բնույթ ունեն կամ առնչվում են դրան։»

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԱԿԶԲՈՒՄ

Տակավին անցյալ դարի երկրորդ քառորդում գրական ժանրերի, տաղաշափության և ոճագիտության բազմաթիվ հարցեր զբաղեցրել են հայ մտավորականներին։

Մխիթարյան վարդապետ էղուարդ Հյումյուզյանը աշակերտության պահանջները հոգալու, նրանց գրականագիտական գիտելիքներ հաղորդելու նպատակով, գրել է այս ասպարեզում առաջիններից հայ իրականության մեջ «Առձեռն բանաստեղծություն» ձեռնարկը<sup>12</sup>: Գրքում հարցու պատասխանի ձևով խոսվում է գրականագիտական հարցերի մասին. գրական իրակությունները բացատրվում են, ունեն հարուստ ցուցադրական նյութ հունական, եվրոպական և հայ գրականությունից: Վերջում տրված է անվանացանկ, որը փաստորեն գրականագիտական տերմինների ցանկ է (շուրջ 50 անվանում):

Դիրքը կազմված է ըստ դասերի. տրվում է հարցը, օրինակ՝ «Զի՞նչ է տաղաշափութիւն», ապա պատասխանը՝ «Բան բաղկացեալ շափմամբ ոտից կամ վանկից» (1):

Տաղաշափական, ոճագիտական, գեղագիտական և այլ իրակությունները ներկայացվում և ուսուցվում են ու լրիվ դասակարգված ձևով, թեև ներքին որոշ դասակարգում նկատվում է: Այսպես օրինակ՝ սկզբում բացատրվում են տաղաշափական տերմինները (ոտ, չափ, անդամ, շեշտ, հանգ, ամանակ, հարաշեշտ և նախաշեշտ բառեր և այլն):

Մի շարք ոճագիտական տերմիններ բացատրելուց հետո (բացադրձություն, բացականչություն, փոխաբերություն, նմանություն և այլն) խոսվում է վսեմի, վսեմության մասին, տրվում է գեղեցիկի սահմանումը, ապա վսեմի և գեղեցիկի տարրերությունը, բանաստեղծական (քերթողական) լեզվի և ճարտասանական լեզվի տարրերությունը և այլն:

Հաճախ հարցը փոխվում է խնդրանքի, օրինակ. «Տո՞ւ ինձ և օրինակս ինչ չափազանցութեան քերթողականս» և ապա պատասխանում է, օրինակներ է բերում, երբեմն էլ ձևակերպում կամ բացատրում. «Այն զոր քնարաւ կամ այլովք նուագարանօք մարթ է երգել. և կոչի սա տաղեկամ գանձ. և քառեակ ազգք են սորա» (91):

Դրական ժանրերից բացի, տարրերակված են նաև նրանց ենթատեսակները, օրինակ՝ տաղերի տեսակներից բարոյական և իմաստափական տաղեր, խնջույքի, հանդիսից տաղեր կամ երգեր և այլն:

Դյուցազնական վեպի պայմաններն է համարում «միությունը», այսինքն՝ սյուժեի միասնությունը, ապա «ամբողջությունը»: Ինչպես տեսնում ենք, խոսվում է նաև ստեղծագործության ներքին կառուցվածքի և նրա մասերի միասնության մասին: Գնահատելով գրողի արվեստը, հեղինակը զուգահեռներ է անցկացնում Հոմերոսի և Վիրագիլիոսի ստեղծագործությունների միջև, այսպիսով՝ դուրս գալով գրական ժանրերի տեսության քննության սահմաններից, Հյուրմյուզյանը աշակերտներին տեղեկություններ է տալիս հունահոռմեական և արևմտաեվրոպական անվանի հեղինակների մասին. հրապարակի վրա եղած կարծիքները վերա-

շարադրելով՝ նա հայտնում է իր կարծիքը, որը հաճախ չի համընկնում այլոց կարծիքներին։ Գաղափար է տրվում ժամանակի և տեղի միասնության մասին, ողբերգության մասերի՝ արարվածների, բովանդակության, գործող անձերի վերաբերյալ։ Սեղմ և դիպուկ բնորոշումները են տրվում առանձին ազգային գրականություններին, գրողներին։ շարադրված են ողբերգության և կատակերգության կանոնները, նշվում է, թե ո՞ր ժամանք ի՞նչ տաղաշափությամբ է գրվում և այլն։

Հետաքրքրական են հեղինակի բնորոշումները։ օրինակ՝ Քննարանությունը բնորոշում է այսպես։ «Դատել ինչ գրատրական ըստ կիրթախորժակաց, և ընտրել զհանգամանս կատարելութեանց նորա և թերութեանց» (189), իսկ «ախորժակը մտաց», այսինքն՝ ճաշակը ինչպես են կրթում հարցին պատասխանում է։ «մտադիր վերծանութեամբ քաջացքերթողաց, և խորազնին տեսութեամբ ընտիր օրինակաց» կրթում են «մտաց ախորժակը» (188), ապա թվում է պայմանները, հարցերը, պահանջները, որ քննադատը պետք է ներկայացնի քննարկվող քերթությանը, ըստ ժանրերի։

Փորձում է գրականության պատմության շրջանաբաժանում կատարել, տարրերակելով «հինք կամ նախնիք» և ժամանակակիցները «արդիք»։

Ամբողջ դասընթացը ամփոփված է 27 դասերի մեջ։ Շատ գնահատելի են հեղինակի ջանքերը հին և ելքոպական հեղինակների ստեղծագործություններից մեջբերվող հատվածները իր իսկ թարգմանությամբ տալու ուղղությամբ, քանի որ դրանց մի մասը անմատչելի էր ընթերցողին՝ հայերեն թարգմանության բացակայության պատճառով։

Հյուրմյուզյանը առաջիններից էր, որ ի մի բերեց գրականագիտական, հոետորական տերմինաբանությունը, որից սերվում են ոճագիտական բազմաթիվ տերմիններ և փորձեց սահմանել, բացատրել դրանք աշակերտներին մատչելի ձևով, սակայն, ցավոք սրտի, լեզվի՝ գրաբարի պատճառով ձեռնարկը մատչելի էր սահմանափակ թվով ընթերցողներին։

Գնահատելի է նույն հեղինակի «Առձեռն ճարտասանություն» ձեռնարկը<sup>13</sup>։ Այս գիրքը ևս հարց ու պատասխանի ձևով տեղեկություններ է տալիս ճարտասանության տարրերի (այլաբանություն, ավելացրություն, բաղդատություն, բացականչություն, բացադարձություն, դիմառնություն, խելամտություն, հակագրություն, մակածություն, հառաջաբանություն, նկարագրություն, նմանություն, շրջաբանություն, շափազանցություն, վերջաբան, փոխաբերություն, փոխառություն և այլն, շուրջ 100 տերմին) մասին։ Հասկանալի է, որ որոշ տերմիններ հանդիպում են նաև «Առձեռն բանաստեղծության» մեջ, 11 տերմին (այլաբանություն, անեծք, դիմառնություն, նկարագրություն, նմանություն, շրջ-

բանություն, շափազանցություն, փոխարերություն, փոխանունություն): Այն տերմինները, որոնք հանդիպում են երկու ձեռնարկներում, օրինակ՝ այլարանություն, որը հնուց դիտվել է որպես ճարտասանության տարր, «Առձեռն բանաստեղծություն» գրքում չի բացատրվում, հարց էլ չի տրվում, իսկ ճարտասանության գրքում հարց է տրվում և պատասխանում է. «Բան ի բազում փոխարերութեանց հիւեալ. որպէս Շնորհալոյ այլարաննելն զվախճան եղրօր իւրոյ Գրիգորի կաթողիկոսի օրինակաւ նաւարկութեան» (56) և բերում է մեջբերում-օրինակը, իսկ «Առձեռն բանաստեղծության» մեջ հարցի փոխարեն խնդրում է «Տուր ինձ օրինակս այլարանութեան քերթողականս», ապա պատասխանում է:

Բացատրվում են դիմանություն, անեծք, երգիծանություն, խելամտություն, նմանություն, շափազանցություն, փոխանունություն և այլ ոճագիտական իրակություններ: Օրինակ՝ «Զի՞նչ է դիմանություն» հարցին պատասխանում է. «Նոյնպէս բացակայ կամ վախճանեալ անձանց, և կամ անշունչ և անզգայ իրաց մարդկորէն խօսք» (76), իսկ «Առձեռն բանաստեղծության» մեջ՝ «իմաստունն փոխանակ ասելոյ՝ թէ հուրն ոչ ևս այրէր, ասէ. «Երբեմն ընտանենայր բոցն, զի մի այրիցէ» (75):

Երգիծանությունը «Դժնդակ հեգնութիւն. զոր օրինակ. Վահ որ քակէիր զտաճարն, և զերիս ատւրս շինէիր զնա. ապրեցո զքեզ, եթէ որդի ես Աստուծոյ՝ Էջ ի խաչէդ» (54), կամ՝ խելամտությունը «Ոչ ինչ ընդհատ ի փոխանունութենէ վարել զմասն փոխանակ բոլորի, զնիւթ փոխանակ իրին, զսեռ ընդ տեսակի, զեզական ընդ յոգնականի, և որսոցին սակի ձևք» («Առձեռն ճարտասանություն», 51—52):

Երբենք մի քանի համեմատություն երկու գրքերից.

Հ. Կարևո՞ր իցէ քերթողի նկարագրութիւն

Պ. Նկարագրութիւն ոչ միայն կարևոր է յոյժ քերթողի՝ յամենայն ազգս քերթութեանց խառնեալ, այլև ցոյց մեծ է հզօր երևակայութեան նորա և նովաւ հանճարք մեծամեծք զանազանին ի շափավորացն.

(«Առձեռն բանաստեղծություն», 62):

Հ. Զի՞նչ է նկարագրութիւն

—. Յալտ յանդիման առաջի աշաց կացուցանել զիրն ստորագրութեամբ.

Վասն որոյ պարտ է առաջի առնել զիրաքանչիւր մասունս իրին, զյարակից հանգամանը, զպատճառու՝ այլովքն հանդերձ. («Առձեռն ճարտասանություն», 79):

Այս ձևով բացատրվում, ուսուցվում են ոճագիտության բազմաթիվ տարրեր:

Թերենք մի քանի օրինակ ևս. «Հ. Զի՞նը է դերանունութիւն կամ շըրշարանութիւն»: —Փոխանակ անուան ուրուք ա՛յլ ինչ հասարակ անուն սեփականներ: Զոր օրինակ՝ փողն տարսոնեան, այսինքն՝ Պաւլոս» (Առձեռն ճարտասանություն, 58), իսկ «Առձեռն բանաստեղծության» մեջ. «Տո՛ւր ինձ օրինակս շրջարանութեան քերթողականս» Պ. Սաղմոսիրգում փոխանակ ասելոյ (Սղմ. 2է) թէ որդիք Եփրեմայ քաջ պատերազմողը փախեան ի պատերազմէ, ասէ. Որդիք Եփրեմի, լիածիգք և պնդածիգք, յաւուք պատերազմի կապարճս դարձուցին» («Առձեռն բանաստեղծություն», 55):

«Հ. Մեկնեա՛ ինձ զդոսա մի ըստ միշոցէ. և նախ թէ զի՞նը է փոխարեւութիւն.—Փոփոխումն նշանակութեան բառից յայլ ըստ նմանութեան կամ ըստ համեմատութեան: Զոր օրինակ Լիճ լուսոյ Կոչել զաշ» («Առձեռն ճարտասանություն», 48), իսկ «Առձեռն բանաստեղծությունում» «Տո՛ւր ինձ օրինակս փոխարեւութեան» «Պ. Վիրգիլ և Ովրատ փոխանակ ասելոյ յենով զորթ ի ժառս, փոխարեւութեամբ ասեն ամուսնաւորել կամ հարսնացանել զորթ ծառոց» (73): «Առձեռն բանաստեղծության» մեջ փոխարեւության վերաբերյալ առանձին հարց չկա, այլ՝ տեքստում օրինակների միշոցով բացատրվում է այսպես. «Եւ Ովրատիոս տժոյն Կոչէ զմահ, ի ձեւ փոխանումութեան տալով մահու զհանգամանս մեռելոյ կամ զդիքական. և ոչ անդ զկայ առեալ, յաւելու ի ձեւ դիմառնութեան քերթողարանել՝ զի նովին ոտամբ հարկանէ տժոյն մահ զարքումիս և զհիւղ. զոր ի ճարտասանական ճառս արուեստակութիւն համարելի է» (59): «Փոխանումութիւն է յորժամ պատճառք զնին փոխանակ գործոյ, կամ գործ փոխանակ պատճառի, կամ պարունակեալ փոխանակ պարունակելոյն, և կամ հակառակն նորին, կամ ժամանակն փոխանակ անցից, և կամ սոցին սակի փոխադրութիւնք» («Առձեռն ճարտասանություն», 50):

Նույն հեղինակը «Առձեռն դիցաբանութիւն կամ առասպելախառն վեպք զդից և զդիցաղանց» գրքում<sup>14</sup>, որը դիցաբանության դասագիրք է, նախորդների նման դասերի, հարց ու պատասխանի միշոցով շարադրում է հունական աստվածների մասին առասպելները, սակայն հայկական զուգահեռ անվանումների ու պաշտամունքների առկայության դեպքում է նաև հայկական անվանումը, ինչպես օրինակ՝ Անահիտ-Արտեմիս, Արամազդ տես՝ Դիոս, իսկ Աֆրոդիտեի մասին խոսելիս նշում է «Ավրորիս ըստ Յունաց, Վենուս ըստ լատինացւոց, և ըստ Հայումս Աստղիկ» (39—40) կամ՝ «Ո՞ էր Արտեմիս, Արտեմիս ըստ Յունաց, Տիանա ըստ լատինաց, և ըստ Հայումս Անահիտ» (31), «Բազումք եղեն Հերակլէսք քաջամարտիկք, որպէս և մերս Վահագն վասն մեծամեծ քաշութեանցն կոչի Հերակլէս» (75):

Այս գրքում մեզ հետաքրքրում է նաև «Զի՞նը են առասպելք» հարցի պատասխանը, որով հեղինակը տալիս է առասպելի բացատրությունը. «Կենդիք կամ յօդուածոյ վէպք զդից, որ և դիցաբանութիւն կոչի»:

«Հ. Ուստի՞ սկիզբն առին առասպելք.

Պ. Ցանցից երևելեաց՝ որ անցին յետ զրհեղեղին յառաջին դարս, ի ցրուել որդուց նոյի յալ և այլ կողմանս երկրի» (7):

Ամբողջ գիրքը լորու կարգ է, որի մեջ ամփոփված է 16 գլուխ:

Մեզ համար արժեքավորը և Հյուրմյուզյանի ծառայությունն այն է, որ նա առաջիններից էր, որը համախմբեց, մասամբ դասակարգեց մեզ հետաքրքրող բնագավառի տերմինները, որոնց ճնշող մեծամասնությունը կիրապում է ժամանակակից գրականագիտության մեջ:

Հյուրմյուզյանի դասագրքերը, ասվեց, որ գրված են գրաբարով և հրատարակվել են Վենետիկում, հետևաբար չէին կարող մատշելի լինել արևելահայ աշակերտության համար: Ուստի ժամանակը և ուսումնական գործը պահանջ էին ներկայացնում նման ձեռնարկներ ունենալու նաև արևելահայերեն: Եվ ահա անցյալ դարի վերջին, Թիֆլիսում, 1894 թվին լույս տեսավ Հ. Ճաղարքեզյանի «Բանահյուսության տեսություն» գիրքը, որը համակարգված մի ձեռնարկ է արվեստի, ոճագիտության, բանախոսության տեսության, գրականության տեսության առարկաների:

Այս հեղինակի ըմբռնմամբ՝ «Բանահյուսությունը անդրանիկ գեղարվեստն է. ժամանակով նա ամենից առաջ է երևան եկել» (7). «Սա յուդ մեջ ամփոփում է մյուս բոլոր գեղարվեստների միջոցները: Բանահյուսության զենքը՝ մարդկային խոսքը, միևնույն ժամանակ թե՛ ձայն է և թե՛ պատկեր» (9):

Բանահյուսություն ասելով հեղինակը նկատի ունի ամբողջ մատենագրությունը, որովհետև նա գրում է. «Բանահյուսության արդյունքները երկու մասի են բաժանվում՝ բանախոսական և բանասահեղական» (11):

Բանախոսականը իրական կյանքի ու դեպքերի մասին պատմող գրականությունն է (Խորենացի, Փարպեցի, Սրբանձտյան, Էմին, Պատկանյան և այլք). ինչպես տեսնում ենք, դեռևս պարզորոշ սահմանազատում չկա. պատմագրությունը, բանասիրությունը և բանագիտությունը դիտվում են որպես միևնույն բնույթի գիտություններ: Դրանք հակադրելով գեղարվեստական գրականությանը և բանաստեղծ-ստեղծագործողին, գրողին, քանի որ տակավին շեն տարբերակվում բանաստեղծն ու վիպասանը, գրում է. «Իրականությունից ուժին տպավորվելով, բանաստեղծն յուդ երևակայության ուժով ստեղծում է մի նոր աշխարհ՝ իդեալական աշխարհ»<sup>15</sup>, և բերում է Պոլյանի, Սոմդովյանի, Բաֆֆու, Գամառ-Քաթիպայի, Պարոնյանի անունները:

Բանահյուսությունը (գրականությունը) հեղինակի ըմբռնմամբ ամ-

փոփում է ժողովրդի «բոլոր բանավոր և գրավոր վաստակները» (14): Հեղինակը գիտակցաբար է գործածում բանանյուսուրյուն տերմինը, քանի որ «գրականություն բառը գաղափարը ամբողջովին չի արտահայտում» (14), որովհետև «Դա միայն գրավոր վաստակներն է ընդգրկում»:

Հեղինակը տարրոշում է բանահյուսության բաղկացուցիչ մասերը, այդ կապակցությամբ նա գրում է, որ բանահյուսության տեսությունը որոշում է լեզվի օրենքները, լեզուն որպես «խոսում գեղարվեստի զենք», որով զբաղվում է ոճի տեսությունը. «Բանախոսական վաստակների օրենքները» ուսումնասիրում է բանախոսության տեսությունը, բանաստեղծական վաստակների օրենքները վերաբերում են բանաստեղծության տեսությանը:

Անի տեսության բաժնում ոճը բացատրվում է այսպես. «Որևէ հեղինակի խոսքի բնավորությունը, լեզվի առանձնահատկությունները, արտահայտության այն եղանակը, որ միայն նրան՝ այդ հեղինակին է հատուկ, կոչվում է ոճ» (16), և ապա տարրերակում է լեզուն ոճից, «կեղունով այն նյութն է ներկայացնում, որից հեղինակն յուր ոճն է կազմում» (16), լեզուն ընդհանուր է, իսկ ոճը՝ անհատական, «յուրահատուկ է մի հեղինակի»: Ապա ոճի մեջ տեսնում է երկու կողմ՝ տրամաբանական և գեղարվեստական: «Տրամաբանական կողմը խոսքի իմաստն է, գեղարվեստականը՝ ձևը» (17):

Խոսքի պարզությունը խաթարվում է հնարանության, նորաբանության, օտարաբանության, բարբառային, ժողովրդախոսակցական, տեխնիկական կամ մասնագիտական բառերի անտեղի գործածությունից:

Հեղինակը փորձում է բացատրել, սահմանել հետեւյալ ոճագիտական հասկացությունները՝ ենարանություն, եռորաբանություն, օտարաբանություն, նունարանություն, լատինաբանություն, ժողովրդական բառեր, տեխնիկական կամ մասնագիտական բառեր: Խոսում է ոճի առանձնահատկությունների, տեսակների, նախապայմանների մասին, օրինակ. «Ժողովրդական գրքերը աշքի են ընկնում ոճի պարզությամբ, իսկ մասնագիտական աշխատությունները, որոնք նշանակվում են բարձր դրացների և պատրաստված ընթերցողների համար՝ ոճի ճշտությամբ» (24): Գեղարվեստական տեսակետից ոճից պահանջվում է երաժշտականություն և պատկերավորություն: Որպես երաժշտականության նմուշ բերված են Մ. Նալբանդյանից և Հ. Հովհաննիսյանից քառատողեղությանը:

Տարբերում է սահման ոճ, անհարթ, անտաշ ոճ, իսկ խոսքի կազմության տեսակետից ոճը լինում է՝ հակիրճ, պարբերական և խոսակցական: Պարբերական ոճը ավելի գործածական է վարդապետական գոր-

վածների մեջ» (29), իսկ «հակիրճի և պարբերականի մեջտեղն է բռնում խոսակցական ոճը» (29):

Ոճի տեսության բաժնի մեջ է մտնում տաղաշափությունը: «Բառերի կապակցությունից առաջանում է խոսքի երկու տեսակը՝ արձակ և շափածո կամ ոտանավոր» (29—30): Այս առիթով սահմանում է «խոսքը, որի մասերը շափով և թվով կշռված են, կոչվում է ոտանավոր»: «Ոտանավոր խոսք կազմելու արվեստը կոչվում է տաղաշափություն», իսկ «խոսքը, որի մասերը շափերի կամ թվերի տակ չէ, արձակ խոսք է կոչվում», այնուհետև տարրորշում է երեք տեսակ տաղաշափություն՝ շափական, շեշտական կամ ձայնական և վանկական, ապա բացատրվում են յուրաքանչյուրն առանձին և բերվում են համապատասխան ցուցադրական օրինակներ հայ բանաստեղծներից:

Այս բաժնում բնականաբար խոսվում է տաղաշափական տերմինների մասին (հանգ, ոտք, հատած, վանկ), ոտքերի տեսակների (մեծասար, մեծավերջ, ստեղն, քողաղոտ և վերջատանջ), ոտանավորի տեսակների (հանգավոր կամ հանգական, անհանգ ոտանավոր), հանգի տեսակների (տկար, շափավոր, ճոխ, անանջատ, հյուսյալ, ընդհատ, գրկախառն, տարածամ հանգեր):

Ոճի պատկերավորության համար «հարկավոր են մակդիրներ, փոխակերպություններ և շրջաբանություններ» (45), — գրում է հեղինակը: Մակդիրների «նպատակն է» նպաստել խոսքի պատկերավորությանը: Այնուհետև խոսվում է փոխակերպություն, փոխարերություն, այլաբանություն, փոխանունություն, խելամտություն, շափազանցություն, հեղնություն տերմինների մասին որպես ոճագիտությանը վերաբերող հասկացությունների անվանում, մինչդեռ, ինչպես տեսանք, Հյուրմյուղյանը դեռևս ճարտասանության մեջ էր քննում:

Շրջաբանությունը այնպիսի արտահայտություն է, որն արտահայտում է հեղինակի զգացմոնքները, շեղվում խոսքի սովորական տրամաբանական կարգից: Շրջաբանության տեսակներն են՝ դիմառնությունը, բացադրածությունը, կրկնությունը, լուսթյունը, հակադրությունը:

Բանախոսության տեսություն բաժնում խոսվում է շարադրության (այսօրվա ըմբռնմամբ՝ խոսքի) մասին: «Մի որևէ առարկայի մասին մտքերի կարգավոր արտահայտությունը, լինի դա գրավոր, թե բանավոր, կոշվում է շարադրություն» (54), որը կազմված է ներքին կողմից՝ բովանդակությունից, արտաքին կողմից՝ մտքերի արտահայտության եղանակից (55): Երկի թեման անվանում է բնաբան, օրինակ՝ «Հեղինակի որոշած հայեցողության կետը կամ այն դաղափարը, որ շարադրության հիմք է ընդունված, բնաբան (թեմա) է կոչվում» (54):

Ճաղարբեգյանը ավելի պարզ ու մատշելի ձևով է բացատրում գրականագիտական իրակությունները, օրինակ՝ «Տարեգրությունը պատմության նախնական ձևն է» (68), «Պատմական հիշատակարան կոչվում է այն նշանավոր անցքերի կարգավոր պատումը, որոնց ինքը հեղինակը ականատես է եղել» (69), «Այն վաստակները, որոնց մեջ բացատրվում են նշանավոր մարդու ամբողջ կյանքը (ծննդից մինչև մահ) կազմող անցքերը, կոչվում են կենսագրություն» (72) և այլն:

Որոշ խառնաշփոթություն է նկատվում, երբ գրականագիտական իրողություններից բացի քննության առարկա են դառնում նաև այլ բնագավառների վերաբերող հարցեր։ Օրինակ՝ խոսվում է գիտության մասին, որը շատ ավելի ընդարձակ իմաստային բովանդակություն ունի, և այն բացատրվում է այսպես. «Սիստեմատիկական բացատրությունն այն ամեն ճշգրտությունների կամ օրենքների, որոնք ընդգրկում են միատեսակ առարկաների կամ երևույթների ամբողջ դասը, ամբողջ ցեղը, կոչվում է գիտություն», հետո անդրադառնում է գիտության մասնակութերին ու նրանց ուսումնասիրության ոլորտներին։

Այսքանից հետո միայն տրվում է «Բանաստեղծության տեսություն» բաժինը, որը բոնում է ամբողջ դասընթացի կեսը։

«Բանաստեղծական բոլոր վաստակները երեք կարգի են բաժանվում՝ վիպական, բնարական և դրամատիկական» (90): Վիպականի դեպքում «անկախ հեղինակի անձնական զգացումից—մենք ծանոթանում ենք արտաքին աշխարհի երևույթների և առարկաների հետ։ Արտաքին աշխարհը հեղինակը բացատրում է մի անցքի միջոցով. իսկ բանաստեղծության մեջ պատկերացումն այն ամենի, որոնք հեղինակի մեջը չեն, այլ դուրս՝ կոչվում է վիպական» (90):

Ճաղարբեգյանը նկատի շումի սեռը, ինչպես հասկանում ենք այսօր: Քանի որ նա շարունակում է՝ «Քնարական բանաստեղծությունը բանաստեղծի ներքին աշխարհը, հոգեկան տրամադրություններն է երևան հանում» (91), իսկ «եթե բանաստեղծական վաստակի մեջ գործողություններով հանդես է գալիս մարդու կոիկն այն խոշընդուռների դեմ, որոնք նրա ձգտումների առաջն են դուրս գալիս, կոչվում է դրամատիկական» (91): Վերջինիս բնորոշ գիծը «կոփվել» է, այսինքն՝ հակադիրութերի պայքարը։

Սակայն միևնույն ստեղծագործության մեջ «կարող են լինել քնարական, վիպական և դրամատիկական տարրեր» (91):

Ապա ուսումնասիրության նյութ են ծառայում քնարական բանաստեղծության տեսակները, դրանք են՝ ներբող, երգ, եղերերգ և երգիծաբանություն։

Ներբողն ունի իր ենթատեսակները, կախված այն բանից, թե

ո՞ւմ են գովերգում։ Օրինակ՝ «եթի երգի մեջ արտահայտվում է անսահման հարգանք, խոնարհամտության և նվաստության կրոնական շերմ զգացմունք, կոչվում էր օրիներգություն» (97), իսկ այն երգը, որի մեջ «արտահայտվում էր խնդրություն՝ հետևանք մի նշանավոր հաղթության» կոչվում էր հաղթական երգ, կամ՝ «երբ երգի մեջ զգացմունքի հետ արտահայտվում էր և բարոյական-խրատական միտք, նա կոչվում էր փիլիսոփայական կամ հորացիոսյան երգ» (97) և այլն: «Մի որևէ նշանավոր անձնավորության մասին գրված ներբողը ուղերձ է ասվում» (98):

Խոսվում է երգի տեսակների մասին, սակայն անվանումները դեռևս կայում չեն (պանդստության, սիրային և այլ երգեր), ժողովրդական երգերի նմանությամբ (կարճ) գրվել են «գեղարվեստական երգերը», որոնք հայտնի են անակրեոնյան անունով:

Եղեցերգը վշտի զգացմունք էր արտահայտում, իսկ այն, որ «հայրենասիրական զգացմունքներ էր գրգոռում», դյուցազնական էր կոչվում (102):

Վիպական բանաստեղծության գլխավոր տեսակներն են՝ առասպել, հեքիափ, վիպերգ, առակ, նովվերգ, պարերգ, բերքված, վիպակ և վեպ կամ վիպասանություն:

Հեքիափը առասպելի փոփոխված ձևն է, առասպելի հերոս աստվածները այստեղ հասարակ մահկանացումներ են, սակայն դրանցում գերբնականը, բնության աստվածացման երևոյթը պահպանվում է:

Քերքված կամ դասական վեպ է կոչում «բանաստեղծական այն վաստակը, որի նյութը ազգային կյանքի մեջ պատահած նշանավոր մի դեպք է, որտեղ երևում է ամբողջ ժողովրդի մասնակցությունը» (118): Օրինակ՝ «Ծիլիականը» և «Ողիսականը», հետագայում դրանց նմանությամբ հռոմեական բանաստեղծ Վիրդիլիոսը գրեց «Հնեականը» (121):

Որոշ ձեսկերպումներ լրիվ չեն, սպառիչ չեն, օրինակ՝ վեպը բացատրվում է հետեւյալ կերպ. «Վիպական այն վաստակը, որտեղ ներկայանում է մարդկային որևէ կիրք յուր զարգացման ամբողջ ընթացքում» (125), իսկ վիպակի մեջ՝ «կիրքը հանդես է գալիս յուր զարգացման մի որոշ շրջանում» (125): Վեպի մեջ հերոսը զարգացում է ապրում, փոխվում է, իսկ վիպակի մեջ մնում է նույնը. սրանք իհարկե պարզունակ բացատրություններ են: Սերենցի «Երկունք թ դարուն» համարում է վիպակ, որովհետև նրա հերոսներ Հովնանն ու Գուգենը վիպակի վերջում նույն մարդիկն են: Նշում է, որ մեզանում «սոսվորություն է դարձել թե՛ մեկին և թե՛ մյուսին վեպ ասել» (126):

«Բանաստեղծը վեպի հերոսի մեջ մարմնացնում է մի ամբողջ դասակարգի բնորոշ գծերը, նրա աշխարհայեցողությունը, զգացմունքները,

մտքերը, ձգտումները, սովորությունները և այլն: Այդպիսի հերոսը տիպ է կոչվում» (127), իսկ «Հանգամանքների բարդիկելը, որ արգելք է լինում գլխավոր հերոսի ձգտումներին, կոչվում է հանգույց», «ամբողջ անցքի նպաստավոր կամ աննպաստ վերջավորությունը կոչվում է լուծումներ» (128): Ինչպես նկատելի է, շատ շի տարբերվում ժամանակակից սահմանումներից, «Գրականագիտական բառարանում» կարդում ենք՝ «Հանգույց-սյուժեի բաղադրամասերից մեկը, որից սկիզբ է առնում ըստեղծագործության հիմնական կոնֆլիկտը» (ԳԲ, Երևան, 1980, 177) և «Լուծում, հանգուցալուծում-գրական երկի սյուժեի բաղադրամասերից մեկը: Լուծումը կերպարների փոխհարաբերության զարգացման գագարնակետին հաջորդող փուլն է, երբ պատկերվող դեպքերն ու գործողությունները հանգում են իրենց ավարտին» (ԳԲ, 143):

Թահաստեղծ բառի «բան ստեղծող», «ստեղծագործող» իմաստն է հաստատում հետևյալ օրինակը, Ճաղարբեզյանը գրում է՝ «Գրամատիկական բանաստեղծը (թատերագիրը)», այսինքն՝ «պոետ» իմաստին զուգահեռ անցյալ դարավերջին տակավին գործածվում էր «ստեղծագործող» իմաստով ևս:

Նույն պատկերն է ներկայացնում բանաստեղծություն բառը, օրինակ, նա գրում է. «Գրամատիկական բանաստեղծությունն անձնավորությանց բնավորությունը գործողություններով է արտահայտում» (133) և այլն:

Նախաբանի փոխարեն գործածում է «կանխաբան», որը սակայն շմտավ հետագա գրականագիտական տերմինների համակարգի մեջ, օրինակ՝ «Երբեմն վաստակը սկսվում է կանխաբանով, որտեղ բացատրվում է հերոսի դրությունը մինչև նրա դրամատիկական դրության մեջ ընկնելը» (133):

Առասպել է անվանում, հավանաբար, ֆաբուլան, որը ձևակերպում է այսպես. «Բոլոր գործողությունների ամփոփումը, բոլոր գործողություններն ի միասին առաջ՝ առասպել է կոչվում» (133), «Առասպելը բազմաթիվ միջադապերից է կազմված» (135):

Ճաղարբեզյանը զավեշտականի փոխարեն գործածում է ծիծաղական բառը: Օրինակ. «Նոր ողբերգության մեջ մարդ գործ ունի յուր կըրքերի և շրջապատող հանգամանքների հետ, որոնք մարդուն ողբերգական և կոմիկական դրության մեջ կարող են դնել, որոնց մեջ սարսափելին ծիծաղականի հետ խառն է» (145—146):

Ինչպես նկատելի է, անցյալ դարավերջին, նաև XX դարասկզբին գրականագիտական բազմաթիվ տերմինների կիրառությունը կայունացած չէր, այդ է հաստատում նաև Հ. Սուաբելյանի՝ 1907 թ. Թիֆլիսում

լուս տեսած «Զեռնարկ տարրական արամաբանության, Հոգեբանության և բանահյուսության», ազգային դպրոցների պետքերի համար ձեռնարկը։ Առաջարանում նշվում էն օգտագործված աղբյուրները։ Սմիրնովսկու բանահյուսության տեսությունը, Ֆիլոնովի բանահյուսության դասագիրքը, Գարագաշյանի համառոտ փիլիսոփայությունը և Այտընյանի «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի» գրքերը, նաև՝ Լիվանովի «Учебный курс теории словесности», С. Петербург, 1905։

Առաքելյանի սույն ձեռնարկի երկրորդ մասն է կազմում «Տարրերք բանահյուսության»-ը։ Վերջինս բնորոշվում է այսպես. «Բանահյուսությունը գիտություն չէ, այլ արվեստ» (էջ 69), որն է՝ «խոսքերի հյուսումն» (70)։

Քանի որ հեղինակը օգտվել է նաև օտար աղբյուրներից, ուստի գործածում է բազմաթիվ օտարաբանություններ, սակայն փակագծված տալիս է նաև հայերեն համարժեքը կամ՝ հակառակը։ Օրինակ, «խոսքի գրավոր կամ տպագրական արտադրությունների ամբողջությունն, որոնց մեջ արտահայտվում է որևէ ազգի մտավոր կյանքը, կոչվում է գրականություն (literature)» (71), իսկ «այն ամենը, ինչ որ ստեղծել է մարդկային բանը (խոսքը, լոգոս) թե բերանացի արտահայտված (օրինակ՝ առակներ, երգեր, հեքիաթներ) և թե գրավոր կամ տպագրությամբ՝ կոչվում է բանահյուսություն» (71)։

Այստեղ նույնպես բանաստեղծություն բառի իմաստային սահմանները որոշակի չեն։ բանաստեղծություն է անվանում Բաֆֆու «Ձրաբերդ» ստեղծագործությունը։

Առաքելյանը նույնպես թեմայի նշանակությամբ գործածում է բնաբան բառը (111), սակայն դրան համազոր է նաև թեմա օտար բառը, ինչպես. «իր շարադրության համար թեմա կամ բնաբան է ընտրել «Արարատյան դաշտը» (111)։

Անհաջող է հատակագիծ բառի գործածումը «ստեղծագործության պլան» իմաստով, օրինակ՝ «Այն կարգը, որով մենք շարադրում ենք, բացատրում ենք մեր մտքերը, կոչվում է շարադրության հատակագիծը (պլան)» (113)։ Այժմ պլան բառի ճարտարապետական իմաստն արտահայտելու համար գործածվում է հատակագիծ հայերեն համարժեքը, սակայն որոշ գեպքերում պլանը մտել է մեր բառաշարի մեջ «չափաքանակ», «նախագծված ծրագիր» և այլ իմաստներով։

Առաքելյանի գործածած բազմաթիվ տերմիններ հետագայում կրել են փոփոխություններ, բերենք մի քանի դեպքեր, օրինակ՝ վիպասանական ածականը կազմվել է վիպասան բառից և վերաբերում է վիպասանին, իսկ հեղինակը այն գործածում է «ստեղծագործությանը վերաբերող» իմաստով, ուստի ավելի ճիշտ են վիպերգական և վիպական ձևերը։

«Էպիքական քերթված (վիպասանական) կամ էպոս ... կոչվում է այն երկասիրությունը, որ բանաստեղծական ձևով խոսում է արտաքին աշխարհի գեպերի մասին» (139):

Էպիքական օտար արմատով կազմված ածականը հեղինակը թարգմանում է վիպասանական, որը հետագայում շկայունացավ, այժմ գործածական է վիպերգական տերմինը:

Հետագա շարադրանքից երևում է, որ էպոս բառը գործածված է արդեն համարժեք վիպերգական սեռի, քանի որ տեսակների մեջ նա նշում է. ա) առասպել կամ հեքիաթ, բ) վիպասանական երգեր կամ խաղեր, գ) պատմական երգեր, դ) հանելուկներ և ե) առակներ:

Պարզ երևում է, որ տակավին բացակայում է միօրինակությունը ժողովրդական ստեղծագործությունը անվանող տերմինների կիրառության մեջ, քանի որ այդ համացության համար հանդիպում են մի քանի համանիշներ՝ «Ժողովրդական կամ բանավոր էպիքական արտադրություններ, ժողովրդական բանաստեղծություն» (139):

Հեքիարեն ու առասպելը նույնացված են, օրինակ՝ նա գրում է. «Ուրեմն՝ հեքիաթները կամ առասպելները մնացորդներ են միթերի, այսինքն զրույցների աստվածների մասին և առասպելական էակները ծառայում են իբրև բնության երևույթների և ույժերի մարմնացումն» (141), Պուշկինի «Զկնորսի և ձկնիկի մասին» հեքիաթը անվանում է «առասպել»։ օրինակ՝ «Պուշկինը իր գեղեցիկ առասպելը «Զկնորսի և ձկնիկի մասին», որ հայերեն գեղեցիկ կերպով թարգմանել է Դ. Աղայանը «Ուսկե ձկնիկ» վերնագրով, վերցրել է իր դայակի պատմած հեքիաթից» (144): «Եղել է և չի եղել» կամ «Կար ու չկար» բանաձեռ, որով սկսվում են հեքիաթները, հեղինակը բերում է որպես ապացույց «իսուբեր, որոնք շատ ճշգրիտ կերպով ցույց են տալիս առասպելի հատկությունը» (144):

Որոշ շփոթություն կա նաև վիպասանական երգեր կամ խաղեր հատվածում, օրինակ՝ գրում է, որ դյուցազունների մասին երգերը կոչվում են դյուցազնական կամ առասպելական, որը ամենահինն է վիպասանական բանաստեղծության մեջ, այսինքն՝ խոսքը վիպերգերի մասին է («Վահագնի» մասին երգի մի կտորը) (145), որոնք հայերի մեջ կոչվում էին նաև գուսանական երգ, բվելյաց երգ։

Ճեն տարբերակվում առածն ու ասացվածը, առածը համարում է ասացվածի տեսակ, նա գրում է՝ «Առածներ կոչվում են այն կարծ, որպամիտ ասացվածները, որոնցով ժողովրդը արտահայտում է իր կենցաղական իմաստության կամ փորձառության մասին մտքեր, դատողություններ» (47), և օրինակ է բերում «ամեն կլորը խնձոր չէ», «ամեն օր տատը գաթա չի ուտիլ», «գողն ինչ կուզի, մութ գիշեր» և այլն։

Գրականական էպոս ասելով՝ Առաքելյանը նկատի ունի գրավոր գրականությունը, որի տեսակներն են՝ առակ, պոեմա, բալլադա, իդիլիա, րոման կամ վեպ, վեպիկ, պատմվածք (149).

Զի տարրերակված առակախոս և առակագիր բառերի կիրառությունը, որոնց իմաստային տարրերությունը պայմանավորված է բարդության երկրորդ բաղդադրիչով:

Հանդիպում են երաշջային և նրաշխային զուգաբանությունները, որոնցից առաջինը հետագայում լընդունվեց որպես ֆանտասիկականի թարգմանություն, ինչպես գրում էր Առաքելյանը, օրինակ՝ «Նրաշխային, ֆանտաստիկական տարր պետք է լինի կեղծ-կլասիկական պոեմայի մեջ» (163) և «Նրաշքային, ֆանտաստիկական նյութ կա» (168), Պուշկինի «Մուսալան և Լյուտմիլա» պոեմի մասին։ Այնուհետև տարրերում է «նորագույն ժամանակի պոեմա», որն է՝ «Բանաստեղծական պատմվածք նշանավոր գեղգերի մասին ականավոր անձանց կյանքից» (165), և բերում է օրինակներ այլ ազգերից և Ս. Շահազդի «Լևոնի վիշտը», ինչպես և Խ. Ալովյանի «Վերք Հայաստանին»։

Գրում է, որ պոեմները հաճախ չեն երևում, որովհետև նրանց նյութը իր բովանդակության մեջ է առել «ժամանակակից էպոսի ամենատարածված տեսակը—րոմանը» (167—168):

Բալլադ օտար բառը թարգմանում է պարեգ (169). «Ճեղանում ժողովրդական աշուղների երգերը սազով նույնպես կազմում են բալլադայի մի ու մշակված ձև» (169):

Առաքելյանի գրքում հաճախ ենք հանդիպում օտար տերմինների, որոնց հայերեն համարժեքը նույնպես հաճախ նշվում է, օրինակ՝

ալեգորիական կամ այլարանական (98)

պրոզոպուեա կամ կերպարանացումն (101)

անտիթեզ կամ հակառակություն (102)

սիլլարիքական կամ թվական (105)

տոնիքական կամ շեշտավոր, շեշտյալ տաղալափություն (105)

մետոնիմիա կամ անվանափոխություն (95)

կրիտիկա կամ քննադատություն (135)

իդիլիա կամ հովվերգ (171)

րոման կամ վեպ (176)

լիրիկական կամ քնարերգական (191)

լիրիկներ կամ քնարերգուներ (205)

հիմն (օրհներգ) կամ կրոնական օդա (213)

սատիրա կամ երգիծաբանություն (216)

տրագեդիա կամ ողբերգություն (230)

կոմեդիա կամ կատակերգություն (243)

պրոզա կամ պրոզաիկական բան (110) և այլն:

Նկատվում է և հակառակ՝ նախ հայերենը, ապա օտար ձևը. օրինակ՝ ոճ կամ ստիլու (le stylus) (78) կամ՝ հայերենը բերում է որպես թարգմանություն օտար բառի, օրինակ.

թեորիա (տեսություն) (74)

իրոնիա հեգնություն (99)

սինեկդոխա հոմարեն նշանակում է ըմբռնողություն (96)

հիպերբոլա բառացի՝ շափաղանցություն (96)

ալեգորիա հոմ. թարգմ. այլաբանություն (96)

սարկազմ (դառն հեգնություն) (101)

մետրիկական (շափական) (105)

քորեյ (պարառական) (106)

դակտիլ (մատն) (106)

ամֆիբրախի (շուրջը կարճ) (107)

անապեստ (հետ խփել) (107)

պրոզայիկ (արձակ գրող) (114)

թեմա (théme, բնաբան) (114)

օբյեկտիվ (առարկայական) (117)

սուբյեկտիվ (անձնական, ենթակայական) (117)

պաթետիկական (կրթային) (129)

բուկոլիկներ (հովվական) (173)

օբյեկտիվականություն (առարկայականություն) (149)

էկլոգներ (ընտիր) (173)

պաստորալներ (պաստոր—հովիվ բառից) (174)

օդա (ներբռղ) (199)

էլեգիա (եղերերդ) (199)

սատիրա (երգիծաբանություն) (199)

էպիգրամա (կծու հեգնություն) (199)

մոնոլոգիական (մենախոսական) (226)

մոնոլոգ, այսինքն խոսակցություն ինքն իր հետ (226)

ակտեր (actus—գործողություն) (227) և այլն:

Հանդիպում են նաև դեպքեր, երբ հայերեն տերմինը գործածելիս փակագծված կամ առանց փակագծերի նշվում է նաև օտար ձևը, ինչպես օրինակ՝

արխայականություն (archaïsme) (81)

նորաբանություններ (néologisme) (83)

օտար խոսքեր կամ բարբարոսություններ (barbarisme) (96)

նույնանշան (synonime) նաև (սինոնիմ) (86)

հոմանում (homonyme) (86)

մակդիր (էպիտետ) (92)  
այլախոսություն (տրոպ) (92)  
կերպար (ֆիգուրա) (92)  
հանգանակ կամ նշանադրություն (simbole) (95)  
դիմողություն (ապոստրոֆ) (101)  
տաղաջափություն (versification) (104)  
հատած (caesura, կտրում եմ) (107)  
հանգ կամ բիթմոս (107)  
բարոյախոսություն (մորալ) (114)  
ժամանակագրություն (annales, քրոնիկոն) (115)  
կենսագրություն (biographie) (121)  
գովարան—պանեզիրիկ (121)  
վերլուծողական (անալիտիկական) (128)  
բաղադրական (սինթետիկական) (128)  
ներբողական ճառեր կամ պանեզիրիկներ (131)  
այլաբանական (ալեգորիական) (147)  
հաղթական երգ կամ էպինիկիա (206)  
բարոյախոսական դրամաներ կամ մորալիտետներ (258)  
քննադատական հոդվածներ կամ կրիտիկա (135)  
բանաստեղծություն կամ պոեզիա (138)  
հիշատակագրեր կամ հիշատակարաններ (տեմուր) (116)  
խոսակցական կամ դիալոգիական (225)  
կանխաբան (պրոլոգ) (227)  
վերջաբան (էպիլոգ) (227)  
կոմեդիայի առարկան (սյուժետը) կամ ֆաբուլան (247) և այլն:  
Օտարաբանություններ, որոնց հայերեն համարժեքը դեռևս չկա, նա  
գործածում է օտար ձեզ և նշում փոխատու լեզվի գրությունը, օրինակ՝  
կալամբուր (calambour) (86), նեկրոլոգ (nécrologie) (132) և այլն:  
Նկատելի է մի երևույթ, որ Առաքելյանը հաճախ է գործածում տեր-  
միններ, որոնք ենթակայական դերքայով կազմված գոյական անուններ  
են, օրինակ՝ սինեկդոխա թարգմանում է ըմբռնողություն (96). կամ՝  
կրկնողություն, լսողություն, դիմողություն (ապոստրոֆ) (101—103),  
խրատողական (150), նմանողական պոեմներ (162), վերլուծողական-  
անալիտիկական (128), հասկացողություն (111) «հասկացություն»  
իմաստով, իրողապես (110) և այլն:

Բերված բառերից ու տերմիններից այժմ գործածական են կրկնու-  
թյուն, խրատական, վերլուծական կարճ ձևերը. ըմբռնողությունը (սի-  
նեկդոխա շընդունվեց, այժմ չի գործածվում այս իմաստով, հետագա-

յում գործածությունից դուրս մնացին նաև հետեւալ տերմիններն ու բառերը. տիպիական (176), դիալոգիական (225) էֆեկտային տեսարաններ (257), թեորետիական կերպով, սիստեմատիկական (74), լոգիկական (79), պատկերական (80), արխայական խոսքեր (81), պրոզաիկական (110), պատկերիկական (129), գրականական (179), սարկաստիկական (99), ֆանտաստիկական (258) և այլն:

Ժամանակակից հայոց լեզուն պահպանեց -ական վերջածանցով՝ կազմված կարճ ձևերը՝ տիպական, գրական և այլն: -ական վերջածանցավոր որոշ բառեր իրենց տեղը զիշեցին -ային ածանցով կազմված ձևերին, օրինակ՝ պատկերական>պատկերային, կենցաղական>կենցաղային և այլն:

Առաքելլանի գործածած մի շարք բառեր հետագայում կրեցին որոշ ձևափոխություն, բերենք մեկ օրինակ.

«Թոման կամ վեպ կոչվում է մի էպիկական արտադրություն, որ ներկայացնում է հասարակական կյանքի գեղարվեստական պատկերը, բանաստեղծի ստեղծած տիպիական անձնավորությունների կյանքի և գործունեության պատմողությամբ» (76):

Երգիծաբանական ածականը կազմված է երգիծաբան բառից, իսկ Առաքելլանը գործածում է «երգիծական» իմաստով, օրինակ՝ «Ասպետականը ծաղրելու նպատակով Սերվանտեսը գրեց «Դոն Կիխոտը» և հիմք դրեց երգիծաբանական րումանի» (181), այժմ գործածական է երգիծական ձևը:

Որոշ մակրայների մակրայակերտ վերջածանցները նույնպես կրել են փոփոխություններ, ինչպես օրինակ՝ տիպուեն նկարագրել (186) այժմ գործածական չէ, պատմականապես (74) այժմ գործածական է պատմականորեն, ինչպես նաև հետեւալ բառերը. պատկերական են (84) այժմ՝ պատկերավոր. հանրամարդկային նշանակության (194) այժմ՝ համամարդկային. երգիծաբանություն բառը գործածված է որպես ստեղծագործության տեսակ և որպես երգիծանք, օրինակներ. «Սատիրան կամ երգիծաբանությունը լինում է խիստ և մեղմ կամ թեթև (216) և Ռ. Պատկանյանը իր «Ճիմերթ» երգիծաբանության մեջ ներկայացնում է մեղ մի հարուստ» (217—218) և այլն: «Նախարանի» իմաստով գործածում է կանխարան (պրոլոգ) (227), որը հետագայում դուրս մնաց գործածությունից: Բնավորական գծեր (85) այժմ՝ բնորոշ, խոսվածք (83) այժմ՝ ասացվածք կամ դարձվածք և այլն: Նկատենք, որ Առաքելյանը գործածում է՝ պրոզայիկ (արձակ գրող) (110), ուրեմն դեռևս գործածական չէր արձակագիր բառը: Խոտումը օտարարանությունը թարգմանում է հովմանուն, իսկ sinonime-ը՝ նույնանշան (86): Անտիբեզզ

թարգմանում է Հակաղություն (102), թեմայի իմաստով, ինչպես իր նախորդները, գործածում է բնարան բառը (111) և այլն:

Բերված օրինակները ցուց են տալիս ներկա դարի սկզբին գրականագիտական տերմինային համակարգի ու լրիվ մշակված լինելը, գեռևս նկատվում էր խառնաշփություն այդ ասպարեզում:

Քննված ուսումնասիրություններից բացի, տաղաշափական, ոճաբանական տարրերի մասին, այս կամ այն առիթով, նախնական տվյալներ, տեղեկություններ կան նաև այլ գործերում (Հոդվածներ, քերականության դասագրքեր և այլն), որոնցից հիշատակելի է Վերանես Զալիսյանի գրաբարի քերականությունը: Վերջինս վերամշակել է Արան Այտընյանը<sup>10</sup>: Մեզ հետաքրքրող «Քերականական ձևերու վրա» գլուխը ավելացրել է Այտընյանը: Այստեղ խոսվում է գրության այլևայլ ոճերի մասին, որոնք են՝ պարզ, զարդարուն, շրջուն, պերճ, նոխ, խրբին և այլն, և այն, իսկ «քերականական ձևերն» են՝ շրջունն, գեղշունն, ավելագրությունն, արտուրությունն և բակառությունն: Ոճական տարրերի մասին խոսելիս բերվում են բազմաթիվ օրինակներ: Հիշատակելի են նաև Արանես Տիրոյանի հոդվածները ասորական և հայկական տաղաշափության վերաբերյալ, Հ. Թիրյայքյանի, Ս. Գասպարյանի, Հ. Գուրգենի հայկական տաղաշափությանը նվիրված գործերը և այլն<sup>17</sup>:

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽIX ԴԱՐՈՒՄ

ԽIX դարի երկրորդ կեսից հայ իրականության մեջ երևան են գալիս նաև ուսումնասիրություններ՝ նվիրված հայ դպրության (ինչպես ոմանք անվանում են մատենագրություն, ոմանք էլ՝ գրականության պատմություն) հարցերին, ընդգրկելով առանձին շրջաններ կամ սկզբից մինչև ԽIX դարի վերջերը՝ ուսումնասիրողների ապրած օրերը:

Հայ գրականության պատմության մեջ առաջիններից է Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասախոս, հմուտ բանասեր Մկրտիչ Էմինի «Վէպք Հնոյն Հայաստանի» աշխատությունը. այն, ինչպես երևում է վերնագրից, ընդգրկում է միայն հին շրջանի, այն էլ Հին Հայաստանի բանավոր ստեղծագործության այն մասը, որը պահպանվել է Մոսկվես Խորենացու և մի քանի այլ պատմիչների երկերում: Էմինը քննության է առնում մի քանի անվանումներ, որոնք թեև դեռ չեն գիտակցվում որպես գրականագիտական տերմիններ, սակայն առաջին փորձերն են սահմանելու, բացատրելու տվյալ սեռային, տեսակային անվանումները, որոնք մեզ համար ստանում են տերմինի նշանակություն:

Մեր ուսումնասիրության ընթացքում քննության ենթարկվող տեր-

մինների նշանակությունը պարզելու համար և նրանց դարձացման պատմությունը տալիս, որպես համեմատության առաջին եղր, ընդունել ենք «նոր բառքիրք Հայկակեան լեզուի» երկհատոր բառարանը, որը փաստուրեն առաջինն է XIX դարում և ամփոփում է նախորդ շրջանի գրավոր հայերենի գրեթե ամբողջ բառապաշտքը՝ իր իմաստներով ու բացատրություններով՝ և բավականին հարուստ սկզբնաղբյուրներից քաղված վկայություններով:

Մկրտիչ Էմինը, հիշված աշխատության մեջ, փորձում է ստուգաբանել և հանգամանորեն քննել մի շարք բառեր, հին դարերից պահանդիմած մի քանի անվանումներ, որոնցից մի քանիսը ստացել են տերմինի նշանակություն, ինչպիսիք են՝ վեպ, վիպասան, երգ վիպասանաց, պատմական երգ, ազգային երգ, գուան, առասպելիք, գրուց, երգ բնելյաց, ցույց և այլն:

Նույն ժամանակ մի այլ գաղթօջախում Վիեննայի մխիթարյան միաբան Հ. Գարդրենյանն աշխատում էր «Պատմություն մատենագրության հայոց» աշխատության վրա<sup>18</sup>: Հեղինակն իր գործի տպագրության ընթացքում հնարավորություն է ունեցել ծանոթանալու Էմինի աշխատությանը, վերջինս անվանելով «ընտիր գործք»: Քանի որ Գաթըրճյանի քննարկած հարցերը ավելի բազմազան են, հետևաբար իր աշխատության մեջ նախում է բազմաթիվ հասկացությունների և տերմինների մասին, ինչպես՝ պատրաստություն (ներածություն), մատենագրություն կամ գրագիտություն, մատենագրության պատմություն, գրականություն, մակաբերություն կամ համեմատություն, առակ, բանաստեղծություն, վիպագրություն, բնարական, հագներգու, մրմուճք, շափականություն, քվականություն, համեմատականություն, պարերություն, հակարգական եղանակ, բաղադրական, հավասարագոր անդամներ, նմանություն, փոխարերություն, այլարանություն, բանադատություն և այլն:

Գաթըրճյանը շոշափում է տաղաշափության, գրականության տեսության որոշ հարցեր և տալիս մի քանի հասկացությունների, տերմինների բացատրությունը, երրեմն և սահմանումը:

Վենետիկում 1865 թվականին լույս է տեսնում Գ. Զարբիանալյանի «Պատմություն հայերեն դպրությանց» երկհատոր ծավալուն աշխատության առաջին հատորը՝ «Հին մատենագրությունը», որպես ուսումնական ձեռնարկ աղդային վարժարանների համար: Այս հատորը վերահրատարակվել է և քանի որ երրորդ հրատարակությունը լույս է տեսել 1897 թվին, սրա քննությանը կանդրադառնանք հետո:

Նույն թվականին Թիֆլիսում լույս է տեսնում Ս. Պալասանյանի «Պատմություն հայոց գրականության» աշխատության առաջին հատորը՝ նվիրված բանավոր գրականության ուսումնասիրությանը:

Աշխատության նպատակն է «ցույց տալ Հայոց գրականության, ուղիմն և կյանքի ծագումը, աճին ու զարգանալը և զանազան փոփոխությունների տակ ընկնելը սկզբից մինչև մեր օրերը»<sup>19</sup>:

Հեղինակը ծանոթ է հրապարակի վրա եղած համապատասխան հայերեն և օտար գրականությանը, անդրադառնալով դրանց՝ երբեմն հակադրվում է արտահայտված կարծիքներին, ասում իր խոսքը տըվլյալ հարցի վերաբերյալ: Նրան հայտնի էին Սուփիաս Սոմալյանի «Երջան Հայաստանի գրականական պատմության» աշխատանքը, 1829 թ. լույս ընծայված Վենետիկում՝ իտալերեն թարգմանությամբ, 1826 թ. կայպիպում հրատարակված Կ. Ֆ. Նեյմանի «Քննություն հայոց գրականական պատմության վրա» գերմաներեն լեզվով, Ս. Նազարյանցի «Եցլայ աշխատանքում», հրատարակված 1844 թ. Կազանում և նույն տեղում 1846 թվին լույս տեսած նրա «Обозрение истории гайканской письменности в новейшия времена», որոնք Պալասանյանը թարգմանել է՝ «Հարևանցի հայեցվածք հայկական գրականության պատմության վրա մինչև ժդղարու վերջը» և «Մրագիր պատմության գրականության Հայոց նոր ժամանակներումը»<sup>20</sup>: Ս. Պալասանյանը ծանոթ է և Մ. Էմինի «Վէպք հնոյն Հայաստանի» ուսումնասիրությանը:

Սոմալյանն իր աշխատության մեջ օգտագործել է Զամշյանի Պատմության մեջ եղած տեղեկությունները, իսկ Նազարյանցն ու Նեյմանը մեծ շափով օգտվել են Սոմալյանի աշխատությունից: Պալասանյանին ծանոթ էր նաև Գաթըրճյանի «Պատմություն մատենագրության հայոց» աշխատանքը:

Պալասանյանի աշխատությունը մեզ համար ավելի ուշագրավ է, քան Զարբհալանյանի մեծածավալ աշխատանքը, քանի որ առաջինը քննության է առնում բազմաթիվ գրականագիտական տեսական հարցեր, իսկ Զարբհանալյանը տալիս է գրականության սոսկ պատմությունը, հիմնականում հեղինակների կենսագրությունը, գլխավոր երկերի բովանդակությունը և մնացած ստեղծագործությունների թվարկումը, գրականագիտական, տեսական գրեթե ոչ մի հարց նա չի շոշափում:

Հայ իրականության մեջ նշանակալից երևությ էին հայտնի հրապարակախոս Ս. Նազարյանցի հոդվածները, որոնք շոշափում և հաճախ բարձրացնում էին ժամանակի համար մշակութային կարևոր և հրատապ հարցեր: Նազարյանցի բազմաթիվ հոդվածներից նշենք հատկապես մեկը, որի մեջ քննվում են նաև գրականագիտական հարցեր՝ կապված թատրոնի հետ: Դա 1860 թ. «Հյուսիսաֆալլ» ամսագրում տպագրված «Հայկական թատրոնը Մոսկվայի մեջ, և մի քանի խոսք թատրոնական

գործողության վերա ընդհանրապես» հոդվածն է<sup>21</sup>: Հոդվածագիրը գրում է՝ դրամատիկական (թատերագրական) ժանրի մասին:

Այս հոդվածը կարեռ է նաև նրանով, որ հայ գրականության մեջ առաջին անգամ խոսվում է մասնավորապես թատերական տերմինների մասին և դրանք բացատրվում են օտար տերմինների օգնությամբ, ինչպես՝ արեք (Աբեր), կամ գերմաներեն Վարագուրաբարձուրյուն (Auszüge), պրոլոգոս (հառաջաբան), էպիզոդիոն (միջերգուրյուն), «էպոդոս (Առերգուրյուն), որ ճիշտ համեմատվում են այն բանին, որ մեք ասում ենք այժմ Բացատրություն, Ծփոթություն և Դարձված» (230):

Տերմինների ընտրությունը նազարյանցի կողմից պատահական չէ, նա կատարում է հետազոտական աշխատանք և ցույց տալիս իր վերաբերմունքը:

Դրամատիկական բառի մեջ նա տարբերում է մի քանի իմաստ. Կախ՝ որպես գրական և թատերական ստեղծագործություն, այսինքն՝ մի գեպքում հեղինակը գրում է գրական ստեղծագործություն՝ անկախ թատրոնի, բեմի պահանջներից, իսկ մյուս գեպքում՝ նպատակ ունենալով այն բեմադրել որպես ներկայացում: Այդպիսով, նա սահմանազատում է «թատրոնականը» «դրամատիկականից»՝ առաջնությունը տալով երկրորդին: Բացի այդ, դրամատիկական բառը նշանակում է նաև «ողբերգական», «օրինակ՝ Գյոթեի «Վերթեր» անում գրվածքը մեծապես դրամատիկական է, առանց լինելու դրամա» (231), այսինքն՝ բովանդակությունը ողբերգական է, սակայն թատերագրական ստեղծագործություն չէ:

Առաջին անգամ խոսվում է նաև թատերագրական ստեղծագործության տաղաջափության մասին:

Հիշելով օտար ազգերին հատուկ տաղաջափական ձևերը (գերմանական դրամային հատուկ է հնգոտնյա յամբական տողը, իսպանականին՝ չորստոնյա սպոնդեական տողը, ֆրանսիականին՝ ալեքսանդրյան տողը, որը գործածել են նաև գերմանացիք), գտնում է, որ հայերենին շատ հարմար է «հայոց տասն կամ տասներկուունյա տողը», որովհետև «տասնհինգունյանը պիտո է անշափի ծանրաշարժ կացուցաներ սրտի զեղմունքի ընթացքը» (233):

Հետևելով նազարյանցի լեզվին, պարզ է դառնում, որ գրական շատ իրակություններ դեռ չունեին իրենց հայերեն անվանումը, չկային կայուն, միասնական տերմիններ: Հանդիպում են զուգաբանություններ. ինչպես՝

դրամատիկական բանաստեղծություն և թատրոնական գրվածք թատերագրական երկ, հանդես (228) և թատրոնական հանդես (229)

դրամատիկական բանաստեղծ (231), թատրոնական բանաստեղծ (112) և դրամատիկոս (229)

դրամատիկական լեզու և թատրոնական լեզու (232)

թատրոնական երապերակ (235), թեատրոնական բեմ (100)

թատրոնարքեմ (236) և թեատրոնարքեմ (113) և այլն:

Հեղինակը կատարում է որոնումներ, նոր իրակությունների անվանումների թարգմանություն, օրինակ՝ սկզբնակետ և վերջակետ (228), գործողության միջոցքը (Անտր-Ակտերը), շարժական զարդարանքը (դեկորացիոնքը) (229), միանձնախոս պատմություն, խոսակցություն երկուքի մեջ (231), արամախոսություն (դիալոգ) (188), արվեստական (տեխնիկական) բառեր (366), դրամատիկական ախորժակ զարբեցնել լսողների մեջ (231), մակագրել (231) վերնագրել, փիլիսոփայական նաշակագիտություն (233), պատմերգություն, բնարերգություն, բնարական (գոյականի առումով), դրամայի ներքին և արտաքին ընթացքը (235), միջնադարյան ասպետանաշակ բանաստեղծություն (236), կատակերգական և ողբերգական խաղարկություններ, երգիծաբանություն (104), Հոմերոսի տալերգություններ (186) և այլն:

Հետագա ուսումնասիրողները մեծ ուշադրություն հատկացրին հայ գրականության ամբողջական պատմություն ստեղծելու գործին՝ ի մի բերելով հայերեն անգիր գրականության պատառիկներից սկսած մինչև անցյալ դարի վերջին ստեղծված գրական երկերը։ Այդ տեսակետից շնորհակալ աշխատանք է կատարել Ս. Պալասանյանը։ Օգտագործելով նախորդների փորձը՝ նա գրեց հայ գրականության պատմություն, որի միայն առաջին հատորը հրատարակվեց։

Պալասանյանի աշխատությունը օգտագործել է Միանսարյանն իր «Քնար հայկական» ժողովրդական երգերի ժողովածուի առաջաբանում՝ նույնությամբ բերելով երգերին վերաբերող հատվածը։

Վենետիկի միսիթարյան միաբան Գ. Զարբնանալյանը հսկայական գործ է կատարել այս ուղղությամբ։ Նա երեք հատորների մեջ ամփոփել է հին ու նոր մատենագրության և թարգմանությունների պատմությունը։ Զափազանց մանրակրկիտ մի աշխատանք, ուր ներկայացված է հայ մատենագրությունն իր շրջաններով՝ ա. հին մատենագրություն, բ. հին թարգմանությունք, գ. նոր մատենագրություն։

Առաջին հատորը նվիրված է մատենագրության ուսումնասիրությանը, որն ընդգրկում է մինչև XIII դարը, այսինքն՝ նախագրային շըրշանից մինչև միջին դարերը։ Երկրորդ հատորը նոր շրջանի գրականության պատմությունն է և ընդգրկում է XIV դարից մինչև հեղինակի ապրած օրերը՝ XIX դարի կեսը։ Երրորդ գիրքը վերաբերում է այլ լե-

գուներից կատարված թարգմանություններին՝ V դարից մինչև XIII դար:

Գ. Զարբհանալյանի մեծածավալ աշխատանքը արժեքավոր է Հայ գրականության պատմությունն ուսումնասիրելու տեսակետից: Ցավոք, այն նույնքան հետաքրքրություն չի ներկայացնում գրականագիտական տերմինները քննելու համար, քանի որ, ինչպես հեղինակն է գրում, իր նպատակն է «ընդհանուր պատմական տեղեկություն մը ավանդել մեռ մատենագրաց և անոնց գրվածոց վրա, առանց ուզելու քննադատական տեսությամբ ծանրացնելու այնպիսի գրվածք մը, որուն գլխավոր կիրառությունը ավելի վարժարանաց մեջ սովորողներուն համար էր»<sup>22</sup>:

Գ. Զարբհանալյանի աշխատությունն իր տեսակի մեջ առաջինն էր, քանի որ նրա նախորդները՝ Հ. Գաթըրճյանն ու Ս. Պալասանյանը վերը նշված ուսումնասիրություններում չէին ընդգրկում ամբողջ Հայ գրականությունը: Խսկ Գ. Զարբհանալյանը ի մի հավաքեց, թեև առանց համապատասխան բանասիրական քննության, և ընթերցողին ներկայացրեց Հայերեն գրված ամեն մի թուղթ, փոքր ու մեծ ծավալի թե՛ կրոնական, թե՛ պատմական, փիլիսոփայական ու այլ գիտական երկեր և նըրանց հեղինակներին: Գ. Զարբհանալյանի աշխատանքը հին ու միջնադարյան Հայ մատենագրության մի ինքնատիպ տեղեկատու է, ուր մեծ ուշադրություն է նվիրված գործիչների կենսագրություններին, թողած ժառանգությանը, երկերի բովանդակությանը:

Գ. Զարբհանալյանի աշխատությունից հետո, ուսումնասիրվող ժամանակաշրջանի նույն ընդգրկումով, լույս է տեսնում Եղիշե Դուրյանի «Պատմաւթյուն Հայ մատենագրության» գիրքը՝ նույնպես աղգային վարժարանների համար:

Այս աշխատությունը տարբերվում է նախորդից նրանով, որ Համակարգված է, նրանում առաջ են քաշվում բազմաթիվ բանասիրական հարցեր, տեքստը մասնատված է վերնագրերով՝ Համապատասխան հարցադրմամբ: Ե. Դուրյանը ևս խուսափում է տերմինների սահմանումից, սակայն Հաճախ փորձում է բացատրել առանձին գրականագիտական իրակություններ ու հասկացություններ, որոշ տերմիններ: Նա գործառության մեջ դրեց որոշ գրականագիտական սեռերի ու տեսակների անվանումներ ու տերմիններ:

1893 թ. Կ. Պոլսում լույս տեսակ Վահան Վարդապետ Տեր-Մինասյանի ուսումնասիրությունը՝ նվիրված անգիր, բանավոր գրականությանը: Այն հագեցված է հարուստ նյութով և ունի հավելված՝ առակների ժողովածու:

Քանի որ աշխատությունն ընդգրկում է միայն բանավոր գրականու-

թյունը, ապա հեղինակը քննության նյութ է դարձրել բանավոր գրականության առանձին սեռեր ու տեսակներ, ինչպես՝ թվելոց երգեր, առակ, խաղերգեր, տաղերգ, առասպել, անեծքներ, առածեներ, առեղծված կամ հանելուկ, ջայլի, ողբի, լալոն (պանդիստի ողբը), դարիպական լալոններ, վիճակ (Համբարձման տոնին երգող), մաղթերգ, օրորներ, տանտաններ, շարերգ, ողբերգ, գրվե (մահվան ողբ, հանգուցյալի վրա երգվող ողբ), առակագիր, առակախոս, բարոյավեպիկներ, առակախոսություն, գուցք և այլն:

Սույն աշխատանքը ազգագրական բնույթի մի ուսումնասիրություն է և հայկական ժողովրդական ժեսերի ժամանակ կատարվող երգերի հավաքածու:

Անցյալ դարի արևմտահայ փայլուն մտածողներից էր Արփիար. Արփիարյանը, որը ժամանակին կրքոտ կերպով արձագանքում էր գրական ամեն մի ուշագրավ երևույթի: Շատ հետաքրքրական է նրա «Պատմություն Ժթ» դարու Թուրքիո հայոց գրականության» աշխատությունը: Խնչպես երևում է վերնագրից, հեղինակն ուսումնասիրության նյութ է դարձրել մի որոշակի ժամանակաշրջանի հայ գրականության միայն արևմտահայ հատվածը:

Ա. Արփիարյանն առաջիններից էր, որ հատուկ ուշադրության է արժանացնում գեղարվեստական գրականությունը, այդ մասին նա գրում է. «Դեղարվեստական, կամ ինչպէս կրնանք ըսեկ՝ «գեղակրական»—էսթետիք—գրականությունը» իր քննած 1850—1889 թթ. ժամանակաշրջանում «գրեթե գոյություն չէ ունեցած»<sup>23</sup>, դա ավելի մաքառման գրականություն էր: Թեև շատ քիչ են գրականագիտական տերմինների բացատրություններն ու սահմանումները, սակայն հետաքրքրական են հեղինակի հայտնած մտքերը գրականագիտական հարցերի, գրական սեռերի ու տեսակների վերաբերյալ:

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

XX դարում ավելի է աճում հետաքրքրությունը գրականության և նրա պատմության նկատմամբ: Բայվական է նշել այն փաստը, որ դարասկզբին լույս ընծայվեցին Լեոյի, Հ. Աճառյանի, և. Մանվելյանի և Վ. Փափազյանի հայ գրականության պատմության ձեռնարկները: Այլևս շենք խոսում գրականագիտական հարցեր քննող ուսումնասիրությունների, ընթացիկ մամուկի էջերում նոր գրական երկերը ներկայացնող բազմաթիվ հոդվածների ու գրախոսությունների մասին:

Մինչև նշված մեծածավալ աշխատությունների հրատարակումը, հիշատակելի են թ. Խալաբյանցի գրքուկը հայ ժողովրդական դրուցազնական վեպի և Ե. Շահազիզի հանգամանալից ուսումնասիրությունը Մ. Նալբանդյանի «Աղցմիքի» և Խ. Գալֆայանի մասին:

Թ. Խալաբյանցը քննության է ենթարկում ժողովրդական վեպի՝ դրուցազնավեպի և ընդհանրապես ժողովրդական ստեղծագործության մի շարք հարցեր:

Բերենք թ. Խալաբյանցի գործածած տերմիններից մի քանիսը և որոշ արտահայտություններ<sup>24</sup>. Դյուցազնական գրույցներ, վարիանտներ, ներիաբներ, երգեր, ասողներ (4), եաղբներ, աշուղներ, հանելուկներ (5), գուաններ, բանաստեղծական արտահայտիչներ (գուանների մասին), ժողովրդական երգեր, դյուցազնական ներիաբներ, սիրահարական երգաբանություններ, արևելյան առասպելներ (6), ներիաբաձեւ վարիանտներ, դյուցազնական վիպասանությունների շափը և ձեզ, գեղարվեստական մշակում, նախերգ (7), շափակոր նախադասություններ, ոտանակորի ձեզ, արձակ պատմություն, վաճեկերի հավասար շափ (8), առասպել, առասպելաբանություն (56) և այլն:

Դարասկզբին «կումա» ամսագրում տպվեց Երվանդ Շահազիզի ծավալուն մի ուսումնասիրությունը, ուր հանգամանորեն պատմվում է Խորեն արք. Գալֆայանի կենսագրությունը, վերլուծության են ենթարկվում նրա գրական ստեղծագործությունները, հատկապես «Վարդենիք» ժողովածուն, որի առիթով Մ. Նալբանդյանը գրել է իր «Աղցմիքը»: Այդ աշխատանքը հետագայում հրատարակվել է առանձին գրքով, որի վերջում զետեղված է Մ. Նալբանդյանի «Աղցմիքը»:

Գրքի մեծագույն մասը նվիրված է Գալֆայանի անձնավորության և ստեղծագործության վերլուծությանը, սակայն ուսումնասիրողը արքեպիսկոպոսի ստեղծագործության տեսական, գրական ուղղության և կրած ազդեցության առիթով անդրադառնում է Լամարթինի, Հյուգոյի ստեղծագործությանը, ումանտիզմի և կեղծ-դասական ուղղության հարցերին:

XX դարի անդրանիկ գրականության պատմությունը բազմավաստակ պատմաբան, բանասեր Լեոյի աշխատանքն է. այն ընդգրկում է միայն արևելահայ գրականությունը «սկզբից մինչև մեր օրերը»: Լեոյի այս աշխատությունը առաջինն էր իր բնույթով: Նախորդ նման աշխատությունները ընդգրկում էին կամ ամբողջ հայ գրականությունը՝ անկախ ժամանակից և բնույթից (Զարբհանալլյան), կամ գրականության պատմության որոշ ժամանակաշրջան (Գաթըրճյան, Պալասանյան), կամ գրականության որոշակի ճյուղ (Էմին, Խալաբյանց) և կամ՝ գրականության մի հատվածը (Արփիարյան):

Հեռն անձամբ հավաքել է արևելահայերեն գրական երկերի, նրանց հեղինակների վերաբերյալ նյութերը և ստեղծել արևելահայ գրականության պատմությունը, ինչպես արևմտահայ գրականության համար արդեն կատարել էր Ա. Արփիհարյանը:

Ինչպես գրում է հեղինակը, իսկապես կես դար առաջ դեռ շկար այդ բաժանումը՝ ոռուահայ և թուրքահայ գրականություն:

Այս աշխատանքն ընդգրկում է կեսդարյա մի ժամանակաշրջան և փորձում է «ոռուահայոց» գրականության մի թուրքիկ տեսությունը ամփոփելը<sup>25</sup>:

Լեռյի գրքի լույս տեսնելուց երկու տարի անց հրատարակվեց մեծանուն հայագետ, լեզվաբան Հ. Աճառյանի «Հայ նոր գրականության պատմության» առաջին պրակը: Ի տարրերություն նախորդի, հեղինակի նպատակն է ընդգրկել նոր շրջանի ամբողջ հայ գրականությունը՝ թե՛ արևելահայ, և թե՛ արևմտահայ. «Հայոց նոր գրականության մասին թեև մասնական աշխատություններ շատ կան, բայց մի ամբողջական գրվածք շկար մինչև այժմ»<sup>26</sup>, ուրեմն նպատակը հայ գրականության «ամբողջական» պատմություն ստեղծելն է:

Օգտագործել է նախորդների նմանատիպ աշխատությունները (նույնիսկ նույնությամբ բերելով առանձին հատվածներ) և ամեն մի բաժնի սկզբում նշել աղբյուրները: Ուսումնասիրության ոլորտի մեջ մտել են միայն մահացած գրողների երկերը, իսկ ժամանակակից հեղինակները և գրաքննության կողմից արգելված ստեղծագործությունները քննելը հեղինակի նպատակից դուրս է: Հետևաբար ուղյան աշխատանքն էլ (անկախ հեղինակի կամքից) չի կարող լիակատար համարվել:

Ընդհանուր տեսության մեջ քննվում են լեզվի, հայ գրականության երկու հատվածների սկզբնավորման, ապա զարգացման ուղիները: Հեղինակի եղրակացությունն է՝ «արևելյան գրականությունը ապրել է մեր հայրենիքի ներկա կյանքով, իսկ արևմտյան գրականությունը հեռու հայրենիքից՝ նորա անցյալ կյանքով»<sup>27</sup>,

Նոր գրականության պատմությունը Հ. Աճառյանը սկսում է Միսիթար Սեբաստացուց՝ շրջանը վերնագրելով «կեղծ դասական գրականություն», որի ներկայացուցիչներն են Վենետիկի և Վիեննայի միսիթարյան միարանները (Զամշյան, Խնձիճյան, Ալգերյան, Քաջումի, Արսեն Բագրատունի, Ալիշան, Գարագաշյան, Այտընյան և ուրիշներ):

Ինչպես տեսնում ենք, Աճառյանը, Զարբհանալյանի պես, նկատի ունի ընդհանուր գրականությունը, բանասիրությունը, պատմագրությունը, բնական գիտությունները և այլն: Նա լեռյի նման չի առանձնացնում միայն գեղարվեստական երկերը, գեղարվեստական գրականու-

թյումը: Գիրքն ընդգրկում է XVIII դարից սկսած (*Սեբաստացի*) մինչև Գրիգոր Օտյանը (1887 թ.) ընկած ժամանակահատվածը: Ուսումնասիրվող Հեղինակները շատ շեն, բայց նրանց կենսագրությունները ներկայացված են բավականին հանգամանորեն, կատարվում են ընդարձակմեջ:

Դրականագիտական տերմինների բովանդակությունը դեռևս պարզութափած չէ, օրինակ՝ գրականություն նշանակում է ընդհանրապես որևէ լեզվով գոյություն ունեցող ամբողջ գրականությունը, մատենագրությունը և, մասնավորապես, գեղարվեստական գրականություն և այլն (62):

1909 թ. Թիֆլիսում հրատարակվեց Ժամանակի մամուլում (*«Առողջական»*, *«Մշակույթ»*, *«Արձագանք»*) ցրված Գարեգին Ենգիբարյանի գրականագիտական հոդվածների, աշխատությունների ժողովածում<sup>28</sup>: Հեղինակը հանգամանորեն քննության է առնում գրական երկերը՝ ըստ բովանդակության և կերպարների վերլուծության: Այստեղ ավելի հաճախ են հանդիպում մեզ հետաքրքրող տերմինների բացատրություններ: Գ. Ենգիբարյանը փորձում է բացատրել, բնութագրել առանձին գրական ուղղություններ, սեռեր:

1909 թ. Ալեքսանդրապոլում լույս տեսավ Լևոն Մանվելյանի *«Շուսահաջողության պատմություն»* աշխատության Ա. Գրբույշը: Հ. Աճառյանի, Լ. Մանվելյանի և Վ. Փափազյանի աշխատանքները նախատեսված էին դպրոցական կարիքների համար, պատրաստվում էին համարյա միաժամանակ: Թեև Աճառյանի առաջին հատորը լույս էր տեսել դեռ 1906 թ., սակայն նրա վերջին մասերը հրատարակվելիս (1912 թ.) արդեն հրապարակի վրա էին Վ. Փափազյանի գրքի առաջին մասը (1907 թ.) և Լ. Մանվելյանի Ա, Բ, Գ, Դ պարակները (1909—1911 թթ.):

Լ. Մանվելյանի աշխատությունը, ոիրեն սուսահայ գրականության համակարգված պատմություն, առաջին փորձն է մեզանում<sup>29</sup>: Սակայն հայտնի է, որ Լևոյի գիրքը հրատարակվել է ավելի վաղ: Հեղինակը քննում է որոշակի խնդիրներ և մեզ հետաքրքրող հարցում նման է նախորդներին՝ շի տալիս առանձին գրական ժանրերի սահմանումներ, վերլուծություններ: Միայն երբեմն հանդիպում է այս կամ այն տերմինի բացատրություն:

Թիֆլիսում լույս է տեսնում Վերանես Փափազյանի ստվարածավալ աշխատությունը<sup>30</sup> *«Պատմություն հայոց գրականության»* ընդհանուր վերնագրով, որն ունի փակագծված ենթավերնագիր և՝ (*Բանահյուսության պատմություն*) սկզբից մինչև մեր օրերը: Ապա նորից գրակագծերում հեղինակը բացահայտում է աշխատության ընդգրկած ծավալը՝ (բանավոր գրականություն, հին, միջին և նոր դարեր, նորագույն շրջան —

ռուսացայ և թուրքացայ գրականություն), իսկ գրքի վերջում կցել է «Հավելված՝ նմուշներ հին և միջնադարյան գրականությունից»։ Տիտղոսաթերթից իսկ հայտնի են դառնում աշխատության ընդգրկած մեծ ժամանակաշրջանը և քննարկված խնդիրների բազմազանությունը։

Վ. Փափազյանի գիրքը ամենաընդարձակը, ամենածավալունն է նաև խասովետական շրջանում լույս տեսած նման աշխատություններից։ Իր նախորդների հետ համեմատած նա ավելի հաճախ է տալիս գրական երևությների, սեռերի բացատրություններ, երրեմն սահմանումներ։ Հնարավորին չափով նաև գործածված տերմինների ստուգաբանությունը։

Արևելահայաստանում քաղաքական համեմատաբար նպաստավոր պայմանների շնորհիվ գրականությունը և դպրոցական գործը ավելի միաժամանակ վիճակում էին, քան Արևմտահայաստանում, սակայն, չնայած քաղաքական և տնտեսական աննպաստավոր պայմաններին, հայ մտավորականությունը ջանում էր ամենաանհրաժեշտն ունենալ:

1913 թ. Մարզվանում Գագիկ Օզանյանը հրատարակում է «Պատմություն Հայ լեզվի և բանահյուսության» աշխատությունը։ Հեղինակն օգտվել է Հ. Աճառյանի և Լեոյի համապատասխան գործերից։ Այս գրքում ևս բանահյուսություն, գրականություն, մատենագրություն, բանաստեղծություն տերմինների արտահայտած հասկացությունները դեռևս տարրորշված, որոշակի չեն։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ  
ՇՐՋԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը նոր հորիզոններ բաց արեց ոչ միայն Ռուսաստանի ժողովուրդների, նրանց թվում նաև հայ ժողովրդի քաղաքական-տնտեսական կյանքում, հեղաշրջելով նրանց հոգաւոր կյանքը և մշակույթի, գրականության ու արվեստի բովանդակությունը:

Նոր թեմատիկան, նոր գաղափարներն ու ստեղծագործական նոր մեթոդը անհրաժեշտաբար կիրառության մեջ դրին նոր տերմիններ, գրականագիտական նոր արտահայտություններ, ինչպես՝ ուսույնություն-պրոլետարիան գրականություն, բովանդակությամբ սոցիալիստական և ձեռվագային, կոշ-բանաստեղծություն, պոետ-ագիտատոր, նախկինական, ագիտակա, ձախ գոենկարքաններ, սինթետիկ արվեստ, տեխնիցիզմ, պլակատային սխեմատիզմ, գոենիկ սոցիոլոգիզմ, սոցիալիստական ռեալիզմ, ռեալիստական վեպ, պատմա-հեղափոխական վեպ, պատմա-հեղափոխական դրամ, սովետական դրամա, սովետական դրամա, սովետական դրամա

կան թեմա, կինոդրամատուրգիա, սցենար, սյուժետային հանգույցներ, պոլեմիկական ուղղություն և բազմաթիվ այլ բառեր:

Եթե նախասովետական շրջանում հայ գրականությունը, ապա և գրականագիտությունը զարգանում էին մայր հայունիքից դուրս, ապա սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանը դարձավ հայ գրականության և ընդհանրապես մշակութային կյանքի կենտրոն: Գեղարվեստական գրականությունը և արվեստները սկսեցին զարգանալ նոր, նպաստավոր պայմաններում, պետական օժանդակությամբ և հովանավորությամբ: Այդ գործում մեծ դեր խաղաց գրական ժուռնալիւտիկան, որն օժանդակում էր գրական նոր կադրեր աճեցնելու, նրանց գաղափարապես դաստիարակելու ու կոփելու, գրականության տեսության առանձին հարցեր լուծելու, նոր ուղղություն մշակելու, ուստի պրոլետարական գրականության առաջավոր գաղափարաները մասսայականացնելու գործին:

Գեղարվեստական ժուռնալիստիկան ավելի մատչելի լինելով ընթերցող լայն զանգվածներին, վերջիններիս հաղորդակից դարձնելով նոր գրուկան երկերին, ոչ միայն դաստիարակում էր մասսաների գեղագիտական ճաշակը, գրական նոր երևույթները զգալու, գնահատելու ընդունակությունը, այլև նպաստում էր գրականագիտական բառապաշտարիների հարթափանցմանը գրավոր և բանավոր խոսքի մեջ:

Սովետական գրականության սկզբնավորման, ձևավորման շրջանում սովետական գրողների գաղափարական դաստիարակման, մարքսիստական գեղագիտական սկզբունքները յուրացնելու, անցյալի գրականության, արվեստի հարուստ ժառանգությունը գնահատելու ու առողջ ավանդույթները շարունակելու, նոր գրականության զարգացման ճիշտ ուղիներ մշակելու ու կարգավորելու, նրա հեռանկարներն ու նպատակները որոշելու գործում մեծ ու արդյունավետ աշխատանք է ծավալում մարքսիստական գրաքննադատությունը: Այն ղեկավարում է ժամանակի գրական պայքարը: Այդ պայքարի՝ գրական բաղաքականության հիմք են ծառայում Վ. Ի. Լենինի, Ս. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի գրականագիտական հոդվածները, որի արտահայտությունն են գրական-կուսակցական մամուլում ծավալված գրական բանավեճերն ու գրական քննադատությունը:

Հայ առաջին մարքսիստ գրականագետ Ա. Մյասնիկյանի հետ միասին գրականության առօրյա և տեսական հարցերին նվիրված հոդվածներով հանդես են գալիս մի շարք այլ մարքսիստ քննադատներ: 20-ական թվականներին գրաքննադատության և գրականագիտության ասպարեզում իրենց շնորհակալ դերն են կատարում լուսադողկոմ Ասքա-

Նաղ Մռավյանը, պատմաբան ու գրականագետ Աշոտ Հովհաննիսյանը, գրականագետ Արտաշես Կարինյանը, մարքսիստ հրապարակախոս Հայկ Գյուլիքյոխյանը, քննադատ ու թարգմանիչ Պողոս Մակինցյանը, գրականագետներ Յոլակ Խանզադյանը, Հարություն Սուլիխաթյանը, գրականության պատմաբան Արմեն Տերտերյանը և ուրիշներ:

«Գրական դիրքերում» հանդեսը դառնում է նոր գրականության ու գրաքննադատության՝ օրգան, որի էջերում հանդես են գալիս ժամանակի գրողներն ու գրաքննադատները: Գրական ընթացքին ուղղություն էին տալիս նաև սովետական գրողների համագումարները:

Ինչպես ուսւա, այնպես էլ հայ գրականագիտության մեջ զգացվում էր նոր գրականության մեթոդի էությունն արտահայտող համապատասխան անվանում, տերմին ունենալու հարցը, երևան են գալիս նոր գաղափարախոսության հետ կապված մի շարք անվանումներ, ինչպես՝ պրոլետարական ռեալիզմ, ներոսական ռեալիզմ, նեղափոխական ումանատիզմ, դիալեկտիկական մատերիալիստական մեթոդ և այլն:

Հայ գրականության և գրաքննադատության սովետական շրջանը տարրերվում է նախորդ շրջաններից նրանով, որ նախկին տարերային, անհատների ձեռքին ու նրանց քաղաքական տրամադրություններին ենթակա գրական գաղափարախոսությունը այժմ զեկավարվում է կոմունիստական կուսակցության և հովանավորվում սովետական կառավարության կողմից:

Այս տեսակետից նշանակալի է որոշ պարբերականների հիմնադրումը, ինչպես՝ «Գրական թերթը» Երևանում, «Խորհրդային գրողը» Բարգվում, «Արշավ» հանդեսը Թիֆլիսում, հատկապես «Նորք» և «Նոյեմբեր» գրական-գեղարվեստական, գրաքննադատական և քաղաքական-հասարակական հանդեսները Երևանում:

Մամովում ծավալված մի քանի թեժ բանավեճերից հետո 1934 թ. տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների անդրանիկ համագումարը, ուր քննարկվեցին սոցիալիստական ռեալիզմի, կյանքի ու գրականության փոխհարաբերության, գրականության և գրական լեզվի զարգացման նոր ուղիներն ու հրատապ հարցեր:

Հայ գրականության թեմատիկան միանգամից փոխվեց Հայրենական մեծ պատերազմի և ետպատերազմյան տարիներին:

Պատերազմի ժամանակակաշրջանում առանձնապես թափ առավ հրապարակախոսությունը: Գեղարվեստական խոսքը, հրապարակախոսությունը դարձան զենք գրական աշխատողների ձեռքում, որոնք ամբողջ սովետական ժողովրդի հետ լծվեցին ֆաշիզմի դեմ մղվող սրբազն պայքարին:

Այս տարիներին զարգացան հրապարակագրության տեսակները, օրինակ՝ ռազմականը, նամակ-դիմում, կոչ, ուղերձ, դիմում և այլն, զարգացավ հատկապես ակնարկի ժանրը:

Գրականագիտությունն ու գրական քննադատությունը նույնպես ձեռք են բերում հրապարակախոսական հատկանիշներ. նշանակալի են Ա. Տերեցյանի՝ հայրենասիրության թեմային նվիրված հոդվածներն ու աշխատությունները և այլոց հոդվածները:

Լույս ընծայվեց Մանուկ Արելյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը, Գրական մամուլում հանդես եկան գրականագետներ Ա. Ասարյանը, Ռ. Զարյանը, Է. Թոփչյանը, Ա. Խենիկյանը, Տ. Հախումյանը, Ս. Հարուրյունյանը, Հ. Մելիքյանը, Ս. Մելիք-սերյանը, Մ. Մկրյանը, Հ. Մուրալյանը, Ռ. Վարդագարյանը և ուրիշներ:

Պատերազմի տարիներին բազմաթիվ ճակատային գրողների ստեղծագործություններն առաջին անգամ հրատարակվում են ճակատային թերթերում: Ինչպես և հետագա շրջանում գրականության զարգացմանն ու լայն մասսայականացմանը մեծ օժանդակություն է ցուցարերում մամուլը, «Գրական թիրթը», հատկապես «Սովետական գրականություն» ամսագիրը, իրենց էջերում առաջին անգամ հրատարակելով փոքրածավալ գեղարվեստական երկեր:

Հայրենական պատերազմի և հետագա՝ ետպատերազմյան տարիներին մամուլում և ապա մենագրություններով հանդես եկավ գրաքննադատությունը, որն ստեղծեց կամ վերստին գործածության մեջ դրեց բազմաթիվ տերմիններ ու տերմինային արտահայտություններ, ինչպես. մարտակոչի պոեզիա, ռազմակոչային հետերգություն, ռազմական պոեզիա, իրապարակախոսական բանասեղծություն, խրամատային կյանքի թեմա, ռազմանակատային հետերգություն, մարտակոչային երգ, ռազմական մարտանկարներ, ասխային պատում, թիկունքային ռազմերգակներ, ռազմանակատային էսիզներ, գեղարվեստական ակնարկ, ռազմանկար, զինվորական նիշատակարան, ռազմական թեմատիկա, ռազմական վեպ, սովետահայ պատմավեպ, դասական պատմավեպ, ավանդական պատմավեպ, պատմական նովել, հակաֆաշիստական դրամատուրգիա, ռազմական ակնարկ, պատերազմական ակնարկ, պատերազմական պատմավածք, իրամատի թեմա, (հ) ետպատերազմյան սովետահայ գրականություն, վիպաշար, հուշագրություն-խոստովանություն, երգիծական մանրապատումներ, բանասիրական գրույցներ, խոհական մանրապատում, գեղարվեստական հրապարակախոսություն, ներբողերգություն, ներբողագրական ոճարանություն, կի-

նոգրություն, արկածային վիպակ, գիտաֆանտաստիկական վեպ, կենցաղագրական պատմվածք, արկածային երկ, նորագրական-հրապարակախոսական գրականություն, սիրերգակ, անկոնֆլիկտ բնարերգություն, շափածո պատմվածք-խրատ, սովետահայ նովել, սովետահայ վիպագրություն և այլն, և այլն:

Վերը հիշված գրականագետների դերը շատ մեծ է հայ գրականագիտական տերմինարանությունը զարգացնելու, այն միօրինակացնելու, ճշգրտելու գործում, սակայն ավելի հանգամանորեն ուղղում ենք խոսել Մանուկ Աբեղյանի տերմինաշխինական աշխատանքի մասին, քանի որ նա առաջինն էր, որն ստեղծեց հայ գրականության գիտական պատմությունը և փորձեց տարբերակել ու սահմանել բազմաթիվ գրական տեսակներ, կանոնավորել զուգահեռ տերմինների կիրառությունը:

Գրականության պատմության, տաղաչափության և գրականագիտական բազմաթիվ հարցեր շոշափող նրա ուսումնասիրությունները միաժամանակ արտացոլում են գիտնականի տերմինաշխինական աշխատանքը, որին զուգընթաց նա գործում մասնակցություն է ունեցել հայերեն մասնագիտական տերմինաշխինությանը, ճշգրտմանն ու կանոնավորմանը, նա մասնակցել է գիտության առանձին ճյուղերի տերմինների բառարաններ կազմելու և հրատարակելու գործին:

Գրականագիտությունը և հայ գրականության պատմությունը այն հիմնական բնագավառներից են, ուր բազմակողմանի իրեն ու խորությամբ դրսեւողվել են մեծանուն գիտնականի պրագտում միտքն ու ուսումնասիրվող նյութի խոր իմացությունը: Քանի որ նա ուսումնասիրության է ենթարկել տարբեր դարաշրջանների (առավելապես հին և միջին) հայ գրական զանազան տեսակներին պատկանող ստեղծագործություններ՝ գրական ուղղությունների հետ կապված, հետևաբար նրա երկերում կիրառվող գրականագիտական տերմինաբանությունն էլ ընդգրկում է բազմազան ենթաճյուղեր, ինչպես՝ գրականության տեսությանը, պարբերացմանը, համակարգմանը, գրական ուղղություններին, դպրոցներին, սեռերի, տեսակների, ոճագիտության, տաղաչափության ոլորտներին վերաբերող տերմիններ: Դրա հաստատումն են նրա բազմաթիվ աշխատանքները՝ նվիրված ժողովրդական ստեղծագործության տեսակների քննությանը. «Դավիթ և Մհեր» (1889), «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» (1899), «Ժողովրդական խաղեր» (1904), «Հայ ժողովրդական վեպը» (1908), «Շարականների մասին» (1912), «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության» (1923), «Հին գուսանական ժողովրդական երգեր» (1931), «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական

Հարաբերությունները նրանց մեջ» (1935), «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ» (1940), «Ժողովրդական խաղիկներ» (1940), «Հայոց հին գրականության պատմություն» (1944—1946) և այլն:

Սույն ուսումնասիրության առաջին մասում խոսվել է հայ գրականագիտության, հայ գրականության պատմագրության մասին, որոնք նախորդել են Մ. Աբեղյանի ուսումնասիրություններին, հետևաբար պարզ է, թե ինչպիսի դժվարությունների պետք է հանդիպեր նաև որպիսի քննադատական մոտեցում ցուցաբերեր արդեն գործառության մեջ գտնվող տերմինների նկատմամբ, եթե վերջինների կիրառությունները տակավին որոշակիորեն սահմանադատված չեն:

Մ. Աբեղյանը գրական անվանումները գործածում է ոչ միայն ողպես անվանական տերմիններ, այլև պարզաբանում է նրանց տերմինային բովանդակությունը, քննում և որոշում զուգահեռ տերմինների կիրառությունները, տարբերակում բազմիմաստ տերմինների նշանակությունները. այդ առումով նա քննության նյութ է դարձրել գրականություն. դպրություն, բանասահմանագրական տերմինները, որոնք նախորդների երկերում գործածել են որպես համանիշներ, ապա անդրադարձել է անզիր, բանավոր, բերանացի գրականություն անվանումներին և գործածել բանահյուսություն տերմինը, այդ առիթով խոսել է նաև ծոլովրդական մակդիրի մասին, որի կիրառությունը բանահյուսություն բարի հետ համարում է ավելորդ:

Մ. Աբեղյանի կողմից ճշգրտված գրականագիտական տերմիններից են նաև գրույց, վեպ, առասպել, վիպասանք, հայրեն և բազմաթիվ այլ անվանումներ, որոնց կիրառություններից նաև, պատմականորեն քննելով, ընտրում է մեկը:

Դժվար է գերագնահատել Մ. Աբեղյանի կատարած դերը նաև հայ տաղաշափության, մասնավորապես տաղաշափական տերմինների ճըշգրտուման գոռոծում: Ի մի բերելով այդ բնագավառում նախորդ շրջանում կատարված ուսումնասիրությունները, Մ. Աբեղյանը ստեղծեց ամփոփ և մնայուն մի գործ, որի հիման վրա կամ այն ուղեցույց ունենալով, հետագայում հրապարակվեցին առանձին բանաստեղծների տաղաշափությանը կամ տաղաշափության հաղոցերին նվիրված հոդվածներ ու աշխատանքներ:

Քննվող որոշ թվով տերմինների առայժմ կայունացած վիճելու պատճառով ուսումնասիրողը հաճախ հարկադրված է լինում հայերեն տերմինի կողքին նշել նաև օտար տերմինը և հակառակը, ինչպես՝ արձակ (պրոզա), հնչաբանական (ֆոնետիկական), քորեյական (մեծասար,

տրոքեր), ոտքեր, յամբական (մեծավերց) ոտքեր, դակտիլական (ստեղն) ոտքեր, քողազոտ (ամֆիբրաքոս) ոտքեր, քողաբորբ (ամֆիմակրոս) ոտքեր, դիտրոքեռու (երկմեծասար) ոտքեր, դիյամբ (երկմեծավերց) ոտքեր, դադար, հանգիստ (պառլա), ստեղն (դակտիլ), ժողովրդական վեպ (էպոս), գլխաբան (ակրոստիխ) և այլն:

Երբեմն բերվում են լատինատառ օտար համարժեքները ևս, ինչպես հորանշ (hiatus), հատած (cesure), տողանց (enjambement), ոգել, ձայնիլ (scander) և այլն:

Հիմնական տերմինների մի մասը ստուգաբանված է, իմաստաբանական քննության առնված, ինչպես՝ տաղաշափություն, տակտ, ոտք, ոփրմ, տող, ուտանակոր, վերածնություն, բան, բանի, կցուրդ, սաղմոս, կարգ, կանոն, շարական, շարակեոց, դարձ, կրկնակ և այլն:

Մ. Աբեղյանի դերը մեծ է հայ գրականագիտական տերմինաշխինության գործում նաև այն պատճառով, որ նա գիտական բնույթ տվեց մինչ այդ գործառության մեջ եղած մի շարք անվանումների: Նա համակարգեց դրանք, պարզաբանելով և ապա սահմանելով գրականագիտական բազմաթիվ հասկացություններ: Նա հստակություն մտցրեց բազմաթիվ գրականագիտական տերմինների արտահայտած իրակության, նրա ենթատեսակների իմաստային նրբերանգների սահմանումների մեջ:

Գրականության տեսության ուսումնասիրման ասպարեզում թարմ, նոր խոսք է ակադեմիկոս Էդ. Մ. Զրբաշյանի «Գրականության տեսություն» ձեռնարկը՝ նախատեսված բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և գրականության ուսուցիչների համար, որն արդեն ունեցել է հինգ հրատարակություն:

Մարգսիստական-լենինյան գաղափարախոսության դիրքերից քննելով գրականագիտական հարցերը, հեղինակը կատարել է գրականագիտության գիտական պարբերացումը, համակարգումը: Արվեստը և տեսակներից մեկը հանդիսացող գրականությունը դիտվում է որպես հասարակական գիտակցության ձև: Գիտության ժամանակակից մակարդակով ներկայացվում են գրականագիտությունը իր բաժիններով, գրականության տեսության բնույթն ու խնդիրները, խոսվում է գրականության ժողովրդայնության, կուսակցականության, հասարակական նշանակության մասին: Բազմաթիվ հարցեր, հայ գրականագիտության մեջ, առաջին անգամ են արծարծվում:

Գրական տեսակների անվանումներ հանդիպում են հայ գպրոլիցան տակավին առաջին իսկ երկերում, ուստի հայ գրականագիտական տերմինների կիրառումը, ապա և նորերի կերտումը վերաբերում են հին ժամանակներին:

Անցած տասնհինգ դարերի ընթացքում ձևավորվել ու զարդացել են Հայ գրականագիտական միտքը, նրա արտահայտման միջոցները՝ տերմինները. Հետևաբար Հայ գրականագիտական տերմինաբանությունը միատարր չէ, ժամանակի ընթացքում նրա կազմում առաջացել են տարբեր շերտեր:

Գրականագիտական տերմինաբանության մեջ ժամանակագրական առումով կարելի է տարրերակել ավանդական և ժամանակակից շերտեր:

Ավանդական, այսինքն ավանդաբար մեղ հասած գրականագիտական տերմինները, սկսած V դարից, կիրառվել են և զանազան փոփոխությունների ենթարկվել: Տարբեր ժամանակաշրջաններում, զարգացման տարրեր փուլերում գրականագիտության մեջ առաջացել են նոր հոսանքներ, նորանոր երևույթներ, որոնք անհրաժեշտաբար արտացոլվել են տերմինաբանության համակարգում, առաջացնելով համապատասխան շերտեր:

Նկատելի է, որ ավանդական տերմինների հնագույն շերտը կազմում են ժողովրդական ստեղծագործության, ինչպես կոչում էին հները՝ բանավոր գրականության տեսակների անվանումները, որոնց մեջ մասը գործածական է մեր օրերում, ինչպես օրինակ՝ անեծք, առասպել, առակ, ասացված, ավանդություն, արձակ, բանաստեղծ, երգ, գրույց, լալյուն, կատակերգություն, մաերապատում, նմանություն, ողբ, ոճ, շափ, պատկեր, պատմություն, պատումն, վեպ, վիպասան և այլն:

Ապա՝ գրավոր և թարգմանական գրականությանը վերաբերող հետեւյալ տերմինները՝ գրիչ, գրչություն, դպրություն, երգարան, քարզմանություն, մատենագրություն, շարագրություն, ներռողական, ոլորեցություն, վերնագիր և այլն:

Այսուհետեւ՝ ավանդական տերմինների շարքը համալրվում է հետագա դարերում կատարված թարգմանություններից ներմուծված հակացությունների անվանումներով, ինչպես օրինակ՝ Խոգեներգություն, նոխագերգություն, ֆերող և այլն:

Նոր շրջանում, XIX դարի վերջին և, հատկապես, XX դարի սկզբում՝ եվրոպական գրականության ու գրականագիտության զարգացման նոր փուլում, հարստանում է նաև հայ գրականագիտական տերմինարանու-

թյունը՝ փոխառված գրական իրակությունների անվանումներով, ինչպես օրինակ՝ աճելզոտ, քելետրիստիկա, դրամատուրգ, էլեկտրիկա, լեգֆիա, լեգինա(ա), լիրիկ, կոմեդիա, հումոր, մելոդրամ(ա), մոտիվ, մուսա, պիես(ա), պահմ(ա), պոետ, պոեզիա, պրոզա, սատիրա, ստիլիստիկա, ռեալիզմ, ռեալիստ, ռոմանտիկ և այլն:

Մեծ թիվ են կազմում նաև նոր գրական տեսակների ու հասկացությունների հայերեն՝ անվանումները, ինչպես օրինակ՝ ակնարկ, աճետականուրյուն, արարված, գլխավոր ներոս, գրեծող անձինք, գործողություն, երգիծաբանություն, քատերգություն, մանկական երգեր, մեճախոսություն, վեպիկ, պատմվածք, քատերգակ, նորավեպ, նորավիպագիր, վիպագրողամի, վիպասանումի, ցայցերգ, բնարերգու և այլն:

Ավանդական տերմինների որոշ մասը հետագայում ենթարկվել է իմաստափոխության կամ դուրս եկել գործառությունից: Այսպես, վեպ հին տերմինը սկզբնական շրջանում ուներ բանավոր ստեղծագործության տեսակի նշանակություն, որ պահպանվել է մինչև այսօր (բանագիտության մեջ), սակայն անցյալ դարում՝ եվրոպական վեպի զարգացման հետևանքով իր որոշ գծերի նմանությամբ այն ստացավ նոր իմաստ և կիրառվում է որպես գեղարվեստական վեպի (роман) անվանում: Նոխագերգություն տերմինի, որը բառացի թարգմանությունն է հունարեն tragoidia բառի, ներքին պատճառաբանությունը հետզհետե թուզանալով այլևս անհասկանալի դարձավ և փոխարինվեց ողբերգություն տերմինով:

Սաել բայց ժամանակակից գրական լիզվում չի գործածվում նախկին «պատմել» նշանակությամբ, սակայն նրա հիմքից կազմված ասացող տերմինը գործածական է բանագիտության մեջ, իսկ խոսակցական լեզվում կենսունակ են այդ արմատով կազմված հարադիրները՝ ներքիարան ասել, երգ ասել և այլն:

Հայ գրականագիտական տերմինաբանության մյուս շերտը՝ ժամանակակից տերմիններն են: Այս շերտի առաջացումը և հարստացումը կապված է գրականության և գրականագիտության նոր, սովորական փուլի, մասնավորապես մարքս-լինինյան գաղափարախոսության հետ:

Ժամանակակից գրականագիտական տերմինաբանությանը առանձնահատուկ է հոսանքների, ուղղությունների, ստեղծագործական մեթոդների, գրական նոր տեսակների, կինոյի ու հեռուստատեսության հետ կապված նոր գրական իրակությունների անվանումների, ըստ անհրաժեշտության փոխառում և օտար տերմինների հայերեն համարժեքներ կերտելու հակում:

Էպոպե(ա), քեմա, կոմեդիա, մետամորֆոզ, կլասիկներ, կոսմոպոլիտ, կոսմոպոլիտիզմ, միստիցիզմ, պասկվիլ-վաղեիլ, սենաֆիմենտալիզմ, սիմվոլիստ, սյուժե(ա), վոդեիլ, տրագեդիա, ռեցենզիա, ռեցեն-

գենա, ֆելիետոն, ֆելիետոնիստ և այլ փոխառությունների գործառության հետ զուգընթացաբար դրանք թարգմանվել են, կերտվել են հայերեն համարժեքները, ինչպես օրինակ՝ ծանոթություն (կոմենտարներ), դասական գրադարձ (կլասիկներ), կերպարանափոխություն (մետամորֆոց), կատակերգություն (կոմեդիա), կումոպոլիտություն (կումոպոլիտիզմ), մաերավեպ, զիշերեգ, բնարերգակ և այլն: Բերված հայերեն տերմինները դուրս են մղել սկզբնական շրջանում զուգահեռաբար գործառող օտար տերմինները: Սակայն երբեմնի հայերեն նորաբանությունների մի մասը շդիմանալով ժամանակի քննությանը, դուրս մնաց գործառության ոլորտից՝ տեղը զիշելով օտարաբանություններին, ինչպես օրինակ՝ դպրոցական—սխոլաստիկ, բարի ծիծաղ—հումոր, նյութ—բեմա, իրապաշտ—ուսալիստ, խորհրդապաշտ—սիմվոլիստ և այլն: Վերջին նյութը, իրապաշտ, խորհրդապաշտ տերմինները թեև այժմ հանդիպում են գրականության մեջ, սակայն վերջնականապես տերմինացված չեն:

Վերջին տաս-քսան տարիների ընթացքում գիտության և արվեստների զարգացման համապատասխան գիտական և թե գրականագիտական տերմինների համակարգը հարստացավ այնպիսի տերմիններով, ինչպիսիք են՝ կինոգրություն, կինոդրամատուրգ, կինոդրամատուրգիա, կինոնովել, կինոպատմվածք, կինոսցենար, կինովեպ, ուաղինապիես և այլն:

Ժամանակակից գրականագիտական տերմինաբանությանը յուրահատուկ է նաև հարակից գիտությունների տերմինային համակարգից փոխառություն կատարելը: Այս երեսույթը կար նաև հնում: Ճկավորվող գրականագիտական տերմինային համակարգը լրացվում է ճարտասանությունից, քերականությունից, փիլիսոփայությունից, իսկ նոր ժամանակներում շարունակելով փիլիսոփայությունից, լեզվաբանությունից, նաև գեղագիտությունից, ապա տեխնիկայի, կիբեռնետիկայի զարգացման հետ կապված նաև բնական ու ճշգրիտ գիտություններից փոխառված հասկացություններով ու տերմիններով, ինչպես օրինակ՝ իմպրեսիոնիզմ, իմաժինիզմ, մոդեռնիզմ, նեոռոմանատիզմ, կոդա և այլն:

Ժամանակակից հայ գրականագիտական տերմինաբանության մեջ կարելի է առանձնացնել շերտեր՝ հաշվի առնելով մի այլ հանգամանք, թե հայոց լեզվի դարավոր գոյության ընթացքում, նրա զարգացման տարրեր փուլերում ի՞նչ տեղաշարժեր են տեղի ունեցել գրականագիտական տերմինների համակարգում:

Այսպես, առաջինը ընդհանուր հայերեն գրական տերմինների շերտն է, որը գործառության մեջ է հնագույն ժամանակներից, հայերենի բոլոր փուլերում, օրինակ՝ առած, առակ, առասպել և այլն:

Երկրորդ շերտը գրաբարից ավանդված տերմիններն են, որոնց մի

մասը գործառության մեջ է, կենսունակ են և նրանց արտահայտած գրական հասկացություններն ու իրակությունները, ինչպես՝ բանաստեղծ, երգ, կատակերգություն և այլն, իսկ մի մասը ներկայումս ունի պատմական նշանակություն, ինչպես օրինակ՝ քվելյաց երգեր, վեպ, վիպասաներ (հին հմաստով), գողրան երգեր, բուլը, վարժագրություն և այլն:

Երրորդ շերտը միջին դարերին հասունական տեսակների անվանումներն են, ինչպես օրինակ՝ բանե, խաղ, խաղիկ, հայրեն(ներ), լալոն և այլն:

Դրականագիտական տերմինաբանության մեջ գործածական են արևմտահայերեն գեղերգ, բատերգակ, նեղնարան և այլ բառ-տերմիններ:

Բարբառային բառ-տերմինները հասկանալի պատճառներով շատ շեն, այս շերտում իրենց զգալ են տալիս հարեան ժողովուրդներից անցած գրական, առավելապես բանավոր գրականությանը բնորոշ տեսակների օտար անվանումներ, ինչպես օրինակ՝ մանիներ, աշուու, բայարի և այլն:

Հինգերորդ շերտը կազմում են նորակազմությունները. այս շերտը զարգացման հեռանկարներ ունի և հարստանում է հայոց լեզվի ներքին ու արտաքին միջոցներով՝ սեփական բառակազմությամբ և նոր տերմինների փոխառությամբ:

Կրկնությունից խուսափելու նպատակով սեփական բառակազմական միջոցներով տերմինակերտման հարցը այստեղ շենք քննի, այդ մասին հանգամանորեն կիսումի գրականագիտական տերմինների բառակազմական վերլուծության բաժնում:

Օտար բառերի փոխառումը բնորոշ է հայ գրականագիտական տերմինաբանության զարգացման բոլոր փուլերին: Սակայն պետք է տարբերակել հնագույն և նորագույն փոխառույթ տերմինները:

Հայ գրականության ձևավորման փուլին բնորոշ է հին լեզուների՝ հունարենի և լատիներենի գրական իրակությունների, հասկացությունների անվանումների թարգմանության կամ պատճենման միջոցով հայրեն տերմիններ կերտելու:

Միջին դարերում պատմական, սոցիալական գործոնների հետևանքով արևելյան հարեան և նվաճող ժողովուրդների գրական անվանումներ ներթափանցեցին հայ գրականագիտական տերմինաբանության համակարգը, ինչպես օրինակ՝ արաբերենից՝ բեյր, գագել, տավթար >դավթար, կաֆա, մուխամմազ, ուրայի (հոգն. ուրայաթ), սուրան, պարսկերենից՝ դաստան, զյուրեյր, թուրքերենից՝ աշուու, աղութեղարենից՝ բայարի և այլն:

Գրականության մեջ հանդիպում են նաև գասիտե, զյոզալլամա, զին-շիլլամա, բասիլի, բաղլալա, դազել, դիվանի արևելյան ժողովուրդների գրական, երաժշտական, տաղաշափական տեսակների անվանումներ, որոնք ունեն սոսկ անվանական, ճանաշողական նշանակություն և չեն մտնում հայ գրականագիտական տերմինալին համակարգի մեջ:

Նոր շրջանում փոխառություններն առավելապես ելքոպական լեզուներից են, վերջին շրջանում այդ իրականացվում է ոռուաց լեզվի միջնորդությամբ, ինչպես օրինակ՝ ալեգորիա, ալիտերացիա, անախոնիզմ, անոտացիա, բիբլիոգրաֆիա, գրադացիա, դրամատուրգիա, էլեգիա, էպիգրաֆ, էպոպեա, էսթետիկա, իոֆիլիա, իմպրովիզացիա, ինսցենիրովկա, ինտերմեդիա, իրոնիա, լիրիկա, միֆոլոգիա, մոնոգրաֆիա, պաուլա, պերիպետիա, պոեզիա, պրոզ, սիտուացիա, ստիլիզացիա, տրիլոգիա, ցիտատ, ֆարովա և այլն:

Գոհոնակությամբ պետք է նշել, որ այս օտար բառերի շարքը, որ քաղաքած է «Գրականագիտական բառարանից» (Երևան, 1980 թ.), արդեն զգալիորեն բեռնաթափվել է, և օտար տերմինների մեծ մասը իր տեղը դիմել է հայերեն համարժեքներին: Բառարանում դրանց տեղ է տրվել պարզապես «ընթերցողին կողմնորոշելու և բառերի ծագումը բացատրելու համար»:

Սովետական Միության ժողովուրդների լեզուներից փոխառվում հն գրականության, բանահյուսության տեսակների անվանումներ, ինչպես օրինակ՝ բայան կամ բոյան, բիլինա, շաստուկա (ռուսերեն), ակին (դազախ.), բախչի (թուրքմեն., ուզբեկ.), կորզար (ուկրաիներեն) և այլն:

Գրականագիտական տերմինների համակարգում թեև առանձին նը-կատելի շերտ չեն կազմում, սակայն կիրառության մեջ եղել են նաև հապավումներ, որոնցից հիշենք մի քանիսը, օրինակ՝ Ռապպ—Պրոլետարական գրողների ոռուաստանյան ասոցիացիա (Российская ассоциация пролетарских писателей), որից կազմվել է հայերեն ռապպականներ անվանումը, այդ «ասոցիացիայի անդամներ» նշանակությամբ: Այնուհետև կազմվեցին հայերեն պրոլետարական կուլտուրա և այլ հապավումներ:

Հապավումները գրականագիտական տերմինաբանության մեջ կենսում չեն և շատ աննշան թիվ են կազմում:

Գիտական տերմինաբանությունը բառակազմության տեսանկյունից դիտելիս նկատելի է բառակազմական միջոցների և կաղապարների բազմազանությունը ընդհանուր լեզվի համեմատությամբ։ Սակայն յուրաքանչյուր լեզու ունի տերմինակերտման իր յուրահատուկ աղբյուրներն ու միջոցները, որոնք պայմանավորված են կրող ժողովրդի պատմական և լեզվի գարգացման գործուներով։

Հայ գրականագիտական տերմինակերտման աղբյուրները հիմնականում երկուան են՝ ներքին և արտաքին։

1. Տերմինակերտման ներքին աղբյուրները հայոց լեզվի բառագանձի շերտերն են և բառակազմական միջոցները։

Գրականագիտական տերմինաբանությունը ձևավորվել ու զարգացել է գրաբարի, միջին հայերենի և, հատկապես, արդի հայերենի բառապաշարի հիմքի վրա։ Տերմինակերտման մեծ հնարավորություններ է ընձեռում ժամանակակից հայերենն իր ձևուն բառակազմությամբ։

Գրականագիտական տերմինների համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ տերմինակերտումը կատարվում է բառախմաստարանական, ձևաբանական և բառաշարահյուսական միջոցներով։

ա) բառախմաստաբանական միջոցը հնարավորություն է տալիս նոր տերմիններ կերտել ընդհանուր լեզվի բառերը տերմինացնելու ճանապարհով։ այս դեպքում ընդհանուր լեզվի սովորական բառը տերմինացվելով ստանում է որոշակի իմաստ և մտնում գրականագիտական տերմինային համակարգի մեջ։ Միաժամանակ հայոց լեզվի համակարգում նրա հիմնական իմաստին ավելանում է նոր՝ տերմինային նշանակություն։ Այս ուղիով են առաջացել մի շարք տերմիններ, ինչպես օրինակ՝ ակնարկ, անդամ, աստիճանավորում, արձակ, բանասեփուրյուն, դադար, գրույց, բուլք, հանգույց, ողբ, ոտք, տուն, փոքրացում և այլն։

Սովորական բառերի տերմինացումը կատարվում է իմաստափոխության տարրեր ձևերով։ տեղի է ունենում նշանակության նեղացում կամ ընդլայնում։

Առաջին դեպքում ընդհանուր գործածական բառը տերմինացվում է, իսկ երկրորդ դեպքում՝ գրականագիտական տերմինը ապատերմինացվում է։

Տերմինացվում են ոչ միայն հայերեն ընդհանուր բառերը, այլև հայերեն և օտար հատուկ անունները, առավելապես անձնանունները,

ինչպես օրինակ՝ բայցընիզմ, նոմերական ոտանավոր, օնեգինյան տուն և այլն:

բ) Զեարանական միջոցներից է ածանցումը, որը բավականին կեն-սունակ է նաև գրականագիտական տերմիններում մեջ:

Գրականագիտական տերմինների կերտման գործում հայոց լեզվի ու բոլոր ածանցներն են կիրառվում և ո՞չ հավասարապես:

Ինչպես հայոց լեզվում, այնպես էլ գրականագիտական տերմինա-բանության մեջ ածանցումը իրականացվում է նախածանցների և վերջա-ծանցների միջոցով:

Նախածանցներից կենսունակ են ան-, արտ-, բաղ-, բաց-, ենք-, ընդ-, հակ-, համ-, մակ-, ներ-, շար-, պար-, սա-, վեր-, տար-, փոխ-:

Վերջածանցներից գրականագիտական տերմիննակերտման մեջ ավելի կենսունակ են հետևյալները.

գոյականակերտ -ած, -աված(ի), -ածու, -ակ, -անք, -ար, -արան, -իշ, -յակ, -յուն, -ող, -ոն, -ուկ, -ույր, -ույկ, -ույց, -ունչ:

Առավել կենսունակ են -ալի, -ային, -ական, -իկ, -յա, -յալ, -յան, -ավոր, -ուն վերջածանցները:

Օգտագործվում են նաև այլ վերջածանցներ, որոնք բերվածների համեմատությամբ չնշին թվով տերմիններ են կազմում<sup>Յ1</sup>:

գ) Բառաշաբանուական միջոցով կերտվում են գրականագիտա-կան բարդ տերմինները, տերմինային բառակապակցությունները և հա-պալումները:

Հայոց լեզվի առավելություններից ու յուրահատկություններից է բառաբարդումը, որը հնարավորություն է տալիս այլ լեզուների՝ բառա-կապակցություններով արտահայտված բազմաթիվ տերմիններ հայերեն թարգմանել մեկ բարդ բառով, ինչպես օրինակ՝ առակագիրք, բառապա-շար, բարդունյա (ոտանավոր), բարոյավեպիկ, գրաֆնեադատուրյուն, սիրերգ, երկաշար, վիպաշար, նորվածաշար և այլն:

Որոշ թվով գրականագիտական տերմիններ, որոնք ոռուակենում չեն թարգմանվում, օտար փոխառություն են, հայոց լեզվի բառակազմական ճկունության շնորհիվ թարգմանվում են, ինչպես՝ բազմաշաղկապուրյուն (полисиндекон), բանագործություն (плагиат), եռերգություն, եռա-գորույուն (трилогия), ծածկանուն (псевдоним), կատակերգություն (комедия) և այլն:

Գրականագիտական բարդ բառ-տերմինների գերակշռող մասը բաղ-կացած է երկու արմատ-բաղադրիչներից, որոնք ընդունում են նաև ա-ծանցներ: Գրականագիտական բարդ տերմինները ածանցվում են թե՛ նախածանցներով և թե՛ վերջածանցներով, որոնք հանդիս են գալիս նաև միաժամանակ:

Եռարմատ բարդ տերմինները ավելի պակաս թիվ են կազմում, իսկ բազմարմատ բարդ տերմիններ չեն հանդիպում:

Տերմին-բառակապակցությունները բաղկացած են այնպիսի տերմիններից, որոնք իրենց հերթին կարող են կազմել այլ բառակապակցություններ. նրանք երկողմանի կապի մեջ են մտնում այլ բառերի, տերմինների հետ, ինչպես՝ գեղարվեստական գրականություն, գեղարվեստական ակնարկ և սովետահայ գրականություն:

Տերմինային բառակապակցություններում բառերը հանդես են գալիս որոշի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի փոխկապակցությամբ, ինչպես՝ մանկական գրականություն և գրականության շրջանաբաժնում:

Տերմինային բառակապակցությունների կազմում հիմնական իմաստը արտահայտում է որոշյալի կամ հատկացյալի գործառությամբ գոյական անունով արտահայտված տերմինը, օրինակ՝ ազատ բանաստեղծություն, ազգային բանաստեղծություն, աշխարհիկ բանաստեղծություն, առաջայտություն, կոմիզմ, բառավերջի հանգեր, բնուրյան երգեր, գրականության տեսություն և այլն:

Այս դեպքում գրականագիտական տերմինային բառակապակցությունները տարրերակվում են.

ա) տերմինային բառակապակցություններ, որոնց բաղադրիչները տերմիններ են կամ, ավելի հաճախ, տերմինից կազմված ածական որոշիչներ, ինչպես օրինակ՝ գուսանական երգ, գիտաֆանտաստիկական վեպ, դիցարանական առասպել, երկամանակ տակտ, երկավանկ հանգ, առակաց գիրք, առակի ոտանակոր, առղամիջի հանգեր և այլն.

բ) տերմինային բառակապակցություններ, որոնց կազմում որոշյալը տերմին է, իսկ որոշիչը՝ համընդհանուր լեզվի բառ, ինչպես օրինակ՝ զլասավոր հերոս, բացասական կերպար, ընկենող ոիքմ, խոհական մանրապատում, հակաֆաշիստական դրամատուրգիա և այլն.

գ) տերմինային բառակապակցություններ, որոնց կազմում որոշիչը բաղադրիչը տերմին է կամ տերմինից կազմված ածական, իսկ որոշյալը՝ համընդհանուր լեզվի բառ է, ինչպես օրինակ՝ արտահայտչական միջոցներ, բազմազարկապ խոսք, թերավանկ անդամներ, հանգակից բառեր, հնգավանկ անդամներ և այլն:

Նորագույն հապավումները հայոց լեզվի սովետական փուլի յուրահատուկ բառակերտման միջոցներից են, որոնք բառակապակցությունների կրծատումներ են, ինչպես նշվել է, գրականագիտական տերմինակերտման մեջ անկենսումակ են:

Գրականագիտական տերմինային համակարգի համալրման ներքին

աղբյուրներից են գրաբարը, արևմտահայերնը, ժողովրդախոսակցական լեզուն, մասսամբ, և բարբառները:

Գրականագիտական տերմինաբանության համակարգում գրաբար բառերը հանդես են գալիս երկու ձևով.

ա) բառեր, որոնք գրաբարում գրականագիտական տերմիններ են, գրական հասկացությունների անվանումներ, ինչպես օրինակ՝ կատակերգություն, ողբերգություն, վեպ, վիպագիր և այլն:

բ) բառեր, որոնք գրաբարում ընդէանուր գործածական են, տերմինացվելով դարձել են գրականագիտական տերմինային համակարգի տարրեր, ինչպես օրինակ՝ ամանակ, դադար, խաղ, խաղիկ և այլն:

Արևմտահայերնից գրականագիտական տերմինաբանության համակարգը հարստացրել են այնպիսի տերմիններ ու տերմինացված բառեր, ինչպիսիք են՝ թերոն, քատերախաղ, նորավեպ և այլն:

Բարբառներից և ժողովրդախոսակցական լեզվի բառերից տերմինացվել և գրականագիտական տերմինների անվանակարգն են մտել ժողովրդական բանահյուսության տեսակների անվանումներ, ինչպես օրինակ՝ հարցրան, ջանգուլում, նորովել, տանտան, անտոնի և այլն:

2. Տերմինակերպման արտաքին աղբյուրները օտար փոխառություններն են: Հայոց լեզուն գոյության, զարգացման պատմության ընթացքում միշտ էլ դիմել է օտար փոխառությունների նախագրային և հետագա շրջաններում:

Գրավոր գրականության ստեղծման օրից հայ թարգմանիչներն ու պատմիչները, մտավորականները հունարեն աղբյուրներից թարգմանություն կատարելիս հայերնը համալրել են հունարեն բառերով, հետագյում, պատմական իրադարձությունների բերումով՝ պարսկերնից, արարերենից, թուրքերնից և եկրոպական ժողովուրդների լեզուներից: Սովետական շրջանում հայոց լեզվի փոխառությունները կատարվում են ոռուերենից կամ ոռուերենի միջնորդությամբ այլ լեզուներից:

Գրականագիտական տերմինները դիտարկելիս նկատելի է, որ փոխառությունները միասեռ չեն, օտար տերմինները փոխառվում են տարբեր ձևով, ամբողջությամբ՝ անփոփոխ և մասնակիորեն՝ փոփոխված:

Ուղղակի փոխառությունների դեպքում օտար տերմինը փոխ է առնը-վում հասկացության հետ, օրինակ՝ կեղիս, ուրբայի, բայարի, ոռման-տիզմ, նատուրալիզմ, սիմվոլիզմ և այլն:

Սակայն հայերնը հակում ունի օտար տերմինները սեփական համարժեքներով փոխարինելու և հետագայում բառակազմական հնարավոր միջոցներով կերտում է հայերեն տերմիններ, ինչպես՝ նատուրալիզմ—բնապաշտություն, սիմվոլիզմ—խորեղապաշտություն և այլն:

Մի որոշ ժամանակաշրջանում օտար և հայերեն տերմինները գործածվում են զուգահեռաբար. ի վերջո հաղթանակում է մեկը, որը ավելի ճշգրտուրեն է արտահայտում համապատասխան հասկացությունը, ունի բառակազմական մեծ հնարավորություն, բարեհնչող է և դյուրարտասանելի:

Մասնակի փոխառությունների դեպքում փոխառու լեզուն ընդունում է օտար բառի արմատը և ածանցում կամ բառաբարդում սեփական ածանցներով կամ արմատներով, մյուս դեպքում՝ բնիկ արմատները ածանցում կամ բառաբարդում է օտար լեզվի ածանցներով կամ արմատներով:

Այս առումով՝ գրականագիտական փոխառյալ տերմինների յուրացումը կատարվում է հետևյալ ուղիներով.

ա) հնչյունական աեսակետից գրականագիտական տերմինները շատ մեծ փոփոխությունների շեն ենթարկվում, քանի որ նրանք անցնում են գրավոր աղբյուրներից: Բերենք մի քանի օրինակ.

Փրանս. montage, ուսու. МОНТАЖ, հայերեն մոնտաժ

Փրանս. motif, ուսու. МОТИВ, հայերեն մոտիվ

Հուն. ὄδε, ուսու. ода, հայ. օդա (ներբող)

Հուն. tragöidia, ուսու. трагедия, հայ. տրագեդիա (ողբերգություն)

Հուն. hyperbole, ուսու. гипербола, հայ. հիպերբոլ(ա) (չափազանցություն)

Հուն. pathos, ուսու. пафос, հայ. պաթոս և ալլն.

բ) ձևաբանական աեսակետից գրականագիտական փոխառյալ տերմինները ենթարկվում են հայերենի ձևաբանական օրենքներին: Այս դեպքում՝ օտար տերմինը կրում է ոչ միայն ձևաբանական փոփոխություն, այլև կորցնում է քերականական սեռի կարգը՝ համապատասխան փոխառու և փոխառու լեզուների առանձնահատկությունների:

Այսպես՝ հուն. poiēsis, ֆրանս. poésie, ուսու. поэзия ֆրանսերենում և ուսաերենում իգական սեռի բառ է, հայերենը փոխ է առել ուսաերենից պոեզիա ձևով, սակայն իգական սեռի վերջավորությունը հայերենում չի գիտակցվում գոյականի սեռի կարգի բացակայության պատճառով, իսկ որոշ դեպքերում այդ վերջավորությունը նույնիսկ ընկնում է, ինչպես օրինակ՝

ֆր. poéme, ուսու. поэма, հայ. պոեմա>պոեմ

ֆր. légende, ուսու. легенда, հայ. լեգենդա>լեգենդ

ֆր. ballade, ոռւս. баллада, հայ. բալլադա >բալլադ և այլն:

Մյուս գեղքում՝ օտար արմատը ածանցվում է հայերեն ածանցներով, ինչպես օրինակ՝

ֆրանս. décadentisme, ոռւս. декадентство, հայ. գեղադեմություն

ֆր. dramatique, ոռւս. драматический, հայ. դրամատիկական (թատերգական)

ֆր. dramaturgie, ոռւս. драматургия, հայ. դրամատուրգիա և այլն:

Բառապատճենումները գրականագիտական տերմինային համակարգի հարստացման հիմնական միջոցներից են: Բառապատճենումներ կատարել են հնում՝ հունական, լատինական և այլ լեզուների բառերը բառացիորեն թարգմանելու միջոցով, իսկ այժմ հիմնականում պատճենվում են ոռւսերեն տերմինները:

Գրականագիտական տերմինային բառապատճենումները կատարվում են հետևյալ ձևով.

ա) օտար բարդ կամ ածանցյալ բառի բաղադրիչները թարգմանվում են հայերեն, օրինակ՝ անոնիմ—անանուն, գրադաշիա—աստիճանավորում, պրովինցիալիզմներ—գավառաբանություններ, էլեպսիս—բացթում, կոլորիտ—գունավորում, պատճառ—դադար, դիալոգ—երկխոսություն, տրիլոգիա—եռապատում, լետոպիսեց—տարեգիր, լիրիկա—քնարերգություն, կովմինացիա—գագաթնակետ, ցեղուրա—հատած, նեկրոլոգ—մահախոսական, մոնուոգ—մենախոսություն, պրոլոգ—նախերգանք, նեռլոգիզմ—նորաբանություն, տավտոլոգիա—նույնաբանություն, էպիլոգ—վերջաբան և այլն.

բ) օտար բառը պատճենվում է մասնակիորեն, թարգմանվում է մեկ բաղադրիչը, իսկ մյուսը փոխառվում է, ինչպես օրինակ՝ դրամատիկա—նախատիպ, տեքстологія—տեքстотеорія, կиноповесть—կінонаціональності, кинороман—кінонаціональності, терминология—տերմінологія և այլն:

Ավելի հաճախական է բառապատճենման առաջին տեսակը ինչպես հայոց լեզվի, այնպես էլ գրականագիտական տերմինային ընդհանուր համակարգում:

Պատճենվում են ոչ միայն բառերը, այլև տերմինային բառակապակցությունները, ինչպես օրինակ՝ авторская речь—հեղինակալին խոռոք, античная метрика—անտիկ տաղաչափություն, литературные взаимодействия—драматика в философии и гуманитарии, литературная критика—драматика в философии и гуманитарии, положительный герой—դրական հերոս, художественная литература—գեղարվեստական գրականություն և այլն:

Հայոց լեզվի բառակերտման ճկունության շնորհիվ հաճախ օտար բառակապակցությունները պատճենվում են մեկ բառով, ինչպես օրինակ՝ վարձիչների համար պատճենարժան գործությունները, լիտերատուրայի կրիտիկա—գրաքննադատություն, ուղարկություն և այլն:

### ԹԱՅՄԻՄԱՍՅՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայ գրականագիտական տերմինաբանությունը հանդիսանալով համընդհանուր լեզվի (հայերենի) համակարգի ենթահամակարգերից մեկը, իր մեջ կրում է ընդհանուր լեզվի որոշ առանձնահատկություններ, որոնցից են բազմիմաստությունը, համանշությունը, համանությունը և այլն:

Տերմինը բնորոշելիս՝ առաջին հերթին նշվում է նրա մենիմաստությունը, որն ամենացանկալին է տերմինաբանության մեջ, սակայն կան տերմինների բազմիմաստության բազմաթիվ դեպքեր:

Մենիմաստությունը ապահովում է տերմինի հստակ ըմբռնումը և անսխալ կիրառությունը: Հաճախակի են արդարացի զայրուցիքի արտահայտությունները մամուլում և գիտական գրականության մեջ, ուր քննադատություն կա նաև տերմինների բազմիմաստության երևուցիք վերաբերյալ: Այդ հարցը մտահոգություն է պատճառում թե՛ լեզվաբաններին և թե՛ տվյալ բնագավառի, մասնագիտության ոլորտի ներկայացուցիչներին: Սակայն տերմինների բազմիմաստությունը հաճախ հանդիպող երևուցիք է, ուստի ոմանք նույնիսկ հանդորժողություն են հանդիսանալու բառում նրա նկատմամբ, պատճառաբանելով՝ որ բազմիմաստությունը սովորաբար հանդիսանուած է գալիս միննույն հնչումային կազմի ունեցող բառի տարբեր գիտաճյուղային տերմինային համակարգերում, հետևաբար մեկ համակարգում առանձնապես շփոթության առիթ չի տալիս: Բազմիմաստ բառը հաճախ, որպես բաղադրիչ, հանդիսանուած է գալիս տերմինային բառակապակցության մեջ և ձեռք է բերում կոնկրետություն՝ հուզելով, թե ո՞ր տերմինային համակարգին է պատկանում: Օրինակ՝ ոտք բառը բանաստեղծական ոտք կամ ոտանավորի ոտք կապակցությունների մեջ կազմախոսության բնագավառից անցնում է տաղաշափության բնագավառը և երկվանկ ոտք, եռավանկ ոտք, քառավանկ ոտք, հնգավանկ ոտք, բառի ոտք տերմինային կապակցություններով տարբերակում բանաստեղծական ոտքի ենթատեսակները: Տամ լեզվի համընդհանուր գործածական բառը բանաստեղծական տուն կապակցության մեջ կազմում է նոր տերմինային բառակապակցություն և մտնում է գրականագիտական տերմինաբանության համակարգի տաղաշափության տերմինային ենթահամակարգի մեջ, իսկ օնեգինյան տուն:

կապակցության մեջ ավելի նեղանում է և նշանակում բանաստեղծական տան մեկ տեսակը:

Այսպիսով, թեև այս կամ այն կերպ բազմիմաստ տերմինները այսուհենայնիվ հասկացվում են, սակայն ամենահիդեալական վիճակը, ինչ խոսք, տերմինի մենիմաստ լինելն է: Այդ գործին օգնելու նպատակով քննենք բազմիմաստության դեպքերը և նրանց առաջացման պատճառները հայ գրականագիտական տերմինաբանության մեջ:

Հայ գրականագիտական տերմինների բազմիմաստությունն առաջացել է հետեւյալ պատճառներով: Հայոց լեզվի բառակազմի համագործածական բառը ստանում է ևս մեկ նշանակություն, որը կատարվում է երկու ձևով.

### 1. տեղի է ունենում բառիմաստի նեղացում, ինչպես.

Անուն—Ընդհանուր, սովորական իմաստն է՝ «հատուկ անուն», ապա «որևէ առարկայի, երևույթի անվանումը»: Այս իմաստով հանդիպում է նաև գրականագիտական գրականության մեջ, օրինակ՝ որպես ստեղծագործողի, հեղինակի ազգանուն: «Իր անունը կրող այսպիսի գրության» (ԶՀԴՊ, 177), կամ՝ որպես գրական ժանրի, տեսակի անվանում: «Նվագ, ցուցք, մրմբնջք և այլն՝ ուրիշ անուններով երգերը, որոնք հայտնի քնարերգության տեսակներին են պատկանում» (ՍՊ, 156):

Սակայն գրականագիտության մեջ այն նաև նեղանում է, մասնավորվում որպես ստեղծագործության վերնագիր, օրինակ՝ «Անունը կրող գրվածք» (ԶՀԴՊ, 562 և 140):

Ասացվածք—Նախապես ասացված ձևով նշանակել է ընդհանրապես «ասված խոսք, ճառ», ապա՝ խոսքի մի տեսակը, որպես գրականագիտական տերմին՝ ժողովրդական բանավոր ստեղծագործության տեսակներից մեկի անվանում, օրինակ՝ «Բաղիադյանի վեպը համեմված է ժողովրդական ասացվածքներով, համեմատություններով և երգերով» (ՀՆԳՊ, 1, 347):

Ավանդություն—Ավանդաբար անցած, ավանդված կարգ, դավանանք և այլն, ավանդույթ, ինչպես՝ «Որքան խոր թափանցենք ժողովրդական կյանքի հնության մեջ, այնքան ավելի կը տեսնենք որ ավանդությունը՝ ինչպես վիպասանական՝ այնպես և քնարական երգերի համար մեծ նշանակություն ուներ» (ՍՊ, 157): Ապա՝ որպես «բերներերան, բանավոր պատմվող պատմություն» նույնպես ընդհանուր, շտարբերակված, օրինակ՝ «Ժողովրդական ավանդությունը կըսե թե վանքին աքլորները կը ձայնեն ճամբորդներուն» (ԱԱ, 80), իսկ հետագայում մասնավորվում է որպես գրական տեսակի անվանում, «Ժողովրդական բանահյուսության տեսակներից մեկը, փոքր ծավալի արձակ ստեղծագործություն»

(ԳԲ, 31), «Փոլկորն ունեցել է այնպիսի էպիկական ժանրեր, ինչպես... առասպել, ավանդություն, լեգենդ» (ԳԺ, 42):

Բնավորություն—«Մարդու հոգեկան բոլոր հատկությունների ամբողջությունը, խառնվածքը» կամ՝ «ընդհանրապես՝ հատկություն, առանձնահատկություն, բնույթ»։ ընդհանուր իմաստը նեղացել է որպես գրական կերպար (характер), օրինակ՝ «Բնավորություն է կոչվում այն գործող անձը, որն օժտված է հատկանիշների որոշակիությամբ և իր էությունը դրսկորվում է շրջապատի հետ ունեցած կապերի մեջ» (ԳԲ, 57):

Դանձ—«Ըսկու, արծաթի թանկագին ակնեղենի ամբողջություն, ունեցվածք» ընդհանուր իմաստից է ծագում «Հոգեոր բովանդակության երկի անվանումը», օրինակ՝ «Նոցա փառաբանականներն ու գովասանքները հիներեն առաջ կամ կացուրդ, միջիններեն գաճան կամ նվազ, իսկ նորերեն երգ կամ խաղ (մանի) հորջորջեցան» (ՎՎ, Զ): Այստեղից էլ Գանձարան—գանձերի ժողովածու «Գանձարանաց և Տաղարանաց մեջ այլ և այլ երգեր և գաճեր կը գտնվին Խաչատրո անվամբ» (ԵԴ, 60):

Գլուխ—«Մարդու, կենդանու և որոշ առարկաների մաս» նշանակության նմանությամբ մասնավորվում է որպես «ստեղծագործության՝ գրքի առանձին հատված», օրինակ՝ «Նախերգանքից հետո, առաջին գըլխում, հեղինակը ընթերցողին ծանոթացնում է իր հերոսի՝ Լևոնի հետ» (ՀՆԳՊ, 2, 310):

Գործողություն—«Իրադրություն, իրադարձություն, դեպքերի ընթացք» ընդհանուր նշանակությամբ կիրառվում է նաև գրական ստեղծագործության մեջ ծավալվող իրավիճակների համար, օրինակ՝ «Մաֆֆու «Սամվել» վեպում գործողությունը ծավալվում է չորրորդ դարում» (ԳԲ, 76): Սակայն իմաստի նեղացմամբ որպես թատերական կամ գրականագիտական տերմին ավելի կիրառական է «գրամատիկական ստեղծագործության ավարտված մաս, արարված» նշանակությամբ, օրինակ՝ «Երկու գործողությամբ կատակերգություն» (ԼՄ, Բ, 116):

Գրություն—«Գրելու գործողություն, գրելու համակարգ, թուղթ, նամակ» նշանակություններին զուգահեռաբար կիրառվում էր նաև որպես «գրական ստեղծագործություն», ինչպես «Օտյանին գրությունները երեք մասի կը բաժնվին» (ԱԱ, 43), «Գրեթե ամեն օր նրա գրություններին կարելի էր հանդիպել պոլսահայ մամուլում» (ՀՆԳՊ, 5, 675), կամ՝ «ստեղծագործելը» իմաստով. օրինակ՝ «Նոր օրենքներ սահմանեցին բոլոր բանաստեղծության տեսակների գրության համար» (ՍՊ, 34), իսկ Գ. Զարբհանալյանի մի աշխատությունում հանդիպում է նաև «գրելածե», գրելու եղանակ» նշանակությամբ, ինչպես «Թե գրությունը և թե լեզուն հայտնի կաղաղակեն թե կամ բոլորովին անհարազատ է այս գրվածքը» (ԶՀԴՊ, 227):

Եղանակ—«Տարվա շորս մասերից մեկը» նշանակության նմանությամբ գրաբար գրականության մեջ կիրառվել է «աշխատության՝ գրքի մաս» իմաստով, օրինակ՝ «խոստացած էր յոթն եղանակոք կամ գրքով պարտել իր Պատմությունը» (ԶՀԴՊ, 344): Այժմ հնացած է, չի գործածվում այս իմաստով:

Համեմատություն—«Համեմատեելը» ընդհանուր, սովորական նշանակությունից բացի գրականագիտության մեջ կիրառվում է որպես տերմին, գեղարվեստական խոսքի պատկերավորության միջոց, որը հիմնովում է երկու երևությունների նմանության կամ ընդհանրության վրա: «Համեմատությունն ավելի ցայտում է դարձնում պատկերվող երևութիւն այս կամ այն հատկանիշը» (ԳԲ, 170):

Նկարագրություն—նախորդի նման «Նկարագրելը, նկարագրվածը» ընդհանուր, սովորական նշանակությունից բացի որպես գրականագիտական տերմին «գեղարվեստական խոսքի ձևերից մեկն է», նույնիսկ՝ նկարագրական ստեղծագործություն, օրինակ՝ «Մինաս Չերազի... գեղարվեստական հատվածները (ոտանակորներ և նկարագրություններ), ի մի ժողոված կան» (ՎՓ, 684):

Նվազ—Բազմաթիվ սովորական նշանակությունների հետ հին գրականության մեջ հանդիպում է «երգ» նշանակությամբ, օրինակ՝ «Նոցափառարանականներն ու գովասանքները հիներեն տաղ կամ կացուրդ, միջիններեն գանձ կամ նվազ, իսկ նորերեն երգ կամ խաղ (մանի) հորջորջեցան» (ՎՎ, Զ): Ղ. Ալիշանի բանաստեղծությունների ժողովածուն (հինգ հատոր) վերնագրված է «Նվազք» կամ՝ «Տերյանը պայմանականորեն է ստորաբաժանել իր ներաշխարհի բանաստեղծական նվազները» (ՀՆԳՊ, 5, 424): Այս տերմինի մի այլ կիրառություն համընկնում է երգի «ստեղծագործության մաս (առավելապես շափածո)» նշանակության հետ, օրինակ՝ «Չորս նվազներից էր բաղկացած պոեման» (ՎՓ, 415):

Ոլք—Սովորական «լաց ու կոճ» նշանակությանը զուգընթաց գոռծածվել է որպես գրական մի տեսակի անուն, օրինակ՝ «Դպրության այն ճյուղը, զոր հինք Զայլք և նորերն անվանեցին Գովք կամ Ողբք, զոսս կեղանակեն եղերամարք» (ՎՎ, ԾԵ): «Միջնադարում զարգանում էն պոեմի շատ ուրիշ տեսակներ՝ աղգային պատմության այս կամ այն փուլը... պատկերող պոեմներ (կամ ողբեր)» (ԳԺ, 46):

Ոլբերգություն—Սովորական «վիշտ, սուր, աղետալի անցք և այլն» նշանակությունից բացի շատ տարածված է որպես թատերական ժանրերից մեկի անվանում, օրինակ՝ «Արտավազդ թագավորը ողբերգություններ էր հորինում» (ՎՓ, 434): «Ոլբերգության մեջ չպիտի լինեն երգիծանքի տարրեր» (ԳԺ, 13):

Զափ—Սովորական բազմաթիվ նշանակություններից բացի կիրառվում է որպես գրականագիտական և երաժշտական տերմին, ցույց տալով «ոտանավորի մեջ ոտքերի և վանկերի քանակը մի առղում», օրինակ՝ «Ոմանք թվելիք բարիվս զթիվ կամ զափ, զշափաբերական լինելն երգոց իմանալ կամին» (Մէ, 19): «Զափը ոտանավորի ընդհանուր ոիթմական ձևն է» (Մ. Ագեղյան, Տաղաչափություն, 12):

Սեռ—Բազմիմաստ բառ է լեզվի համընդհանուր բառապաշարում, իսկ գրականագիտության մեջ կիրառվում է որպես գրական տեսակ: Օրինակ գրականության մասին «Եր սեռին մեջ առջի բերքը չէ, իրմէ առջի բանի մը մասն է» (Գաթ., 10), կամ «Թատերգական սեռ—գրականության երեք հիմնական բաժիններից՝ սեռերից (էպոս, լիրիկա, գրամա) մեկը (ԳԲ, 104), նաև՝ «սեռ (ժանր)» (ՎՓ, 595):

Տեսիլ—Սովորական իմաստներից բացի գործածվում է որպես «դրամատիկական ստեղծագործության մաս», օրինակ՝ «Այս արարվածի առաջին տեսիլի մեջ Անանին գիրք է կարդում» (ԳԵ, 125): «Արարված առաջին, տեսիլ առաջին» (Գաբրիել Սունդուկյան, «Պեպո», Երևան, 1971, 13):

Տիպ—Բազմիմաստ բառ է, որի իմաստներից մեկը տերմին է դարձել գրականագիտության մեջ՝ «գրական ստեղծագործության մեջ հանդես եկող կերպար, որն աշքի է ընկնում մարդկային և հասարակական շատ լայն բովանդակությամբ» (ԳԲ, 288): «Նա ստեղծում է բնավորություններ, որոնք պետք է լինեն ժամանակի և դարաշրջանի տիպեր» (ԳԺ, 119):

Ակնհայտ է, որ ավելի հաճախական երևույթ է, երբ լեզվի համընդհանուր գործածական բառը, իսկ մեծամասամբ, բազմիմաստ բառը, արտահայտած իմաստից բխող մի նոր նշանակություն է ստանում՝ դառնալով գրական երևույթի անվանում, այդպիսի բառերից են՝ աղոք, անեծք, գովք, երդում, երես, բուդր, խաղ, խրատ, նեղինակուրյուն, ներոս, նյուսվածք, հորինվածք, մաս, մրմունջ, նմանություն, նվազ, ոտք, պատկեր, վիճակ և այլն:

Այս բառերի մի մասը որպես գրականագիտական տերմին մատնաշում է տվյալ բառի արտահայտած գործողության, երաժշտական իրակության խոսքը, տեքստը, ինչպես՝ աղոք, անեծք, գովք, երդում, խաղ, խրատ, կանոն, նառախտություն, մրմունջ, վիճակ և այլն:

Այս երևույթի մի այլ դրսերումն է այն, երբ գրականագիտական բազմիմաստ տերմինը ստանում է ևս մի նոր կիրառություն: Սա նույնպես տեղի է ոմենում երկու ձևով, իմաստի նեղացմամբ և հակառակը՝ ընդհայնմամբ: Քննենք մի քանի դեպք:

Բանահյուսություն  
Բանաստեղծություն՝ — Նախապես նշանակել է 1. ընդհանրապես «ըս-  
տեղծագործություն, գրականություն» (ընդհանուր իմաստով), ինչպես՝  
«Բանահյուսությունը լինում է երկու տեսակ. 1) բերանացի (բանավոր)՝  
կամ ժողովրդական և 2) գրավոր կամ մատենագրական» (ՎՓ, 5): «Հայ  
ժողովրդի նախնական, բերանացի բանաստեղծության մեջ ամենից առաջ  
նկատվում են դիցաբանական առասպելներ» (ՎՓ, 10): 2. «Առանձին ըս-  
տեղծագործություն, երկ», օրինակ՝ «Նախքան Կոկսենք «Ուկի աքաղաղի»  
բացատրությունը, ավելորդ չի լինի մի քանի խոսք ասել ընդհանրապես  
բանաստեղծության մասին: Բանաստեղծության նյութը իրական կյանքի  
բազմակողմանի երևոյթներն են, բանաստեղծական հերոսները մի ժո-  
ղովրդի կամ դասակարգի հայտնի ժամանակամիջոցի զարգացման ար-  
դյունքներն են» (ԳԵ, 2): «Մանոթ են արձակ և ոտանավոր բանահյու-  
սությունք» (ԶՆԴՊ, 17): 3. «Հատկապես շափածո ստեղծագործություն-  
ների ամբողջությունը», օրինակ՝ «Կուրդինյանը հայ բանաստեղծության  
մեջ բերում է նոր գաղափարներ» (ՀՆԴՊ, 5, 938): «Նորագույն բանաս-  
տեղծություն» (ԶՆՄ, 251): 4. «Զափածո ստեղծագործություն», օրինակ՝  
«Ահա ամբողջ պոեման. գողտրիկ մի բանաստեղծություն, որ անշուշտ  
ժողովրդի հեղինակությունն է» (ՎՓ, 44—45): 5. Վերջապես, ամենա-  
տարածված և այժմ կայունացած իմաստը «շափածո փոքրածավալ ըս-  
տեղծագործություն», օրինակ՝ «Ալամդարյանը գրել է քնարական-սիրա-  
յին բանաստեղծություններ» (ՀՆԴՊ, 1, 300):

Գլրք—Նույնպես բազմիմաստ է, ուղղակի իմաստից բացի ունի  
հետևյալ իմաստները: 1. «Մենագրություն, առանձին ընդարձակ ստեղ-  
ծագործություն», օրինակ՝ «Գիրքը ավելի և ավելի կը սակավանա. օրա-  
գրությունը ավելի և ավելի կը զորանա» (ԱԱ, 29): «Իմ գրքերը այդտեղ  
համեմատաբար ավելի սակավ են տարածվում, քան մի որևէ աննշան  
քաղաքում» (Բ, 10, 630): 2. «Ստեղծագործությունների հավաքածու, ա-  
ռանձին գիրք», օրինակ՝ «Իմ երկերը... տապել են միայն պարբերական  
թերթերում՝ ու հանդեսներում և լույս չեն տեսել առանձին գրքերով»  
(Մուրացան, 5, 365): Այս նշանակությամբ կիրառվում է նաև գրքույկ  
նվազական ձևը. «Մի քանի խոսք կամենում ենք ասել միայն պ. Քա-  
մալյանի գրքույկի մասին» (ԳԵ, 30): «Հրատարակվել է Վ. Միհիթարյանի «Սոցիալական ճանաշողություն և պլանավորում» խորագրով գրք-  
ույկը» (Գրքերի աշխարհ, 1981, № 5): 3. Բազմահատորյակի ա-  
ռանձին հատոր», օրինակ՝ «Ճիշճանիի գրվածքներից ժողովածումներ կան  
մինչև անգամ երեք գրքերով» (ՎՓ, 490), «Պատմավեպի երկրորդ գիր-  
քը հրատարակվեց վերջերս» (ԳԱ, 1981, № 5): Նվազական ձևը նույն-  
պես. «Նավասարդյանը այս օրերս լույս ածեց իր ժողովածուի շորորոդ

գրքույկը» (ԳԵ, 80): 4. «Ստեղծագործության առանձին մաս»։ «Կաղան-կատվացու ամբողջ գործն երեք գրքեր բաղկացյալ է» (ԵԴ, 30):

Դյուցազներգություն տերմինը է։ Զրբաշյանի և Հ. Մախչանյանի «Դրականագիտական բառարանում» չի հանձնարարվում, այլ հղում ունի էպաֆեա օտար բառին։ Սակայն այն հանդիպում է մեր գրականության մեջ երկու կիրառությամբ։ 1. «Հերոսական բովանդակություն ունեցող, աստվածների ու դյուցազնների մասին պատմվող բանաստեղծական ստեղծագործությունների շարք», օրինակ՝ «Այդ տեսակները, որոնց բովանդակությունը պատմում է Խորենացին, որից բան չեն, եթե ոչ ժողովրդական դիցաբանական առասպելներ և դյուցազններգություններ՝ էպիկական երգեր» (ԺՀԼԲԲ, 1, 522): ոչդ. Հյուրմյուզյանը նույնպես էպոպեան (դյուցազններգությունը) տեղադրում է գրական ժանրերի ամենաբարձր աստիճանում» (ԳՓ, 78): 2. Սակայն պվելի հաճախ կիրառվում է «Ճողովրդի կյանքի առավել լայն, բազմակողմանի պատկերը ներկայացնող վեպ» իմաստով, ինչպես՝ «Թաղիադյանի խոշոր բանաստեղծական երկերից ամենանշանավորն է «Սոս և Սոնդիպի», որ մի սիրուն դյուցազններգություն է՝ բաղկացած հինգ դրվագից» (ԼՄ, Ա, 49), կամ՝ «Մուսա լեռան քառասուն օրը» պատմական վեպ չէ, այլ դյուցազններգություն» (ԳԹ, 1963, № 49):

Երգիծաբանություն—1. «Երգիծելը, երիգածնք», օրինակ՝ «Թաղիադյանի գրչին հատուկ է և երգիծաբանությունը» (ԼՄ, Ա, 47): 2. «Երգիծական երկ՝ ստեղծագործություն», «Այդ ցույց է տալիս նրա մի երգիծաբանությունը, որի վերնագիրն է Ճողովակ» (ԼՄ, Ա, 39):

Երգիծանել—թեև ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում բացատրված է որպես մենիմաստ բառ, սակայն այն գրականության մեջ ունի մի քանի նշանակություն, ինչպես։ 1. «Երգիծելու ձև», օրինակ՝ «Արդեն հնացած երգիծանքներ են» (ՎՓ, 753): «Բազմակողմանի է նաև կեռ Կամսարի երգիծանքը» (ԳՓ, 451): 2. «Երգիծելը, հումոր», օրինակ՝ «Սա ոեակցիա էր երգիծանքի անկման շրջանի դեմ» (ԳՓ, 455): «Երգիծական խոսք՝ արտահայտություն», օրինակ՝ «Գոեհիկ երգիծանքներ շուալլող թերթեր են» (ՎՓ, 756):

Զրոյց—1. «Նկարագրական, պատմողական, խրատական բնույթի ու մեծ ծավալի շափածող կամ արձակ երկ», օրինակ՝ «Դպրության սա մի քանի ճյուղեր, որպիսի են Երգն ու Զրոյց, Առածն ու Առասպել ժողովրդեն կը ծնին ու ժողովրդյան հետ կապրին» (ՎԿ, 6): «Տպագրում է ժողովրդական բանավոր զրոյցների և առակների երկու ժողովածու» (ՀՆԳԹ, 3, 51): Նույնիսկ նույնացվում էր Կեքիաթի հետ, ինչպես՝ «Գրիմ եղբարքը... իրանց կյանքը անց են կացրել անդադար ժողովրդական բանաստեղծությունով պարապելով, իրանց հրատարակած գերմանական

գրուցների հառաջաբանության մեջ հաստատում են» (ՄՊ, 235): 2. «Վիպերգական երկերում պատմելու եղանակ, երբ պատմությունն արվում է հերոսներից մեկի անոնմից» (ԳԹ, 110):

Թատերագրություն | — Այս տերմինները կիրառական էին առաջարկություններում և կելապես նախասովետական շրջանում և թատերգություններում գրականագիտական բառարանում նրանց գործածությունը չի խրախուսվում, այլ հանձնարարվում են այժմ առավել կիրառելի պիես և դրամատուրգիա տերմինները, սակայն նշենք, որ գործածվում են նաև հայերեն համարժեքները: 1. «Դրամատիկական ստեղծագործությունների ամբողջությունը, պիես գրելը, դրամատուրգիա», օրինակ՝ «Թատերական խաղեր, ինչպես և թատերագրությունը հայերի մեջ եղել են շատ հին ժամանակներից» (ՎՓ, 433) կամ՝ «Թատերագրությունը մեր մեջ ազգային կյանքի հեղինակությամբ սկսավ» (ԱԱ, 93): «70—80-ական թվականների հայ թատերագրությունն ընթանում էր հիմնականում երկու ուղղությամբ» (ՀՆԳԹ, 3, 93): «Անհրաժեշտ եմ համարում նախ համագումարի ուշադրությանը հանձնել ժամանակակից թատրոնի ու թատերագրության հետ աղերսվող մի սկզբունքային հարց» (ԳԹ, 1981, № 20): 2. «Դրամատիկական ստեղծագործություն, պիես», օրինակներ՝ «Ներկայացվեցան Շեքսպիրի թատրերգությունները» (ԱԱ, 42), «Շանհիթը գրել է նաև թատերագրություններ» (ՎՓ, 608):

Հեղինակ—1. «Ստեղծագործող, ուսումնասիրող, մատենագիր», օրինակ՝ «Զոր ինչ հայ և օտարազգի հեղինակը մինչ ցայսօր ժամանակի գրեցին ըստ այսմ մասին՝ լոկ տեղեկութիւնք են» (ՄԷ, 7): 2. «Որևէ կոնկրետ ստեղծագործության հեղինակը՝ ստեղծողը» (автор). «Կան նաև հեղինակների անհայտ տաղեր» (ՎՓ, 255): «Հեղինակն էլ արտահայտում է հերոսի մտքերն ու տրամադրությունները» (ԳԺ, 88): 3. «Գըրող» (писатель). «Նույնիսկ միևնույն հեղինակի մոտ հերոսական պոեմի ոճն զգալի շափով այլ կլինի» (ԳԺ, 58):

Հեղինակություն—1. «Հեղինակ լինելը» (авторство). «Հեղինակության վերաբերած նյութերու մեջ՝ մատենագրին անձնական որպիսության տեղեկությունն անհրաժեշտ հարկավոր է» (Գաթ. 6): 2. «Երկ, ըստեղծագործություն»: «Սունդուկլանի և Պողյանի այս նկատմամբ արժեքավոր հեղինակությունները» (ԳԵ, 1): 3. «Ստեղծագործելը, հեղինակելը». «Թատրերգությունը մեր մեջ ազգային կյանքի հեղինակությամբ սկսավ» (ԱԱ, 93): 4. «Հարգանք» (авторитет). «Ոչ մի պատմագիր այնքան մեծ հեղինակություն և համբավ՝ չի վայելել» (ՎՓ, 99), ինչպես նաև՝ «հարգանք վայելող անձ, հեղինակավոր դեմք»: «Մեծ հեղինակությունները չեն կրնար ուսման ու կրթության տարածումին շնորհիվ կարճ ժամանակամիջոցի մը մեջ առաջ գալ» (ԱԱ, 35):

Հիշատակարան—1. «Թրագիր, որը դարձել է գրական ստեղծագործություն», ինչպես Մաֆֆու վեպի վերնագրի մեջ «հաշագորի հիշատակարանը», «1792-ին Լոնդոնում լույս տեսավ այդ հիշատակարանը «Հովսեփի էմին հայի կյանքն ու արկածները» խորագրով (ԳԱ, 1981, № 5); 2. «Զեռապագրերի, հին հրատարակությունների վերջում համառոտ տեղեկություն գրչության կամ տպագրության ժամանակի, տեղի, հանգամանքների մասին, օրինակ՝ «Դիվանների մեջ պահպանված հնագույն հիշատակարաններ» (ՍՊ, 47); 3. «Որպես վկա, մշակութային արժեք», ինչպես՝ «Մեր գրականության ամենից հին հիշատակարանը կարող է համարվիլ» (ՍՊ, 112). «Վահագնի երգի» մասին:

Նկարագիր—1. «Նկարագրություն», օրինակ՝ «Կարս քաղաքի բավական սիրուն նկարագիրը» (ԳԵ, 192), «Բնության նկարագիր է» (ԼՄ, Ա, 31); 2. «Նկարագրող». «Նա ոչ Պոոշի պես նկարագիր է և ոչ Պատկանյանի պես հոգերան» (ԳԵ, 241); 3. Իսկ այժմ ավելի գործածական է «բնավորություն» իմաստով (харакտեր). «Տարբեր են նրանք... իրենց նկարագրով, նախասիրություններով, ձեռագրով, խոսքի թարմությամբ» (ՀԶ, 1975, № 5); «Փոխվել են նաև գրականության նկարագիրն ու խընդիրները» (ԳԵ, 1981, № 20):

ՈԵ—1. Ընդհանրապես «պելու եղանակ, գրելածեա, օրինակ՝ ուղանակի ոճ: «Ճառեր են... գրված հունարեն լեզվով, հունական ժամանակակից կրոնավորների ոճով» (ՎՓ, 57): «Ոճը պետք է բխի ստեղծագործության թեմատիկ-գաղափարական բովանդակությունից» (ԳԺ, 58); 2. Մասնավորապես «առանձին հեղինակին յուրահատուվ գրելածեա նշանակությամբ, ինչպես՝ «իբրև նմույշ Ռուսինյանի ոճին, այստեղ դնենք իրմե երկու հատված» (ԱԱ, 47): «Մաթեսույանի մտածողությունը, այսպես ասած, «կոնտրապունկտային» է, և դա անդրադապնում է նրա ոճի վրա» (ԳԺ, 392); 3. «Ոճական արտահայտություն, դարձվածք, բանաձեւ. Ունի ժամանակվա ոճեր ու հայկական խոսքեր, որոնք այժմ արդեն գործածությունից դուրս են եկել» (ՎՓ, 248):

Ոտանավոր—Զուտ գրականագիտական տերմին է, որն ունի մի քանի նշանակություն և կիրառություն: 1. Ընդհանրապես «ոտքով՝ շափածո գըրվածք». «Բոլոր ազգերի մեջ առանձին ոտանավոր երգերը քնարական են» (ՍՊ, 152): «Ոտանավոր թարգմանություն» (ԶՀԴՊ, 424): Նաև՝ «Պատմական ժամանակադրական կարգով շարադասված երգեր, թվելով, ոտանավորով» (ՎՓ, 8); 2. «Փոքրածավալ շափածո ստեղծագործություն, բանաստեղծություն», օրինակ՝ «Աղատություն» ոտանավորը նրա բանաստեղծական քանքարի ամենաբարձր արտահայտությունն է» (ՀՆԴՊ, 2, 197):

Պատկեր—Բացի սովորական համընդհանուր գործածական իմաստից, որպես գրական հասկացություն ունի նույնպես բազմաթիվ ի-

մաստներ. 1. «Նկարագիր, համառոտ շարադրանք», օրինակ՝ «Պատկեր հայ դպրության ըստ յուրաքանչյուր դարուց» (ԶՀԴՊ, ԺԲ); 2. «Նկարագրական փոքրածավալ ստեղծագործություն», օրինակ՝ «Գրում է փոքրիկ, գողտրիկ պատկերներ» (ՎՓ, 745); «Պարոնյանը օգտվել է արձակի ժանրային մի շարք տարատեսակներից՝ վեպ, պատկեր, նովել» (ՀՆԳՊ, 3, 89); 3. «Դրամատիկական ստեղծագործության մաս», օրինակ՝ «Գործողությունն էլ ունենում է իր մասերը, պատկերները» (ԷԶ, 305); 4. «Տեսարան, նկարագրություն», օրինակ՝ «Որքան գունագեղ են նկարած պատկերները» (ՎՓ, 753). Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» մասին: «Հաճախ կրկնվում են տողեր ու պատկերներ» (ՀՆԳՊ, 5, 424): «Պոեմի սյուժեն Կոմիտասի կյանքի ընթացքն է քնարական, կենցաղային և պատմական բազմաթիվ պատկերների միջոցով» (ԳԺ, 109); 5. Ստանալով «գեղարվեստական» որոշիչը՝ գեղարվեստական պատկերը գրականության և արվեստի մեջ՝ կյանքի արտացոլման յուրահատուկ միջոց է, օրինակ՝ «Կյանքի արտացոլումը գրականության մեջ միշտ կատարվել է գեղարվեստական պատկերների միջոցով» (ԷԶ, 24):

Պատմվածք—Մալխասյանցի բացարական բառարանում բացատրված է միայն մեկ իմաստը, սակայն գրականության մեջ հանդիպում է մի քանի կիրառությամբ, ինչպես. 1. «Պատմելիք՝ պատմելու նյութ», օրինակ՝ «Կարողանում են հմայիչ դարձնել պատմվածքը և գրավել լսողներին» (ՎՓ, 40); 2. Պատմություն, պատմողական ստեղծագործություն, օրինակ՝ «Ո՞ր դարու պատմվածք է Տարոնի վեպը» (ՄԱ, Ա, 394); 3. Պատում, տարբերակ, օրինակ՝ «Մուշեղի վեպի մի ուրիշ պատմվածքը պահել է մեղ և Հովհան Մամիկոնյանը» (ՄԱ, Ա, 297); 4. «Պատմելը, շարադրանք», օրինակ՝ «Պատմվածքը չի արվում առաջին դեմքով» (ՄԱ, Գ, 273); 5. «Պատմելու եղանակ, պատմելաձեւ, օրինակ՝ «Վկապասանքի մեջ պատմվածքը շատ կենդանի է, տրամախոսություններով հարուստ» (ՄԱ, Գ, 81); 6. Գրականության պատմողական ժանրերից մեկը, «փոքրածավալ արձակ ստեղծագործություն», այժմ ամենագործածականը, ինչպես՝ «Հաճախ անվանում ենք և պատմվածք, և նովել, բայց նրանց միջև եղել են և որոշ տարբերություններ» (ԷԶ, 324):

Վեպ—1. Հին մատենագրության մեջ հանդիպում է առավելապես «պատմությամբ, ինչպես՝ «Այդ բառ՝ գոլով մին ի հնագոյն բանից լեզով մերոյ, առ հինսն մեր զնոյն նշանակէր, զոր առ Յոյնս էպոս, այսինքն՝ պատմութիւն Եերբողական կամ պատմական բանաւութիւն, ըստ Խորենացոյ՝ պատմութիւն բագարաց՝ ի Մատենուն թագաւորաց ամփոփեալ, շափաբերական և ոչ արձակ» (ՄԷ, 6—7), ավելի ամփոփ՝ «Վէպն

Հնոց ոչ այլ ինչ էր, բայց եթէ քերթողական պատմութիւն շափարերական, յորում զգործս քաջաց և թագաւորաց երգէին, որ և առ արդի Եւրոպայիս Էրօրէ անուամբ սովորաբար յորշորչի» (Մէ, 7): Այս նշանակությամբ գործածում է նաև Ա. Արքիարյանը, օրինակ՝ «Արևելյան հին վեպեր» (ԱԱ, 39): 2. Հետագայում վերոհիշյալ հին իմաստը ընդարձակվում է և ստանում ավելի լայն ընդգրկում. օրինակ՝ «Ազգային նախնական բանաստեղծությունը» ընդհանուր անունով կոչվում է «Վեպ» կամ «Վիպասանական բանաստեղծություն» (ՍՊ, 91): 3. XIX դարում եվրոպական վեպի զարգացման շրջանում, երբ հայ գրականությունը հարստանում է արևմտաեվրոպական գրողների վեպերի թարգմանությամբ, հին վեպ տերմինը ստանում է նոր իմաստ, որը կայունացավ և կիրառվում է առ այսօր րուման-ին համարժեք: «Վեպը ժամանակակից գրականության ամենատարողունակ ժանրն է» (ԳԺ, 233): Այս նշանակությամբ հանդիպում է և լայն իմաստով՝ որպես «վեպերի ամբողջություն», «վիպագրություն». օրինակ՝ «Ժամանակակից թեմայով սովետահայ վեպի իսկական պատմությունը սկսվում է Ն. Զարյանի «Հացավանով» (ՀՀԳՊ, 2, 187):

Վիպագրություն—1. Հին ժամանակներում նույնացվում էր պատմագրության, պատմության հետ, ինչպես. «Ցանկացյալ այսմ նորոգման և վիպագրության, և բազում շանիվ և հոլով աշխատությամբ որոնյալ հավաքեցաք ի հին և ի նոր պատմագրաց Հայոց, նաև հարձանագրությանց եկեղեցյաց» (Սա. Ոտպելյան, տե՛ս ԶնՄ, 131): 2. Վեպ տերմինի նոր նշանակությամբ (րուման) կիրառությունից բխում է և այս նոր իմաստը՝ «վեպերի ամբողջությունը», օրինակ՝ «Մի գրվածքով, որ հայ գրականության մեջ նոր շրջան պիտի բանար և սկիզբ պիտի դներ աշխարհիկ նորագույն վիպագրության «Վերք Հայաստանին» էր այն» (ՎՓ, 340): «Ունի իր ներկայացուցիչները ոչ միայն պոեզիայի, այլև վիպագրության ու դրամատոպեայի բնագավառում» (ՀՆԳՊ, 5, 953): 3. «Վեպ գրելը, վիպասանություն», օրինակ՝ «Վիպագրությունը նոր գրողներուն գրականությանը մեջ լայնկեն տեղ մը բռնեց» (ԱԱ, 138): «Գերադասում էր գեղարվեստական վիպագրությունը, որը ժամանակի ամենատարածված ժանրն էր» (ՀՆԳՊ, 3, 166):

Վիպասան—ինչպես և վիպասանություն տերմինների բազմիմաստությունը բխում է վեպ տերմինի տարրեր նշանակությամբ կիրառությունից: 1. Հին մատենագրության մեջ վեպի հին իմաստով՝ «վեպ գրող», որը նույնանում է «բանաստեղծ» հասկացության հետ, ինչպես՝ «Յետ այսորիկ Վիպասան» անուն ինքնին որոշեալ տեսանի, որոյ և նշանակութիւն յայտնի: Քանզի եթէ վէպն քերթողական պատմութիւն է շափարերական, ուրեմն Վիպասանն բանաստեղծն է, զոր աս Արևմտեանս

քօղե էրիգա անուանեն» (*Մէ*, 7): Ապա էմինը ստուգաբանելով վիպանն բառը, որը կազմված է վէպ և աս բաղադրիչներից, եղրակացնում է. «Ուրեմն ասել վէպս նոյն է ընդ՝ երգել վէպս, զպատմական երգս» (*Մէ*, 7): 2. Նոր ժամանակներում սկսեց կիրառվել և այդպես էլ կայունացավ «վեպ գրող», «վեպի հեղինակ» նշանակությամբ, ինչպես՝ «Վիպական սյուժեն վիպասանի կոնցեպցիայի գեղարվեստական մարմնավորումն է» (ԳԺ, 248) կամ՝ «Խաչատրութ Արովյանն էր... ժողովրդի լեզվով գրող ու ժողովրդի մասին խոսող առաջին վիպասանը» (ՎՓ, 336):

Վիպասանություն—1. Հին իմաստով՝ «վեպ», օրինակ՝ «Վրույր, նշանավոր բանաստեղծ մըն էր, և թերեւս հայկական վիպասանության շարագրողաց մեկն, որ երգեց Արտաշիսի երջանիկ օրերն» (ԶՀԴՊ, 174) կամ՝ «Բայց այս վիպասանությունը ժամանակ անցնելով իր ամբողջությունը կորցրեց և ալլ և ալլ մասերի կամ անդամների բաժանվեցավ» (*ՍՊ*, 91): «Մենք պոեմ ենք անվանում... միշնադարի շափածո վիպասանությունները» (ԳԺ, 63): 2. «Վեպ» ժամանակակից իմաստով, օրինակ՝ Ռաֆֆին իր «Պոդիլ ու ոգմորիլ վիպասանություններով» (ՎՓ, 451): 3. «Վեպ գրելը», օրինակ՝ «Այդ գրելուում կը պակսեր թե ընկերական կյանքի գիտության, թե վիպասանության արվեստը» (*ԱԱ*, 223): 4. «Վեպերի ամբողջությունը», օրինակ՝ «Եթե պատմական վիպասանությունը իր դերը ըստ բավականին կատարեց, արդի վիպասանությունը շատ առատ հումագ ունի իրեն համար» (*ԱԱ*, 139):

Տեսարան—1. Սովորական նշանակությամբ, գեղարվեստական ըստեղծագործության մեջ՝ «պատկեր, դեպքեր», օրինակ՝ «Կեղծ կլասիկական դրամաները... պիտի սարսափելի և զարհուրելի տեսարաններով լիքը լիներ» (ԳԵ, 42) կամ՝ «Ներկայացված տեսարանները մեր պատմական կյանքեն առնվեցան» (*ԱԱ*, 87): 2. «Դրամատիկական երկի, ներկայացման մասս, ինչպես՝ «Պիեսի արժանիքը բովանդակությունը չէ, ալլ միշանկյալ տեսարանները և հաջող գծագրված տիպեր» (ԼՄ, Բ, 117):

Նկատելի է, որ գրականագիտական տերմինակերտման, բառի տերմինացման ամենատարածված միջոցը լեզվի բառապաշարում եղած բառի (մենիմաստ թե բազմիմաստ) իմաստի նեղացումն է, որը կոնկրետացվելով ամրացվում է մեկ հասկացության: Այդ են հաստատում վերը քննած տերմինները: Սակայն նշված երևույթի կողքին կա և հակառակ պատկերը՝ բառիմաստի ընդլայնում:

2. Բառիմաստի ընդլայնում, ինչպես.

Դրամա—Գրականագիտական բուն իմաստը գրական-դրամատիկական ժանրերից մեկը, «դրամատիկական ստեղծագործություն», օրի-

նակ՝ «Ելյս դրամայիւմ չկան դրական հերոսներ» (ՍԳՊ, 2, 553): Սակայն տվյալ տերմինը կիրապիում է նաև ավելի լայն նշանակությամբ, որպես «դրամաների ամբողջություն»։ Կամ «դրամա գրելը», որն արտահայտվում է դրամատուրգիա տերմինով, օրինակ՝ «Ծաղկեցին բանաստեղծությունը և դրաման» (ԱՄ, Բ, 4) կամ՝ «Սրանցից ոչ մեկը շարձրացավ սովետական դրամայի նշանավոր երկերի... աստիճանին» (ՍԳՊ, 2, 59):

Ապատերմինացման հետևանքով դրամա տերմինը ընդհանուր խոսակցական, ինչպես նաև գրական լեզվում գործածվում է մարդկային ժանր ապրումներն արտահայտելու համար, օրինակ՝ «Բանաստեղծություն շարունակ և աներեր դառնում է մարդու անձնական դրամային» (ՍՀԳՊ, 2, 735):

Նույն պատկերն է ներկայացնում նաև արագեղիա օտար տերմինի հայերեն համարժեք ողբերգություն տերմինը, վերջինս նույնպես դրամատիկական ստեղծագործության հիմնական իմաստի ընդլայնման միջոցով կիրապիում է նաև «ողբերգություն գրելը» և «ողբերգությունների ամբողջությունը» նշանակությամբ, օրինակ՝ «Արտավազդ թագավորը ողբերգություններ է հորինում» (ՎՓ, 434) և ապատերմինացված, լեզվի ընդհանուր գործածական բառ, օրինակ՝ «Նրա հայացքն ու դիմախաղը արտահայտում էին Ռասպլիցի ներքին ողբերգությունը» (Վ. Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, 1959, 254):

**Ճառախոսություն—Առձեռն բառարանում հառարանություն, նառագործություն, նառասացություն բառերը բացատրված են հաջորդաբար «խոսվածք, գրվածք և ճառ, ըսվածք» համանիշներով, այստեղից կարելի է մտածել, որ նառախոսություն տերմինը վերոհիշյալ համանիշների նման կարող էր սկզբնապես գործածվել ճճառ, գրվածք» նշանակությամբ, որը հաստատվում է հետևյալ օրինակով, «Կազմված էր գրեթե ճառախոսությունից և հրապարակախոսական հոդվածներից» (ՎՓ, 648):**

Հիշված տերմինները հետագայում գործածության մեջ մտան ավելի լայն, ընդարձակ նշանակությամբ՝ նման ստեղծագործությունների ամբողջությունը կամ դրանով գրաղվելը, ինչպես վկայում են Մալխանյանցի բացատրական բառարանի համապատասխան բառահոդվածներում նրանց իմաստների դասավորությունը և հետևյալ օրինակը. «Թատերագրությունն էր արձագանք տվավ նման գաղափարների, ապա բանաստեղծությունը, հրապարակախոսությունն ու ճառախոսությունը» (ՎՓ, 651):

Հայ գրավոր գրականության ժամանակագրական համաբարբառ քարտարանի կամ բառացանկի բացակայության պատճառով մենք չենք

կարող պնդել, որ այս գեղքում տեղի է ունեցել իմաստի լայնացում, հնարավոր է դրանց նաև միաժամանակյա գործառությունը:

Նույն պատկերն է ներկայացնում վիպասանություն տերմինը, որը Առձեռն բառարանում բացատրված է «Հին պատմություն, պատմագրություն», հիմնական իմաստի ընդլայնմամբ հետագայում գործածվել է «վիպասան լինելը, վեպ գրելը» և «վեպերի ամբողջությունը» նշանակությամբ (տե՛ս սույն աշխատության էջ 83):

### ՀԱՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Համանունությունը միևնույն տերմինային համակարգում հաճախական չէ, այն արտահամակարգային է: Ներհամակարգային համանունություն գրեթե գոյություն չունի, դա առավելապես միևնույն տերմինի բազմիմաստություն է: Բազմիմաստության մասին արդեն խոսվեց, այժմ քննենք համանունության երևույթը:

Գրականագիտական տերմինաբանության մեջ համանունությունը դրսենորդում է գլխավորապես այն գեղքում, երբ բազմիմաստ տերմինի իմաստներն այնքան են հեռանում ու մթագնում, որ նրանցից յուրաքանչյուրը վերածվում է անկախ բառի և հանգեցնում է համանունության: Այդ գեղքում միևնույն տերմինը վերաբերում է տարբեր գիտաճյուղերի տերմինային համակարգերի: Դրանք միշտական տերմինային համանուններ են, ինչպես օրինակ.

տերմին

տերմինային համակարգ, գործառության  
ոլորտ

ավանդություն  
գանձ

1. աղքագրություն, 2. գրականագիտություն  
1. հասարակագիտություն, 2. գրականագի-  
տություն

գլուխ  
գործողություն

1. կազմախոսություն, 2. գրականություն  
1. ֆիզիկա, 2. մաթեմատիկա, 3. գրակա-  
նագիտություն, 4. թատերագրություն,  
5. բժշկություն

գորություն

1. պաշտոնավարություն, 2. գրականագի-  
տություն

եղանակ

1. օդերևութաբանություն, 2. երաժշտություն,  
3. գրականագիտություն, 4. լեզվաբա-  
նություն

նվագ

1. երաժշտություն, 2. գրականագիտություն,  
3. ֆինանսներ

շափ

1. տեխնիկա, 2. տաղաշափություն

սեռ	1. կենսաբանություն, 2. քերականություն, 3. գրականագիտություն
տեսիլ	1. սնութիապաշտություն, 2. թատերագրու- թյուն
տիպ	1. տպագրություն, 2. գրականագիտություն
գիրք	1. տպագրություն, 2. գրականագիտություն, 3. պաշտոնավարություն
հեղինակություն	1. հասարակագիտություն, 2. գրականագի- տություն
նկարագիր	1. հասարակագիտություն, 2. գրականագի- տություն
պատկեր	1. գրականագիտություն, 2. թատերագրու- թյուն, 3. նկարչություն
ոտք	1. կաղմախոսություն, 2. տաղաջափություն, 3. տեխնիկա
տուն	1. հասարակագիտություն, 2. շինարարու- թյուն, 3. տաղաջափություն և այլն:

Համանությունը տերմինաբանության մեջ ներկայացնում է բազմ-իմաստության տրամաբանական շարունակությունը: Բացատրական բառարաններում, որոնք ընդգրկում են համընդհանուր լեզվի բառապա-շարը, ավելի հաճախ տերմինային համանունները դիտվում են որպես մեկ գլխարարի տարբեր նշանակություններ, փոխաբերություններ, մինչ-դեռ տերմինաբանական բառարաններում, տերմինարաններում բեր-վում է տվյալ գիտական իմաստով՝ որպես համապատասխան գիտա-կարգի, մասնագիտական բնագավառի տերմինային համակարգի միա-վոր:

Միջնորդային տերմինային համանունները փաստորեն լեզվի ընդ-հանուր գործածական բառի հետ ոմեն հնչյունային նույնություն. դրանք թեև պահպանում են բառի հնչյունային կազմը, սակայն բովանդակու-թյամբ երբեմն այնքան են հեռանում, որ սկզբնաղբյուրը՝ համընդհա-նուր լեզվի բառի նշանակությունը չի գիտակցվում:

Միջնորդային տերմինային համանուններին հատուկ է առնվազն երկու հատկանիշ, նախ՝ յուրաքանչյուր տերմին ունի մեկ կայուն սահ-մանում և երկրորդ՝ այդ տերմինը գործառության մեջ է տարբեր տեր-մինային համակարգերում:

Միջնորդական տերմինաբանության յուրահատկություններից մեկն էլ այն երևույթն է, երբ տվյալ գիտության տերմինային համակարգը փոխ է առնում մեկ այլ գիտաճյուղի տերմինային համակարգից որոշ տերմիններ կամ տերմինային բառակապակցություններ:

Այս երևույթը տարբերվում է համանունությունից նրանով, որ տրվյալ դեպքում տերմինը մի համակարգից անցնում է մի այլ համակարգ՝ առանց իմաստային փոփոխության կամ նոր երանգ ձեռք բերելու. տերմինի բովանդակությունը, սահմանումը պահպանվում են, սակայն ավելանում է գործառության ոլորտը, գիտական, մասնագիտական բնագավառը, ինչպես.

### տերմին

### տերմինային համակարգ, գործառության ոլորտ

բարանություն

դիմանություն

ճառ

տրամախոսություն

քարոզ

բաղաձայն

բացականչություն

համանիշ

մակդիր

վերածնություն

փոխանունություն

փոխառություն

1. ճարտասանություն, 2. ոճագիտություն

1. լեզվաբանություն, 2. ոճագիտություն

1. լեզվաբանություն, 2. ոճագիտություն

1. լեզվաբանություն, 2. ոճագիտություն

1. արվեստ, 2. գրականագիտություն

1. լեզվաբանություն, 2. ոճագիտություն և այլն:

ԶՈՒԳԱՀԵՐԾ ԶԵՎԵՐԸ (ՀԱՄԱՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՒՅՆԱՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ)

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ի տարբերություն ճշգրիտ գիտությունների տերմինաբանության՝ հասարակագիտական, տվյալ դեպքում գրականագիտական տերմինների համակարգում անթույլատրելիորեն շատ են միևնույն գրական իրակության, հասկացության բառային դրսերման ձևերն ու անվանումները, հետևաբար շատ հաճախ են հանդիպում նույն տերմինի ոչ միայն գրությամբ (հնչյունական, ձևաբանական) տարբեր կրկնակներ, այլև՝ բառական դուգաբանություններ:

Գրականագիտական տերմինների զուգահեռ ձևերը կարելի է բաժանել երկու խմբի՝ գրային և բառային տարրերակների:

Առաջին խմբին վերաբերում են այն գրականագիտական տերմինները, որոնք ունեն տարրեր գրային դրսորում<sup>32</sup>: Դրա պատճառներն են.

ա) գրության տարրեր ձևեր առաջանում են փոխատու և փոխառնող լեզուների հնչյունական համակարգերի տարրերությունից: Այսպես, եթե տերմինը փոխառված է անմիջապես փոխատու լեզվից, որի խուզ բաղադայնների համակարգը համընկնում է հայոց լեզվի հնչյունական կազմի համապատասխան ձևերին, ապա այս դեպքում, հատկապես անցյալում, պահպանվում է բնիկ (փոխատու) լեզվի հնչումը կամ գրությունը, ինչպես. դաբակիլ, դիրիբամբ, դրամատիքական, էպիքական, լիրիքական (ՎՓ, 45), էսքիզիք (ԱԱ, 30), բրոնիկներ (ԱԱ, 95), կլասիք (ՎՓ, 442), կլասիքական (ԳԵ, 279), հեքսամետր, միստիք (ՎՓ, 160), ոռմանտիք (ՎՓ, 529), սբոլաստիք (ՎՓ, 367), մելոդրամատիք (ՎՓ 599), սիմվոլիք (ՎՓ, 770) կամ մուզա (ՎՓ, 414), նուվել (ՎՓ, 795), նուվելիստ (ՎՓ, 795), սյուժետ (ԳԵ, 209) և այլն:

Որոշ դեպքերում փոխառյալ տերմինի բնիկ գրությունը պահպանվում է մասամբ, ինչպես՝ էսքիզիկական (ԷԶ, 34), սբոլաստիկ (ՍՊ, 61), բեալական (ԳԵ, 82) և այլն:

Սակայն հիշված տերմինների փոխառումը կատարվում է որևէ երկրորդ՝ միշնորդ լեզվի միջոցով (տվյալ դեպքում ոռւսերենի), ապա պահպանվում է ոռւսերենի հնչումը. այս երեսութը հատկանշական է առավելապես նոր և սովետական շրջաններին, օրինակ՝ դակտիլ, դիֆիրամբ, դրամատիկական, էպիկական, հեկլամետր, կլասիկական (ՍՊ, 35), ոռմանտիկական (ՍՊ, 35), սխոլաստիկ (ՄՆ, 336), գազել (ԳԼ, 151) և այլն:

բ) Գրականագիտական տերմինների զուգահեռ ձևերի (գրային տարրերակների)<sup>33</sup> առաջացման մյուս պատճառը պարզապես հայերենի տարրեր ժամանակներում կիրառվող ուղղագրության տարրեր կանոններն են: Դրանք սոսկ ուղղագրական տարրերակներ են, ինչպես.

պոլեզիա (ԳԵ, 79), պօեզիա (ԼՄ, 9, 20), այժմ՝ պոեզիա  
պօեմա (ԼՄ, Բ, 91)—պոեմ

պօէտ (ԼՄ, Բ, 84)—պոետ

սիմվոլիկ (ԼՄ, Բ, 48)—սիմվոլիկ

ռէալ (ԼՄ, Ա, 76)—ռեալ

ռեալական (ԳԵ, 82), ռէալական (ԳԵ, 46)—ռեալական

րեալիզմ—ռեալիզմ

ռեալիստ—ռեալիստ

րօմանտիք (ՎՓ, 343)—ոռմանտիկ

րօմանտիքական (ԳԵ, 61) — ռոմանտիկական  
պրօզա, պրոզայիկ (ԼՄ, Բ, 99) — պրոզայիկ  
դեկատենս — դեկադենտական, դեկադենտովֆյուն  
դյուքեյթ — դյուքեյթիթ  
ռուբայի — ռուբայաթ<sup>34</sup>

սիմբոլ — սիմվոլ  
սյուժետ — սյուժեն

ֆելլետոն — ֆելիետոն (ԼՄ, Գ, 30)

ֆելիտոնիստ (ՎՓ, 622) — ֆելիետոնիստ

վողըվիլ (ՎՓ, 623) — վողմիլ, վողեվիլ և այլն:

Նույն երևույթը որոշ գեղքերում առկա է նաև հնագույն փոխառյալ բառերում.

Հեքիաթ (ԳԵ, 60) — Հեքեաթ (ՎՓ, 727)

օղիմպիական (ՍՊ, 160), ոլիմպիական — օլիմպիական և այլն:

Օտար բառերում կրկնակ բաղաձայնների ուղղագրության փոփոխման հետևանքով հանդիպում է գրության երկու ձև, օրինակ՝ իդիլլա և իդիլլա, նովելլա և նովել, մուխամմազ և մուխամբազ, գաղղիաբանություն և գաղղիաբանություն և այլն:

դ) Գրականագիտական տերմինների գրությամբ զուգահեռ ձևեր առաջանում են նաև այն պատճառով, որ եվրոպական որևէ լեզվի բառը հայերենին անցնելով ուստերենի միջնորդությամբ, բնիկ ձևին ավելանում է ուստերենին հատուկ սեռ ցույց տվող ա վերջավորությունը, ինչպես օրինակ՝ հիպերբոլ և հիպերբոլա, ուպլիկ և ուպլիկա, սինեկդոխ և սինեկդոխա, պինս և պինսա և այլն:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի 1975 թ. դեկտեմբերին ընդունած որոշման համաձայն ընկնում է նաև փոխատու լեզվի ա վերջավորությունը, օրինակ՝ էպոպեա > էպոպե, լեգենդա > լեգենդ, մելոդրամա > մելոդրամ, մետաֆորա > մետաֆոր, պոեմա > պոեմ, նովելլա > նովել և այլն:

դ) Գրականագիտական տերմինների գրությամբ զուգահեռ ձևերի մյուս խումբը առաջանում է ձևային տարրեր դրսնորումներ ստանալու հետևանքով, օրինակ՝

գրված, գրած և գրվածք

ասացված և ասացվածք

դարձված և դարձվածք<sup>35</sup>

գործող անձինք և գործող անձեր

թարգմանչական և թարգմանական<sup>36</sup>

գիտնական (լեզու) և գիտական (բառեր)

գրականական և գրական

առասպել և առասպելիք  
զրույց, զրույցք, զրուցվածք, զրցվածք  
թատերգակ և թատրերգակ  
թատրերգ, թատրերգություն և թատերգություն  
հավաքածու և հավաքածու  
առաջաբան և հառաջաբան  
ոտ, ոտն և ոտք  
ներբողյան(ներ), ներբող և ներբողական(ներ)  
նախերգ և նախերգանք  
պատում և պատումն  
տեսիլ և տեսիլք  
ությակներ և ութնյակներ  
ութույան (ոտանավոր) և ութունյա  
քաղված և քաղվածք  
քերթված և քերթվածք  
ցուց, ցուցք և ցցուց երգք և այլն:

ե) Փոխատու լեզվի բնիկ ավելի երկար ձևերը, որոնք ոռուերենում կորցնում են իրենց վերջապորությունները, հայերենը վերցնում է կարճ ձևը, օրինակ՝ պոետիկոս>պոետ, ստիքոս>ստիք, տրոքեոս> տրոքե, քորեոս>քորեյ և այլն:

զ) Հարադիր բարդությունների բաղադրիչները միանում են, օրինակ՝ գլուխ գործոց, գլուխ-գործոց>գլուխգործոց, կեղծ անուն, կեղծանում>կեղծանուն, բանաստեղծական տող>բանատող, բառական կըրկնություն>բառակրկնություն, գրական քննադատություն>գրաքննադատություն և այլն:

Երկրորդ խմբին կարելի է դասել այն գրականագիտական տերմիններն ու տերմինային բառակապակցությունները, որոնք նույն գրականագիտական հասկացության, իրակության տարրեր բառային դրսևուրումներն են, որոնց առաջացման պատճառներն ու ուղիներն են.

ա) Հայերեն գրականագիտական գրականության մեջ տվյալ գրական իրակության մասին առաջին անգամ խոսելիս հեղինակը հայերենի բառային կազմում շփոնելով համապատասխան անվանումը և խոսափելով օտար բառը գործածելուց, ջանում է թարգմանել կամ պատճենել օտար բառը, մի խոսքով՝ ստեղծել, կերտել հայերեն համարժեք անվանումը՝ օգտվելով հայերենի բառակերտման կանոններից ու հնարավորություններից։ Սակայն տվյալ իրակությունը և նրա համապատասխան հայերեն անվանումը ավելի հասկանալի և ակնհայտ դարձնելու համար հեղինակը իր կերտած կամ լեզվի ոմեցած բառը նոր նշանակությամբ կիրառելիս փակագծերում (կամ առանց փակագծերի) տալիս է նաև

օտար տերմինը մի դեպքում օտարագիր, մյուս դեպքում՝ հայտառ, ինչպես.

այլաբանություններ allegorie (Գաթ., 24)

արարված acte (Գաթ., 27)

բանագործական բանաստեղծություն dramatique (Գաթ., 29)

Հագներգը հունաց րհպուր (Գաթ., 24)

Համեմատականություն parallelisme (Գաթ., 23)

մրմունչը nenia (Գաթ., 26)

ողբերգություն tragédie (Գաթ., 27)

շափականություն կամ թվականություն rhythm (Գաթ., 33)

պատմական բանաստեղծություն épique (Գաթ., 26)

վեպ Երօե (Գաթ., 26)

վիպասանություն Еропеé (Գաթ., 26)

փոխարերություն métaphore (Գաթ., 41)

քննադատություն critique (Գաթ., 6)

Հայրաբանություն patrologue (ԵԴ, 2)

Հավելված interpolation (ԵԴ, 11)

մատենագրություն litterature (ԵԴ, 2)

վիպական romantique (ԵԴ, 106)

առասպել mythes (ՍՊ, 30)

քնարական բանաստեղծություն poésie lirique (ՍՊ, 152)

դրամատիկական բանաստեղծություն poésie dramatique (ՍՊ, 166)

զրույց die Sage, сказание ընդհանուր իմաստով, իսկ շրջափակված՝ conte, сказка (ՍՊ, 93)

կեղծ-կլասիկական դպրոց pseudo-classique (ՍՊ, 35)

Հեղինակություն l'autorité (ՍՊ, 154)

շափ րythme (ՍՊ, 87)

շափականություն rythme (ՍՊ, 243)

վերադիր ածական epithethe (ՍՊ, 240)

դեկադենտական décadence (ՎՓ, 781) և այլն:

Արելահայ գրականագիտական գրականության մեջ հանդիպում են նաև ոռուսերեն համարժեք կամ օտար լեզուներից փոխառված տերմիններ, օրինակ՝

երգ բանից исторический эпос (ՎՓ, 8)

զրույց сказание (ՎՓ, 8)

ժամանակագրական պատմական գործեր хронология, летопись (ՎՓ, 58)

մենախոսություն монолог (ՎՓ, 443)

նախատինք пасквиль (ՄՆ, 336) և այլն:

Որոշ հեղինակներ, հավանաբար, նկատի ունենալով ընթերցողի օտար լեզու շիմնալու հանգամանքը, փակագծված բերում են հայատառ օտար տերմինը կամ բացատրում են, ինչպես.

գեղակրական—էսթերիֆ գրականություն (ԱԱ, 30)

գրականության շափը կամ կրիտերիա (ԳԵ, 60)

երգիծաբան սատիրիկ գրող (ԳԵ, 274)

երգիծություն հյումոր (ՎՓ, 610)

վիպային ոռմանալիք (ՎՓ, 520)

բանագրծական բանաստեղծություն, դրամատիկական, ողբերգական (ՄՊ, 267)

գրելու սեռ ժանր (ՎՓ, 505, 716)

վեպի տեսակը ժանր (ՎՓ, 685)

գերակշռող խազը լեյտոնալիք (ՎՓ, 600)

խորհրդակիր միստիք (ՎՓ, 759)

խորհրդանշական սիմվոլիք (ՎՓ, 600)

խորհրդապաշտություն միստիքականություն (ՎՓ, 763)

խոռոչը ցիլի (ՎՓ, 30)

կատակներ ֆարս (ՎՓ, 623)

կատակ վոդեվիլ (ՎՓ, 653)

մատենախոսական ճյուղ կրիտիկա (ՎՓ, 547)

նորավիպագիր նուվելիստ (ՎՓ, 795)

իրական բէալ ուղղություն (ԼՄ, Բ, 104) և այլն:

Որոշ դեպքերում դիտվում է հակառակ երևութը, օտար տերմինն է բացատրվում, օրինակ՝

Փելիետոնիստներ—կատակողներ (ՎՓ, 622)

րեալիզմ—իրապաշտական ուղղություն (ՎՓ, 520)

սխոլաստիկ—դպրոցական (ՄՆ, 336)

մետամորֆոզ—կերպարանափոխություն (ԼՄ, Գ, 82)

տենդենցը—այսինքն հեղինակի աշք ծակող միտումը, նպատակը (ԼՄ, Գ, 124) և այլն:

Դրականագիտության և համապատասխանաբար գրականագիտական տերմինաբանության զարգացման հետագա ընթացքը որոշեց և օրինականացրեց այս բազմաթիվ զուգահեռ ձևերից, նոր տերմիններ կերտելու փորձերից ավելի կենսունակ տերմինները, որոնք կիրառելի են մինչև այսօր: Վերոհիշյալ տերմինները և նրանց զուգահեռները բերվեցին ակնառու դարձնելու համար այն պրոցեսը, որի ընթացքում և ի՞նչ ձիգերով ու շանքերով են ժամանակին կերտվել հայերեն գրականագիտական տերմինները:

բ) Նախորդ բաժնում գրությամբ տարրեր, սակայն միևնույն գրա-

կանագիտական իրակությունը, հասկացությունը արտահայտող տերմինները քննելիս խոսվեց նաև այն մասին, որ որոշ հեղինակներ կերպելով հայերեն որևէ տերմին կամ լեզվի բառային կազմում եղած որևէ բառ կամ բառի մի իմաստ գրականագիտական նշանակությամբ կիրառելիս փակագծված կամ առանց փակագծերի գրել են նաև համապատասխան օտար տերմինը՝ օտարագիր կամ հայտառու Հետագայում գրականագետներից ոմանք օտար տերմինը գործածել են որպես հայերեն տերմին: Վերջինս արդեն կերտված կամ գործածված հայերեն տերմինի կողքին գործառության մեջ մտնելով ներկայացնում է նաև սորդի զուգարանությունը, ինչպես ողբերգություն—տրագեդիա, փոխարերություն—մետաֆոր, առասպել—միֆ, քնարական—լիրիկալիան, շափ, շափականություն—ոփրմ, թատերգու, թատերգակ, թատերագիր—դրամատուրգ, արարված—ակտ, գեղագիտական—էսքետիկական, մենախոսություն—մոնոլոգ, երգիծարան—սատիրիկ, երգիծություն—հումոր, վիպային—ոռմանաթիկ, քննադատություն—կրիտիկա և այլն:

Սկզբնական շրջանում, հասկանալի է, որ որոշ խառնաշփոթ վիճակ կարող է ստեղծվել, և դա անխոսափելի է, սակայն, ինչպես ցուց է ուալիս գրականագիտական տերմինների զարգացման պատմությունը, հայ հեղինակները, գրականագետները զանացել են գրականագիտական տերմինաբանությունն ազատել ավելորդ, անհարկի փոխառություններից, վերսկսելով կիրառել հայերենում առկա ձևերը կամ կերտել նորերը. օրինակ՝ մետամորֆոզ—կերպարանափոխություն, ֆելիետոնիստներ—կատակողներ, սխոլաստիկ—դպրոցական և այլն:

Այլ հարց է, թե այդ նորակերտությունների ո՞ր մասը դիմացակամանակի քննությանը. նշանակալին այն է, որ մեծ աշխատանք կատարվեց կերտելու, ապա կարգավորելու հայերենի գրականագիտական տերմինաբանությունը:

Հասկանալի է, որ որոշ թվով անհաջող նորաբանություններ դուրս մնացին գործառությունից, ինչպես. վիպական—ոռմանտիկ, նախապահել—պասկվիլ, գերակշռող խազը—լիյոտմոտիվ, խորեգրակիր—միատիկ, կատակեներ—ֆարս, կատակ—վոդեվիլ, կատակող—ֆելիետոնիստ, դպրոցական—սխոլաստիկ և այլն:

Ավելի բնորոշ երևույթը օտար ձևերից ազատվելու և փոխարենը հայերեն տերմինը հանձնարարելն է, հարկ եղած դեպքում նոր տերմին կերտելը կամ կիրառության մեջ եղած բառին նոր՝ գրականագիտական իմաստ վերագրելը:

Այդ երևույթի ակնառու պատկերն է ներկայացնում 1972 թ. հրատարակված և 1980 թ. վերահրատարակված էդ. Զրբաշյանի և Հ. Մախչանյանի կազմած «Գրականագիտական բառարանը», ուր բազմաթիվ

օտար տերմիններ, թեև մտել են բառացանկի մեջ, սակայն հանձնաւ-  
րարվում են նրանց հայերեն համարժեքները, ինչպես՝

ալեգորիա տե՛ս այլաբանություն  
ալիտերացիա » բաղաձայնույթ  
ամֆիբրաքոս » քողաղոտ  
անափոր » հարակրկնություն  
անտիթեզ » բառական հակա-  
դրություն

ապոկրիֆներ » պարականոն գըր-  
քեր

ասինդետոն » անշաղկապություն  
ասոնանս » առձայնույթ  
արխահղմ » հնաբանություն  
աֆորիզմ » իմաստալից կամ

թևավոր խոսք

բիբլիոգրաֆիա » մատենագիտու-  
թյուն

գալլիցիզմ » գաղիաբանություն  
գրադացիա » աստիճանավորում  
դակտիլ » ստեղն  
դեկադենտություն » անկումային  
արվեստ

դիալեկտիզմներ » բարբառային  
բառեր

դիալոգ » երկխոսություն  
էլեգիա » եղերերգություն  
էլիպսիս » բացթողում  
էպիգրաֆ » բնաբան  
էպիզոդ » միջադեպ  
էպիլոգ » վերջերգ  
էպիստոլար գրականություն »  
նամականի

էպիտետ » մակդիր  
էպիֆոր » վերջույթ  
էսթետիկա » գեղագիտություն  
էվֆոնիա » բարեհնշումություն  
էքսպոզիցիա » նախադրություն

իդեոլոգիա » գաղափարախոսու-  
թյուն

իդիլիա » հովվերգություն  
ինսցենիրովկա » բեմականացում  
ինվերսիա » շրջադասություն  
ինտոնացիա » ելմէշավորում  
իրոնիա » հեգնանք  
լիտոտա » փոքրացում  
լիրիկա » քնարերգություն  
լիրոէպիկական ժանրեր » քնա-  
րաէպիկական ժանրեր  
խարակտեր » բնավորություն  
խոր » երգչախոսմբ  
կարիկատուրա » ծաղրանկար  
կլասիկ » դասական գրականու-  
թյուն

կոլորիտ » գունավորում  
կոմեդիա » կատակերգություն  
կոմենտար » մեկնաբանություն  
կոմպարատիվիզմ » պատմահա-  
մեմատական մեթոդ  
կուլմինացիա » գագաթնակետ  
հիմքերը » չափազանցություն  
հոկտորություն » ճարտասանու-  
թյուն

մաներա » գրելաձև  
մեմուարներ » հուշագրություն  
մետաֆոր » փոխարերություն  
մետոնիմիա » փոխանունություն  
մետրական ոտանավոր » չափա-  
կան ոտանավոր

մետրիկա » տաղաշափություն  
միֆ » առասպել  
միֆոլոգիա » դիցաբանություն  
մոնոգրաֆիա » մենագրություն  
մոնոլոգ » մենախոսություն

մորա » ամանակ  
նեկրոլոգ » մահախոսական  
նեռլոգիզմ » նորաբանություն  
նովել » նորավեպ  
շարժ » ծաղրանկար  
պասկվիլ » ծանակագիր  
պարալիզմ » զուգահեռակա-  
նություն  
պառազա » դադար  
պեյզաժ » բնանկար  
պերիպետիա » գործողության  
զարգացում  
պերիֆրազ » շըշասություն  
պերսոնաժ » գործող անձ  
պիոնիքոս » շեշտանկում  
պոլիսինդետոն » բազմաշաղկա-  
պություն  
պորտրե » դիմանկար  
պսեղոնիմ » կեղծանուն  
պրոզա » արձակ  
պրոզոպոզեա » անձնավորում  
պրոլոգ » նախերգանք  
պրովինցիալիզմներ » բարբառա-  
յին բառեր  
պուրիֆիստիկա » հրապարակա-  
խոսություն  
ռեցենզիա » գրախոսություն  
ռեժիսուր » կրկներգ  
սիլարիկ ոտանավոր » վանկա-  
կան ոտանավոր  
սիլարոտոնիկական ոտանավոր »  
վանկաշշտական ոտանավոր  
Վերջին տարիների գրականագիտական և գրաքննադատական գրա-  
կանությանը հետևելիս ակնառու է դառնում այն փաստը, որ բերված  
տերմիններից շատերն այսօր հազվագեց են հանդիպում, ինչպես՝ ան-  
տրակա, բիոգրաֆիա, դիալեկտիզմներ, էպիգրաֆ, էպիգոդ, էպիլոգ, է-  
պիսույաց գրականուրյուն, էսթետիկա, էսպոզիցիա, իդեոլոգիա, իդի-  
լիա, ինսցենիրովկա, ինվերսիա, իրոնիա, լիրիկա, խարակաեր, խոր,  
կարիկատուրա, կլասիկ, կոմեդիա, կուլմինացիա, մաներա,

սիմվոլ » խորհրդանշան  
սիտուացիա » իրադրություն  
ստիլ » ոճ  
ստիլիզացիա » ոճավորում  
վարիանտներ » տարբերակներ  
վարվարիզմներ » օտարարանու-  
թյուն  
վերիբր » աղատ ոտանավոր  
վուզարիզմ » գոեհկաբանություն  
տավոլոգիա » նույնաբանու-  
թյուն  
տենդենց » միտում  
տերցետ » եռատող  
տոնիկական ոտանավոր » հա-  
մաշեցած ոտանավոր  
տրագեդիա » ողբերգություն  
տրագիկոմեդիա » ողբակատա-  
կերգություն  
տրիլոգիա » եռապատում  
տրոպ » այլաբանություն  
ցեղուրա » հատած  
ցիկլ » երկաշար  
ցիտատ » մեջբերում  
քատրեն » քառատող տուն  
քրոնիկոն » ժամանակագրություն  
օդա » հիմն, ներբող, ձոն  
ֆանտազիա » երևակայություն  
ստեղծագործական  
ֆիլոլոգիա » բանասիրություն  
ֆուլկոր » բանահյուսություն ժո-  
ղովրդական  
ֆորմալիզմ » ձևապաշտություն:  
Վերջին տարիների գրականագիտական և գրաքննադատական գրա-  
կանությանը հետևելիս ակնառու է դառնում այն փաստը, որ բերված  
տերմիններից շատերն այսօր հազվագեց են հանդիպում, ինչպես՝ ան-  
տրակա, բիոգրաֆիա, դիալեկտիզմներ, էպիգրաֆ, էպիգոդ, էպիլոգ, է-  
պիսույաց գրականուրյուն, էսթետիկա, էսպոզիցիա, իդեոլոգիա, իդի-  
լիա, ինսցենիրովկա, ինվերսիա, իրոնիա, լիրիկա, խարակաեր, խոր,  
կարիկատուրա, կլասիկ, կոմեդիա, կուլմինացիա, մաներա,

մեմուարներ, մետաֆոր, մետրիկա, միֆ, միֆոլոգիա, մոնոգրաֆիա, նեկրոլոգ, պարալելիզմ, պառուզա, պեյզաժ, պերսոնաժ, պերիֆրազ, պլազմատ, պորտրետ, պսեղոնիմ, պրոզա, պրոլոգ, պրովինցիալիզմներ, պուրիլիցիստիկա, ուցենզիա, սիմվոլ, սիտուացիա, սախլ, սախլիզացիա, վարիանտներ, տափառոգիա, տենդենց, տրաքեդիա, տրադիցիա, արիլոգիա, ցենզուրա, ցիկլ, ցիտատ, օդա, ֆանտազիա, ֆիլոլոգիա, ֆոլկլոր, քանի որ նրանց հայերեն համարժեքները ավելի հասկանալի ու մատչելի են հայ ընթերցողին, թեև բանավոր խոսքի մեջ, խոսակցական լեզվում տակավին հանդիպում է դրանց մի մասը: Սակայն ուզում ենք նշել, որ հայերեն գրականագիտական բառարաններում տեղ գտած որոշ, փոքրաթիվ օտար տերմիններ իզուր ծանրաբեռնում են բառացանկը, օրինակ՝ ասինդետն, գրադացիա, էպիֆոր, էվֆոնիա, լիտոա, կոմպարատիվիզմ, մետոնոմիա, նեռլողիզմ, պերիպետիա, պերիֆրազ, պոլիսինդետն, պրոզոպեա, ուժերեն, վարվարիզմներ, վերլիբր, վուզարիզմ և այլն:

Նման օտար տերմինների գործածությունը իրավացիորեն չի խրախուսվում և հանձնարարվում են դրանց հայերեն համարժեքները:

Հայերեն գրականագիտական տերմինների բառային զուգահեռ ձեզերից ամենից տարածվածը և տերմինաբանության մեջ ամենախոցելին ու անհանձնարարելին հայերեն համանուններն ու համանիշներն են: Վերջիններս որքան խրախուսելի ու դրական են գեղարվեստական գրականության կամ հրապարակախոսության լեզվում, նույնքան խոտաններ են գիտական տերմինաբանության մեջ:

Որևէ գիտաճյուղի, ինչպես նաև գրականագիտական տերմինաբանության կարգավորման գործում անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել այս երևույթին: Այդ պետք է իրագործել համապատասխան մասնագետների ու հանձնաժողովների հսկողությամբ, նրանց չանքերով կազմել ու քննարկել մասնաճյուղային տերմինաբանների նախագծեր:

Այժմ քննենք հայերեն գրականագիտական տերմինների համանիշների տեսակներն ու նրանց կերտման միջոցները:

Նույն արմատի տարրեր ածանցված ու բարդված ձևեր.

ա) օտար արմատի -իկ կամ -իվ վերջածանցներով կարճ ձևեր և -յան կամ -ական հայերեն վերջածանցներով կրկնածանցված ձևեր, ինչպես՝ անտիկ—անտիկյան, դետեկտիվ—դետեկտիվային (գրականություն), դրամատիկ—դրամատիկական, կլասիկ—կլասիկական, մետրիկ—մետրիկական (ոտանավոր), լիրիկ—լիրիկական, ոռմանտիկ—ոռմանտիկական, սիոլաստիկ—սիոլաստիկական, ֆանտաստիկ—ֆանտաստիկական և այլն:

բ) Հայերեն նույն արմատի տարբեր ածանցներով ածանցված կամ ձևաբանական տարբեր ձևեր, ինչպես՝ աշխատասիրություն—աշխատություն—աշխատանք, արկածախնդրական—արկածային (գրականություն), բարեկենդանական խաղերգ—բարեկենդանի երգ, գողթան երգեր—գողթնյաց երգեր, գործող անձինք—գործող անձեր, գրաբարաբանություն—գրաբարիզմներ—գրաբարյան բառեր, գրախոսական— գրախոսություն, գրականական (պատմություն, լեզու և այլն)—գրական, գրավորական—գրավոր, գրելակերպ—գրելաձև—գրելու ձև, գրության կերպ—գրության ձև, եղերգ (ներ)—եղերգություններ, եղերերգեր— եղերգություններ, երգիծաբանական (երգեր)—երգիծական, երգիծող—երգիծողական, երգիծողություն—երգիծություն, երկասիրություն—երկ, զրուցաբանություն—զրուցյաց, կանցաղային (դրամա, պիես)—կենցաղագրական, հառաջաբան—հառաջաբանություն—առաջաբան, հավելագրություն—հավելված, հինգոտնյա (յամբ)—հինգոտանի (անդամներ), նախաբանություն—նախաբան, նույնոտնյա—նույնոտնյան (ազատ ոտանավոր), պրոլետարական—պրոլետ (գրող), սիրային—սիրո (երգեր), վերջաբանություն—վերջաբան, քառոտանի—քառոտնյա (ոտանավոր), քերթված(ք)—քերթություն, քնարերգակ—քնարերգու, օրորներ—օրորք և այլն:

գ) Հայերեն նույն արմատի այլ արմատներով բարդված ձևեր, ինչպես՝ առակագիր—առակախոս, ավանդավեպ—ավանդագրուցյաց, գրելակերպ—գրելաձև, թատերգու—թատերգակ—թատերագիր, եռապատում—եռերգություն, վերտառություն—վերնագիր—խորագիր, ծածկանուն—կեղծանուն, ծանոթաբանություն—ծանոթագրություն, շափաբանական—շափաբերական (գրված, քերթված), վերջերգ—վերջաբան և այլն:

դ) Համանիշ արմատների կամ բառերի ածանցված ձևեր, ինչպես՝ անձնավորում—շնչավորում, բանագողություն—գրագողություն, բարբառանություն—գավառաբանություն, գաղիաբանություն—ֆրանսաբանություն, երեխայական—մանկական (երգեր), երկ(ա)խոսություն—տրամախոսություն, ժամանակագրություն—տարեգրություն, մետրական—շափական (ոտանավոր), տաղարան—երգարան և այլն:

ե) Բառակապակցությունները կամ հարադիրները և նրանցով կազմված բարդությունները, ինչպես՝ առակաց գիրք—առակագիրք, գրելու ձև—գրության ձև—գրելաձև, գրության կերպ—գրելակերպ, պրոլետարական գոռաներ—պրոլետ գրողներ—պրոլետգրողներ, պատմական վեպ—պատմավեպ, պատմական իլիպասանություն—պատմավիպասանություն, սիրո երգ—սիրային երգ—սիրերգ և այլն:

զ) Երբ երկու բաղադրիչներից բազկացած բառակապակցությունները արտահայտվում են՝ ություն վերջածանցով ածանցված մեկ բա-

ոռվ, ինչպես՝ բեկոնական ուղղություն—բեկոնականություն, բնապաշտական ուղղություն—բնապաշտություն, գրաբարյան բառեր, գրաբարյան փոխառություններ—գրաբարաբանություններ, եկամուտ բառեր—փոխառություններ, լակոնական ոճ—լակոնականություն և այլն:

է) Օտար տերմինը թարգմանվում է հայերեն բառակապակցությամբ, օրինակ՝ դրամատուրգիա—դրամատիկական կամ թատերգական սեռ, աֆորիզմ—իմաստալից կամ թևավոր խոսք, լակոնիզմ—լակոնական ոճ և այլն:

ը) Տարրեր ժամանակներում և տարրեր հեղինակների կողմից կերտված ու կիրառված երկու կամ ավելի հայերեն համանիշների շարքեր, ինչպես՝

ասք, պատմազրույց, պատմություն

ավանդազրույց, ասք

արարված, գործողություն, արար բնաբան, վերտառություն

դյուցազնավեպ, վիպերգություն

դրամատիկական, թատերգական (սեռ)

ժողովրդական ստեղծագործություն, ժողովրդական քանահյուսություն իմաստալից խոսք, թևավոր խոսք

հանգուցալուծում, լուծում

մատենագրություն, գրականություն

ներշնչանք, ոգեշնչում

նոյսազերգություն, ողբերգություն

սկիզբ, նախերգ

սպիտակ ոտանավոր, անհանգ ոտանավոր և այլն:

Համանիշների շարքում նկատելի են հետեւյալ երևույթները.

ա) Լեզվի համար գործածական բառը բարդման կամ ածանցման միջոցով ստանում է առավել որոշակի՝ գրականագիտական նշանակություն, օրինակ՝ լուծում>հանգուցալուծում, վիճակ>վիճակիսաղ(եր) և այլն:

բ) Գրականագիտական տերմինը հավելագրվում է, ինչպես՝ տաղ>տաղերգ, խաղ>խաղերգ և այլն:

#### ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տերմինային զուգահեռ ձևերի առաջացման պատճառներից մեկն է փոխանունությունը, որը հատուկ է ընդհանուր լեզվին (հայերենին), երբ այս կամ այն խոսքի մասը կիրառվում է մի այլ խոսքի մասի արժեքով։ Այդ երևույթը հատուկ է գրականագիտական տերմիններին նույն-

պես: Ավելի տարածված է ածականի գոյականաբար և գոյականի ածականաբար գործառությունը: Բերենք դրանց ոչ լրիվ ցանկը:

Ածական անուններ, որոնք գրականագիտական գրականության մասնակիությունը են կիրառված գոյականաբար, երբ որևէ հատկանիշ արտահայտող բառը ստանում է այդ հատկանիշը կրողի՝ գոյական անվան իմաստ, ածական+գոյական կապակցությունը կրճատվում է, գոյականը դուրս է մնում, և ածական անունը ստանալով որոշիլ հոդ, կիրառվում է որպես նախկին ածական+գոյական կառույցը ներկայացնող ածական+որոշիլ հոդ նոր գոյական կառույցը, օրինակ՝ դամբանական խոսք (ածական+գոյական) կապակցությունը կրճատվելով, խոսք բառը ընկնում է (ածական+գոյական—գոյական), մնում է դամբանական ածականը, որը ստանալով ը որոշիլ հոդը, կիրառվում է գոյականաբար և հասկացվում որպես «դամբանական խոսք», այսպես են նաև հետեւյալ ածական անունները. այլարանական, արձակ, բանաստեղծական, գեղարվեստական, գրախոսական, գրավոր, գրավորական, գրշագիր, ինքնազգիր, խմբագրական, կենսագրական, հանգավոր, երաշապատում, ձեռագիր, նշմարտապատում, մանրապատում, մատենագրական, մատենախոսական, ներռողյան, ոտանավոր, շափական, վիպասանական, բնարական, բնարերգակ և այլն:

Գոյականաբար կիրառվող ածականների մի խումբ արտահայտում է այդ հատկանիշը կրող անձը, ինչպես՝ առակախոս նեղինակ (ՎՓ, 618) կապակցությունը, կրճատվելով մնում է միայն առակախոս ածական անունը, որը ցույց է տալիս հեղինակի առակախոսությամբ գրաղվելլ, առանց նեղինակ գոյական անվան նույնպես նշանակում է «առակներ գրող», այսպես են նաև հետեւյալ բառերը, առակագիր, բանաստեղծ, գեղագիր, գրագետ, երգիծաբան, բատերագիր, բատերգակ, կենցաղագիր, հագներգու, նեղնարան, երապարակագիր, ներռողագիր, ողբասաց, ողբերգու, պատմիչ, ուալիստ, ումանտիկ, սիմվոլիստ, վիպարագման, վիպասան, տաղաչափ, բնարերգակ, բնարերգու և այլն:

Ածական անունների մի խումբ ունի գոյականաբար կիրառություն, երբ գործածվում է հոգնակի թվով՝ ստանալով՝ եր կամ ներ, –ք հոգնակերտ վերջավորությունները, օրինակ՝ բարոյախոսական բանաստեղծություն, բարոյախոսական ստեղծագործություն կապակցությունները կը բճառ ձևով բարոյախոսական+ներ կիրառվում են գոյականաբար որպես «բարոյախոսական բանաստեղծություններ» կամ «ստեղծագործություններ», ինչպես նաև հետեւյալ ածական անունները. բացասական, երգիծաբանական, երգիծական, հովվերգական, ներռողական, նկարագրական, սիրային, բնարերգական(թ) և այլն:

Բացի ածական անուններից, ենթակայական դերբայլը, որը նույնպես ունի ածական կիրառություն, որոշ դեպքերում ստանալով նույնիսկ ինքնուրույն բառի իրավունք, նշանակում է այդ գրաղմունքն ունեցող անձ, օրինակ՝ գրող, գրչագող, երգիծող, հեգնող (Ներ), շարադրող, վիպագրող, ֆերող և այլն:

### ՀԱԿԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գրականագիտական տերմինաբանության մեջ ևս առկա է հականշությունը:

Հականշությունը գրականագիտական տերմինաբանության մեջ իրականացվում է հականշության հնարավոր միջոցներով՝ ինչպես բառային, այնպես էլ բառակազմական.

1) բառային հականիշներից գրականագիտական տերմինների շարքում հանդիպում են. անեծք և օրենիերգ, արձակ և շափածո, արձակագիր և բանաստեղծ, բացասական կերպար և դրական հերոս, անկումային գրականություն և առաջադիմական գրականություն, գրավոր և բանագոր գրականություն, երկխոսուրյուն և մենախոսուրյուն, օտարաբանուրյուն և մաերամոլուրյուն, ծանակագիր և ծոն, կատակերգուրյուն և ոպերգուրյուն, սկիզբ և վերջ, համանիշ և հականիշ, հնարանուրյուն և նորաբանուրյուն, նախադրուրյուն և ետադրուրյուն, միհատորյակ և բազմահատորյակ, նախերգանք և վերջերգ, նախարան և վերջարան, ումանատիզմ և ուսալիզմ, նովվերգուրյուն և ուրբանիզմ, փոխառուրյուն և բնիկ բառ և այլն:

2) Գրականագիտական հակադիր հասկացություններն ու իրակությունները արտահայտելու բառակազմական միջոցներից ամենատարածվածը ժխտական նախածանցների կիրառումն է:

ա) ան- ժխտական նախածանցով և առանց ածանցի տերմիններ, օրինակ՝ նաևգավոր և անենակ (ոտանավոր), գրավոր և անգիր (գրականություն), տպագրված և անտիպ (երկ), շեշտակիր և անշեշտ (վանկ) և այլն.

բ) համա- և հակա- հականիշ- նախածանցներով կազմված տերմիններ, օրինակ՝ գեղարվեստական և նակագեղարվեստական, պատերազմյան և նակապատերազմյան (թեմա), համանիշ և հականիշ (բառ), նույնանուն և նականուն (բառեր) և այլն:

### ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅՑԻՆ ՎԵՐՍԻՇՈՒԹՅՈՒՆ

Բառակազմական վերլուծության ենթարկելով հայ գրականագիտական տերմինները, հնարավորություն է ստեղծվում պարզելու հայ

գրականագիտական տերմինների կազմության օրինաշաբություններն ու առանձնահատկությունները:

Քննենք գրականագիտական տերմինաբանությանը բնորոշ բառակազմական միջոցները, տերմինների կառուցվածքը և որոշենք նրանց յուրահատուկ բառակազմական կաղապարները:

Դրականագիտական տերմինները ըստ կազմության բաժանվում են հետևյալ խմբերի.

### Պարզ կամ արմատական տերմիններ

Այս տերմինները, անկախ առաջացման պատմությունից և ժամանակից, դիտվում են որպես պարզ, առանց բաղադրիչների կառուցվներ: Գրականագիտական տերմինների համակարգում արմատական տերմինները բավականին մեծ թիվ են կազմում, օրինակ՝ անեծի, աշուղ, առած, առակ, ասէ, գանձ, զիրէ, զլով, զովէ, գուսան, երգ, երկ, գրույց, բուղբ, խաղ, կատակ, կերպար, հերոս, հերիար, նար, մաս, նվազ, շեշտ, ողբ, ոճ, ոտ(f), շափ, պատկեր, պրակ, սաղմոս, վարդ, վեպ, տաղ, տուն, ուղերձ, քարոզ և այլն:

Պարզ (արմատական) տերմինները թեև փոքրաթիվ են տերմինային բառակապակցությունների համեմատությամբ, սակայն ունեն գործածության մեծ հաճախականություն: Նրանք մասնակցում են բաղադրյալ (վերլուծական) տերմինների կազմությանը:

Արմատական տերմինները միաբառ են, ինչպես նաև բարդ, ածանցավոր, բարդ-ածանցավոր և բարդ-բաղադրյալ:

### Բարդ տերմիններ

Բարդ տերմինները, լեզվի բարդ բառերի նման, կազմված են մեկից ավելի արմատներից: Բառաբարդումը որպես տերմինակերտման միջոց իրականացվում է ա հոդակապի միջոցով և առանց նրա մասնակցության:

ա) Ա. հոդակապով բարդված գրականագիտական տերմինների թիվը ավելի մեծ է անհոդակապ բարդությունների համեմատությամբ, ինչպես՝ առակագիր, առակագիրէ, առակախոս, առաջարան, առասպելարան, ավանդագրույց, ավանդավեպ, բանաստեղծ, բանատող, բառաքան, բնագիր, զյուղագիր, գրագող, գրախոս, գրաքննադատ, գրելածեն, եռատող, երգիծարան, բատերախաղ, բատերագիր, մատենաշար, մեծասար, մեծավերջ, նախարան, ներքողագիր, նովելագիր, նովելաշարէ, նորավեպ, պատմվածաշար, պատմվածքագիր, վերջաբան, վլպաշար, քառատող և այլն:

բ) Առանց հողակապի բարդ տերմիններից ևն՝ գիշերեգ, եղերգ, եռանդամ, երկշշտ, քատերգու, քատերեգ, խաղերգ, կինոլրամատուրգիա, հատընտիր, նույնամանակ, ուլթերգ, տաղերգ, օրիներգ և այլն:

Դրականագիտական բարդ բառ-տերմինների ցանկը զննելիս առանձնանում են կառուցման հետևյալ կաղապարները:

Վերջիններս՝ քննենք երկու տեսանկյունով.

1. Ի՞նչ խոսքի մասերի են պատկանում բարդ տերմինի բաղադրիչները:

ա) Գոյական+գոյական կաղապարն են ներկայացնում գիշեր-երգ, ոլոր-երգ, տաղ-երգ, բան-ա-տող, առասպել-ա-բան, առակ-ա-զիր, բառ-ա-խաղ և այլն:

Այս կաղապարն ունեցող բարդ բառ-տերմինների մեջ հանդիպում են և հնչյունափոխված արձատներ, ինչպես օրինակ՝ բն-ա-բան, բն-ա-զիր, գր-ա-գող, գր-ա-խոս, վիպ-ա-շար, վիպ-ա-զիր և այլն:

բ) Ածական+գոյական կաղապարը, ինչպես օրինակ՝ եղ-երգ, մեծ-ա-սար, մեծ-ա-վերջ, նոր-ա-վեպ, արձակ-ա-զիր և այլն:

գ) Թվական+գոյական կաղապարը հատուկ է մասնավորապես տաղաշափական տերմիններին, ինչպես օրինակ՝ եռ-անդամ, երկ-շշտ, եռ-ա-տող և այլն:

դ) Դերանուն+գոյական կաղապարով բարդ տերմինները քիչ են հանդիպում գրականագիտության մեջ, օրինակ՝ նույն-ամանակ, նույն-ա-նանգ, նույն-անդամ և այլն:

ե) Նույնպես սակավադեպ են բայ+գոյական կաղապարով կառուցված բարդ տերմինները, ինչպես օրինակ՝ գրել-ա-ձև, պատմել-ա-ձև և այլն:

2. Բարդ տերմինների կաղապարները առանձնացվում են, հաշվի առնելով, թե նրանց բաղադրիչները տերմիններ են, թե՝ լեզվի համապորձածական բառ:

Այս տեսակիտից գրականագիտական տերմինաբանության մեջ դիտարկվում են հետևյալ կաղապարները.

ա) տերմին+ոչ տերմին, ինչպես օրինակ՝ առակ-ա-խոս, բառ-ա-խաղ, մատեն-ա-շար, վիպ-ա-շար, գր-ա-գող և այլն:

բ) Տերմին+տերմին կառուցյան ունեն խաղ-երգ, գր-ա-գրող, ներբաղ-ա-զիր, քատր-երգ, կինո-դրամատուրգ և այլ բարդ տերմիններ:

գ) Ոչ տերմին+տերմին կաղապարով են կազմված գիշեր-երգ, սիր-երգ, երաշ-ա-պատում, զյուղ-ա-զիր, աղվես-ա-զիր և այլ տերմիններ:

դ) Ոչ տերմին+ոչ տերմին կառուցյաները շատ սակավադեպ են, ինչպես օրինակ՝ հատ-ընտիր, առաջ-ա-բան և այլն:

Հայ գրականագիտական տերմինների ցանկը դիտարկելիս նկատելի է, որ բարդ տերմինների բաղադրիչների մի մասը ավելի ակտիվորեն է մասնակցում բառաբարդմանը. նրանք կազմում են տերմինային շարքեր, ինչպես օրինակ՝ առակ բաղադրիչով՝ առակագիր, առակագիրք, առակախոս. բառոն բառի հնչյունափոխված բառը, բառեր- բաղադրիչով՝ բառերագիր, բառերապատկեր, բառերգու, բառերերգ. վեպ բառի նույնպես հնչյունափոխված վիպ- բաղադրիչով՝ վիպագիր, վիպարագման, վիպաշար, վիպերգ և այլն:

Բարդ բառ-տերմինների կազմության մեջ որպես երկրորդ բաղադրիչ հաճախ է հանդիպում -գիր «գրող» նշանակությամբ, ինչպես օրինակ՝ առակագիր, բառերագիր, ներբողագիր, նովելագիր, վիպագիր և այլն:

### Ածանցավոր տերմիններ

Ածանցավոր բառ-տերմինները զգալի տեղ են գրավում հայ գրականագիտական տերմինների համակարգում: Բառակազմական ածանցները ինչպես համընդհանուր լեզվի բառակազմության, այնպես էլ տերմինակերտման ամենակենսունակ ձեաբանական միջոցներից են: Նրանք դրվելով հիմնական ձևույթների վրա, տալիս են նոր իմաստ, ստեղծում նոր բառ: Գրականագիտական տերմին-ածանցավոր բառերը կերտվում են առավելապես ածականակերտ մասնիկներով:

Հայ գրականագիտական ածանցավոր բառ-տերմինները համաձայն ընդունած ածանցների, ըստ կազմության լինում են.

ա) նախածանցավոր տերմինները գրականագիտության մեջ թվով քիչ են՝ վերջածանցավոր կամ բաղադրյալ տերմինների համեմատությամբ:

Գրականագիտական տերմինակերտմանը մասնակցել են հետևյալ նախածանցները.

Ան- ժխտական նախածանցով կազմված (անգիր, անտիպ, անհանդ, անտունի)<sup>37</sup>, արտ- (արտահայտչականություն, արտահայտություն), բաղ- (բաղաձայնույթ, բաղդատություն), բաց- (բացականշություն, բացթողում), ենք- (ենթաբնագիր, ենթագլուխ), հակ- (հակադրություն, հականիշ), համ- (համաշեշտ, համառոտագրություն, համեմատություն), հար- (հարաշեշտ), մակ- (մակագիր, մակագրություն, մականում, մակդիր), ներ- (ներածություն, ներածական, ներշնչանք), ջար- (ջարերգ, ջարագրություն), պար- (պարականոն, պարբերություն), վեր- (վերածնություն, վերնագիր, վերտառություն), տրամ- (տրամա-

խոսություն), փոխ- (փոխաբերություն, փոխանունություն, փոխառություն):

բ) Վերջածանցավոր բառ-տերմինները, ինչպես ասվեց, ավելի մեծ թիվ են կազմում: Տեղմինակերտմանը մասնակցող վերջածանցները ըստ խոսքի մասեր կերտելու դերի լինում են՝ գոյականակերտ, ածականակերտ, մակրայակերտ:

Գոյականակերտ վերջածանցներով կազմված գրականագիտական տերմիններից են. -ած, -ված(ֆ) (ասացված(ք), արարված, գրված(ք)), հատած, պատմվածք, քերթված(ք), -ածու (ժողովածու, հավաքածու), -ակ (ամանակ, արձակ, գրչակ, վիպակ), -անի (նամականի, ընտրանի), -անք (երգիծանք, նախերգանք, ներշնչանք), -ար (կերպար, տիպար), -արան (գանձարան, երգարան, հիշատակարան, տաղարան), -իշ (պատմիշ, գրիշ), -յակ (հնգյակ, ութ(ն)յակ, քառյակ), -յուն (լալյուն), -ող (գրող, քերթող), -ոն (գեղոն, թերթոն, լալոն), -որ (հատոր, հորդոր), -ուկ (հանելուկ), -ումի (արձակագրումի, բանաստեղծումի, հեղինակումի, վիպասանումի, քերթողումի), -ույթ (առձյունութ, ասույթ, վերջույթ), -ույկ (գրքույկ), -ույց (զրոյց, հանգույց), -ունչ (մրմունչ(ք), տըրտունչ), -ուրդ (կցուրդ):

-Աւրյուն և -ում գոյականակերտ վերջածանցները ամենակենսունակն են, որոնք միանում են առավելապես նախածանցավոր կամ բարդ բառ-տերմիններին, ինչպես՝ այլաբերություն, առակարանություն, առակագրություն, ավանդություն, բազմաշաղկապուրյուն, բանահյուսություն, բանասահծություն, բարանություն, գրծողություն, գրագություն, գրախոսություն, դիմանություն, եներգություն, նոխազերգություն, ողբերգություն, բնաբերգություն և այլն, և այլն:

-Ում վերջածանցով կազմված տերմինները ավելի պակաս են, քան նախորդները (անդամատում, անձնավորում, ավանդապատում, բացրողում, եռապատում, հանգավարում, հանգուցալութում, հրաշապատում, նշանապատում, մանրապատում, շնչավորում, տղատում և այլն):

Ածականակերտ վերջածանց ունեցող բառերը գրականագիտական տերմինային կապակցությունների մեջ հանդիս են գալիս որպես առաջին բաղադրիչ՝ որոշիչի դերում:

Ածականակերտ հետևյալ վերջածանցներով են կերտվում գրականագիտական տերմինները.

-ական վերջածանցը ամենակենսունակն է (դամբանական, գրախոսական, շարական, մանկական, քնարական, գեղջկական), -յին (ասքային, արկածային, սիրային, աշխատանքային), -ացի (բերանացի), -յա

(ազատունյա, ալլունյա, բարդունյա), -ծո (չափածո), -վոր (անդամակոր, բանավոր, դաշնակավոր, Հանգավոր):

Թվականակերտ վերջածանցներից գրականագիտական տերմինների կերտմանը մասնակցում են շատ սակավաթիվ վերջածանցներ, ինչպես օրինակ՝ -ին, -որդ, որոնցով կերտվում են դասական թվականներ, իսկ վերջինները կազմում են տերմինային բառակապակցությունների բաղդրիչ մասը՝ որոշիչի դերում, ինչպես օրինակ՝ առաջին ամանակ, առաջին, երկրորդ, երրորդ, շորտորդ պետոն:

Մակրայակերտ վերջածանցներից հանդիպում են -պես և -որեն ածանցները, որոնցով օտար ձևույթներից կազմված են ֆունկցիոնապես, որիմորեն անկենսունակ և անիմաստ մակրայները:

Վերջածանցավոր բառ-տերմինների այս բաժանումը որոշ շափով պայմանական է, քանի որ վերջածանցներից մի քանիսը լինելով գոյականակերտ, մասնակցում են նաև ածական անունների կերտմանը կամ ածականակերտ վերջածանցով կազմվում է նաև գոյական անուն, ինչպես օրինակ՝ արծակ, հայրեն, խաղիկ, վեպիկ և այլն:

Ճիշտ է, դրանց մեջ հանդիպում են փոխանուն բառ-տերմիններ, որոնց մասին խոսվել է գրականագիտական տերմինների փոխանունությանը վերաբերող մասում:

Գրականագիտական տերմինների ցանկը նայելիս նկատում ենք, որ հայերեն ածանցներով ածանցվում են ոչ միայն հայերենի ձևույթներն ու արմատները, այլև կցվելով օտար արմատների կամ ձևույթների, կերտում են նոր տերմին:

Փոխառյալ բառաձևույթների վրա դրվելով գրականագիտական տերմիններ են կերտում հայերենի հետեւյալ ածանցները. նախածանցներից՝ ան-, հակ-, վերջածանցներից՝ -ություն, -ում (գոյականակերտ), -ական, -ային, յան (ածականակերտ) և -պես, -որեն (մակրայակերտ):

Փոխառյալ գոյական անվանը կցվելով, ան- ժիրտական նախածանցը կերտում է անկոնֆիլիկտ ածական անունը, օրինակ՝ անկոնֆիլիկտ բնարեգուրյուն:

Հայերեն -ություն գոյականակերտ վերջածանցը դրվելով փոխառյալ գոյական անվան վրա, կերտում է մի դեպքում՝ հավաքական իմաստ արտահայտող, ամբողջություն ցույց տվող գոյական անուն, ինչպես օրինակ՝ դեկադենտոթյուն, մյուս դեպքում՝ փոխառյալ գոյական անվան արտահայտած մասնագիտությունը, գրաղմունքը, օրինակ՝ հոեստորթյուն: Մի այլ դեպքում՝ փոխառյալ բառի արտահայտած հատկությունն ունենալը, օրինակ՝ ֆրազմենտարուրյուն:

Ավելի հաճախ օտար ձևույթով և հայերենի ածականակերտ ածանցով կերտված ածական անունից -ություն վերջածանցով կազմվում է

գոյական անուն, որը ցույց է տալիս օտար բառի արտահայտած հատկություն ունենալը, օրինակ՝ էպիկականության, լակոնականության:

—ային ածականակերտ վերջածանցի միջոցով փոխառյալ գոյական անունից կերտվում է ածական անուն, որը տերմինային բառակապակցության մեջ մտնում է որպես տեսակը նշող բաղադրիչ, ինչպես օրինակ՝ բիլինային, դակարիլային, դետեկտիվային, կալամբուրային, պեյզաժային, սյուժեատային և այլն:

—ական ածականակերտ վերջածանցով նույնպես փոխառյալ գոյական անուններից կերտվում են ածական անուններ, որոնք գրականագիտական տերմինային բառակապակցությունների կազմում կատարում հն որոշիչի դեր, սակայն ցույց են տալիս սեռի հատկություն, օրինակ՝ լի-րիկական, դրամատորգիական:

Օտար ածական անունների ձևույթներին կցվելով կազմում է հայերեն ածական անուն՝ տերմինային բառակապակցության մեջ մտնելով որպես որոշիչ բաղադրիչ, ինչպես օրինակ՝ էպիկական, ուռմանակական:

—յան ածականակերտ վերջածանցը նույնպես դրվում է փոխառյալ և գոյական, և ածական անունների կամ ձևույթների վրա՝ կերտելով ածական անուն, որը տերմինային բառակապակցության կազմում կատարում է որոշիչի դեր, օրինակ՝ ամֆիրբայան, անակրեոնյան, անապեսայան:

—վոր ածականակերտ վերջածանցը դրվելով օտար գոյական անվան վրա դրվելով կերտում է ածական անուն, որը տերմինային բառակապակցության մեջ որոշիչ բաղադրիչ է, օրինակ՝ բեյքավոր, տակասավոր:

—ում գոյականակերտ վերջածանցը դրվելով օտար գոյական անվան հայերեն —վոր ածականակերտ վերջածանցով ածական անվան վրա, կերտում է բայանուն, օրինակ՝ սիսաեմավորում: Նշենք, որ հայերենը միտում ունենալով մերժել օտար ձևերը և փոխարինել հայերեն համարժեքներով, սիսաեմ օտար բառը փոխարինելով հայերեն նամակարգ համարժեքով, կերտել է նամակարգում հայերեն բառը:

Հայերենի —ական, —յան ածականակերտ և —ուրյուն գոյականակերտ վերջածանցներով հատուկ անուններից կերտվում են նոր ածական և գոյական անուններ:

—ական և —յան վերջածանցները դրվելով հեղինակի կամ որևէ գրական կերպարի անվան վրա, կերտում են տվյալ հեղինակին կամ կերպարին բնորոշ հատկանիշ ցույց տվող կամ վերաբերող ածական անուն, ինչպես օրինակ՝ «Զարյանական կրակու ուղերձը քաջարի հայրենակիցներին» (մամուլ), սարմենական թեմաներ (ՍՀԳՊ, 2, 464), սարյանական սիմվոլներ (ՍՀԳՊ, 2, 223), նոմերական, սարոյանական նովել (մա-

մուլ), նարեկյան ազատ շափ, եզրպոսյան լեզու, օնեգինյան տուն, ալեքսանդրյան ոտանավոր և այլն:

—ուրյուն գոյականակերտ վերջածանցը գրական երկի հերոսի անունից կերտում է նրան բնորոշ հատկությունը՝ արտահայտող գոյական անուն, օրինակ՝ ակակիուրյուն, դոնիշուռուրյուն:

Նույն գերն է կատարում միջազգային ժիգմ վերջածանցը՝ դրվելով հայ գրականության մեջ հայտնի որևէ գրական կերպարի անվան վրա, օրինակ՝ բազնազարիզմ (ԱՀՊ, 1, 205):

### Բազմակի ածանցներով տերմիններ

Բազմակի ածանցներով բառ-տերմինների կաղապարներն են.

ա) մեկ բառարմատին կցվում են մեկից ավելի ածանցներ, առավելապես վերջածանցներ, ինչպես օրինակ՝ աշխատավորական (երգեր), դաշնակալվոր, դաշնակավորուրյուն, դասականուրյուն, էպիկականուրյուն, լակոնականուրյուն և այլն.

բ) բազմակի ածանցներով բառ-տերմինն ունի և նախածանց, և վերջածանց, օրինակ՝ անհատականուրյուն, բաղաձայնույթ, բաղդատուրյուն, բացականշուրյուն, մակագրուրյուն, ներածական, ներածուրյուն, փոխարեւուրյուն և այլն:

### Բարդածանցավոր տերմիններ

Բարդածանցավոր բառ-տերմինները կերտվում են բարդ բառերի, ածանցների, առավելապես վերջածանցների և ժխտական ան- նախածանցի միջոցով, ինչպես օրինակ՝ առակագրուրյուն, բանաստեղծուրյուն, զյուղագրուրյուն, երգիծարանուրյուն, նազներգուրյուն, նույնահանգարյուն, անշաղկապուրյուն:

### Համազոր բաղադրիչներով տերմիններ

Դրականագիտական տերմինների կազմում հանդիպում են ոչ մեծ թվով (ընդամենը երկու-երեք տասնյակ) երկրառ անվանումներ, որոնց կառուցում բաղադրիչ միավորները կարող են տեղերը փոխել և հավասարապես կատարել որոշիչի դեր, ինչպես օրինակ՝ ներբող-ոտանակոր կամ ոտանավոր-ներբող, պիես-պոեմ (պօեմ-պիես), պոետ-ավատառ, սյուժե-բովանդակուրյուն, վեպ-էպոպեա, թերթոն-վիպագրական, կոմեդիա-վոդեիլ, բնարեգու-բանաստեղծ:

Ինչպես տեսնում ենք բերված ցանկից, այս կառուցի բաղադրիչները գոյական անուններ են, բացառությամբ մեկի (թերթոն-վիպագրա-

կան, ի դեպ վիպագրական ածականը գոյականաբար է կիրառված), և եթե նրանց տեղերը փոխենք, նրանց արտահայտած բովանդակությունը չի փոխվի:

Այս տերմինները գրականության մեջ ստացել են բարդ-բաղադրյալ տերմիններ, երկհիմք բարդություններ կամ երկիմքեր անվանումները<sup>38</sup>:

### Տերմինային բառակապակցություններ

Գրականագիտական տերմինների անվանակարգը կազմող անվանումների գերիշխող մասը արտահայտվում է բառակապակցություններով:

Գրականագիտական տերմինային բառակապակցությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ նրանք բաղկացած են երկու, երեք լորս և, սակավ դեպքերում, հինգ բաղադրիչներից, ընդունում ամենից հաճախականը երկանդամ բառակապակցություն-անվանումներն են:

Այս տեսակի բառակապակցությունների բաղադրիչները կապված են որոշիչի և որոշյալի, հատկացուցիչի և հատկացյալի փոխկապակցությամբ, արտահայտվում են առավելապես գոյական և ածական անուններով, սակավաղեակ՝ մակրայներով, իսկ թվական անունները մասնակցում են առավելապես տաղաշափության տերմինների կերտմանը:

Այժմ ծանոթանանք գրականագիտական տերմինային բառակապակցությունների կառուցվածքին՝ ըստ բաղադրիչների թվի և, թե ինչ խոսքի մասերի են պատկանում:

Ըստ բաղադրիչների քվի լինում են.

ա) երկանդամ տերմինային բառակապակցությունները բաղկացած են երկու բաղադրիչներից, որոնցից մեկը ընդհանուր տերմին է, իսկ մյուսը բնորոշում է նրա մասնավոր տեսակը։ Հիմնական բառ-տերմինները որոշիչ-տերմինների միջոցով կազմում են շարքեր, ինչպես.

#### գրականություն

ակնարկային գրականություն	
անտիկ	»
արդի	»
արկածային	»
գրավոր	»
դետեկտիվ	»
գիտաֆանտաստիկ	»
երգիծական	»
էպիստոլյար	»
հրապարակագրական	»

արաբական	չափ
բանաստեղծական	»
հայկական	»
	ուսի
բառավանկ ուսիք	
բորեյական	»
քորեյամբ	»
սպոնդեոս ուսիք	
նորմալ	»

մանկական	»	միավանկ ոտք
նորագույն	»	կաղ ոտք
ոեախստական	»	դիտրոքեռոս ոտք
սովետական	»	և այլն:

Երկանդամ տերմինային բառակապակցությամբ արտահայտված գրականագիտական անվանումների շարքում ամենամեծ թիվը կազմում են.

ածական+գոյական կառուցցները՝ որոշիլ որոշյալի կապակցությամբ, ինչպես օրինակ՝ արձակ բանաստեղծություն, ակնարկային գրականություն, բանաստեղծական շափ, գեղարվեստական արձակ, թիկունքային ուազմերգեր, ծիսական երգեր, հայկական շափ, հաստատում հատած, մանկական գրականություն, յամրական ուտանավոր, ներբողական բանաստեղծություն, սոցիալստական ուեալիզմ և այլն, և այլն:

Այս կառուցցներում բաղադրիչների հերթագայությունը կայուն է այն առումով, որ առաջին բաղադրիչը (ածական անուն) նշում է երկրորդ բաղադրիչի՝ հիմնական հասկացության (գոյական անուն) հատկանիշը: Սակայն գրականագիտական տերմինների բառարաններում բառարանագրական նկատառումներով որոշիշ-որոշյալի հարաբերությունը արտահայտվում է շրջուն ձևով՝ տեղի է ունենում կապակցության բաղադրիչների տեղափոխություն, որոշիշը ետադաս է, որը զուտ պայմանական բնույթ ունի, օրինակ՝ բանահյուսություն ժողովրդական, ժանր գրական, մերոդ գեղարվեստական, պատկեր գեղարվեստական, տուն բանաստեղծական և այլն:

Դա հետեւանք է այն բանի, որ նման կառուցցի երկանդամ տերմինների բաղադրիչների որոշ մասը ունի իր շարքերը, ինչպես օրինակ՝ բանաստեղծական շափ կապակցության բաղադրիչները առանձին-առանձին կազմում են շարքեր.

բանաստեղծական		շափ
բանաստեղծական դպրոց		արաբական շափ
»	երկ	հայկական շափ
»	զրուց	
»	լեզու	
»	հնչումաբանություն	
»	ոճ	
»	պատկեր	
»	սեռ	
»	ստեղծագործություն:	

գեղարվեստական	գրականություն
գեղարվեստական ակնարկ	դասական գրականություն
արձակ	մանկական
» հնարանքներ	գիտա-ֆանտաստիկ
» ոճ	հրապարակախոսական
» պատկեր	ռեալիստական
» պատմվածք	ռոմանտիկական
	սովետական
	Հին

նորագույն գրականություն և այլն:

Գոյական+գոյական կառուցներում շարահյուսական տեսակետից առաջին բաղադրիչ գոյականը սեռական հոլովով է. բաղադրիչները հանդես են գալիս հատկացուցիչի և հատկացյալի կապակցությամբ, ինչպես օրինակ՝ առակի բանատող, արտահայտության կոմիզմ, բնության երգեր, գոյրան երգեր, գրականության տեսություն, գուրանի երգեր, սիրո երգեր, տողավերջի դադար, օրորոցի երգեր և այլն:

Այս կառուցով բառակապակցություններում բաղադրիչների տեղը անփոփոխ է: Սակայն այն դեպքերում, երբ առաջին բաղադրիչի՝ գոյական անվան հիմքից հնարավոր է կազմել ածական անուն, ապա ստացվում է նախորդ ածական+գոյական կառուցը, ինչպես օրինակ՝ հարսանիքի երգեր—հարսանեկան երգեր, սիրո երգեր—սիրային երգեր, վիպասանության ճյուղ—վիպասանական ճյուղ, տողամիջի հանգեր—տողամիջյան հանգեր, օրորոցի երգեր—օրորոցային երգեր և այլն:

Որոշ դեպքերում երկանդամ կառուցները բաղադրիչների կցման հետևանքով վեր են ածվում բարդ բառ-տերմինների, ինչպես օրինակ՝ բանաստեղծական տող—բանատող, առակաց գիրք—առակազիրք, գրելու ձև—գրելաձե, պատմելու ձև—պատմելաձե, սիրո երգեր—սիրերգ(եր) և այլն:

Երկանդամ տերմինային բառակապակցություններում առաջին բաղադրիչ են դառնում նաև խոսքի այլ ձասեր, սակայն դրանք աննշան թիվ են կազմում, ինչպես.

բարբարական կառուցը, օրինակ՝ գրելու ձե, պատմելու ձե.

դերբայ+գոյական կառուցը, օրինակ՝ ընկենող ոփթմ, ընդհատված հանգեր, բողարկված հանգեր, շեշտված վանկ, գործող անձ.

Եախյիր+գոյական կառուցը, օրինակ՝ առանց հանգի, սակայն ավելի գործածական է անհանգ միաբառ տերմինը:

Տաղաշափության մեջ հանդիպում է՝

բվական+գոյական կառուցը, օրինակ՝ առաջին ամանակ, առաջին պեռն, երկրորդ պեռն, երրորդ պեռն, չորրորդ պեռն:

Երկանդամ տերմինային բառակապակցությունների տերմինարանական կաղապարները լինում են.

ոչ տերմին+տերմին կառուցքը գրականագիտական տերմինների համակարգում ամենատարածվածն է, ինչպես օրինակ՝ անձնական բնաւերգություն, աշխատավորական երգեր, արդի գրականություն, արկածային գրականություն, բացասական կերպար, բնական ամանակ, մանկական գրականություն և այլն:

Այս կաղապարին բնորոշ է, որ երկրորդ բաղադրիչը առանձին կիրառություն ունեցող անկախ տերմին է, օրինակ՝ գրականություն, երգ, կերպար, ամանակ:

Տերմին+տերմին կառուցքը նույնպես կենսունակ է գրականագիտական տերմինարանության մեջ, ինչպես օրինակ՝ ակնարկային գրականություն, ամանակական ոտանավոր, այլարաբական գրուց, անապեսայան ոտանավոր, անհանգ ոտանավոր, գուանական երգ, դիդակտիկ պոեզիա, երկմեծասար ոտք, երապարակախոսական ակնարկ, շեշտական ոտանավոր, պետնական ոտք, առակի ոտանավոր, գրականության տեսություն, նեղինակի ոճ, տողավերջի դադար և այլն:

Այս կառուցքի երկրորդ բաղադրիչը առանձին գործածություն ունեցող անկախ տերմին է, որը կարող է կապակցությունների մեջ մտնել նաև այլ տերմինների հետ, իսկ առաջին բաղադրիչը թեև անկախ գործածություն չունի, սակայն նույնպես կազմում է այլ տերմինների հետ շարքեր:

Տերմին+ոչ տերմին կառուցքը պակաս կենսունակ է, քան նախորդները, ինչպես օրինակ՝ գրական ազդեցություն, բանատողի ներդաշնակություն և այլն:

Այս կաղապարով կազմված երկանդամ տերմինային կապակցությունների երկրորդ բաղադրիչը լինում են համընդհանուր լեզվի բառեր, որոնք գրականագիտական տերմինների համակարգում տերմինացված են, ինչպես օրինակ՝ քողազոտ ոտք, քորեյական ոտք, հեղինակային խոսք և այլն:

Ոչ տերմին+ ոչ տերմին երկանդամ կառուցքների բաղադրիչները առանձին վերցրած տերմիններ չեն, սակայն նրանց կազմած գրականագիտական բառակապակցությունը տերմինն է, ինչպես օրինակ՝ ավելավենել տող, բավարար դադար, գործող անձ, դիպվածային լուծում, երկար ոտքեր և այլն:

բ) Եռանդամ տերմինային բառակապակցությունները նույնպես կենսունակ են: Այս կառուցքի մեջ առկա է բաղադրիչների խոսքամասային արտահայտման ու դիրքի բազմազանություն:

Համարյա նույն շափով են կիրառվում ածական+ածական+ գոյական և ածական+գոյական+գոյական կառուցներ:

Առաջին դեպքում առաջին երկու բաղադրիչները որոշիչներ են, իսկ երրորդ անդամը՝ որոշյալ, ինչպես օրինակ՝ ազատ տակտավոր ուսանակոր, ազգային բանաստեղծական գրականություն, արևելյան ժողովրդական ժառյակներ, բարդությա յամբական ուսանավոր, ժողովրդական վիպական երգեր և այլն:

Ածական+գոյական+գոյական կառուցում առաջին բաղադրիչը որոշիչ է, երկրորդը՝ հատկացուցիչ, իսկ երրորդը՝ հատկացյալ, ինչպես օրինակ՝ ազգային բանաստեղծության պատմություն, պրոլետարական օրորոշի երգեր, իրամատային կյանքի բեմա, կովկասյան հայոց գրականություն և այլն:

Այս կառուցի դրսկորման մի այլատեսակն է, երբ երկրորդ գոյական բաղադրիչը թեքված ձևով ստանում է ածականական կիրառություն և հանդես է գալիս ոչ թե հատկացուցիչի, այլ որոշիչի գործառությամբ, հետևաբար ստացվում է որոշիչ+որոշիչ+որոշյալ շարահյուսական կապակցությունը, ինչպես օրինակ՝ հնգատող բանաստեղծություն, եռատող տեսքով բանաստեղծություն, նույնարիվ վաճեցրավ տող և այլն:

Գոյական+ածական+գոյական եռանդամ տերմինային կապակցության մեջ բաղադրիչները գտնվում են հետևյալ շարահյուսական կապակցության մեջ. հատկացուցիչ, որոշիչ և որոշյալ, ինչպես օրինակ՝ ուսնավորի ոփրամական ոտքեր, վաճեցրի բանակական շափեր, երկերի ոճական համակարգ և այլն:

Գոյական+գոյական+գոյական կառուցը ավելի սակավադեպ է, որի կազմում առաջին երկու բաղադրիչները հատկացուցիչներ են, իսկ երրորդը՝ հատկացյալ. նկատենք, որ երկրորդ բաղադրիչը հատկացյալ է առաջինի և հատկացուցիչի՝ երրորդի նկատմամբ, ինչպես օրինակ՝ հայոց գրականության պատմություն, գրողի լեզվի անհատականացում:

Կան եռանդամ կառուցյաներ, որոնց երկրորդ գոյական բաղադրիչը ածականարար գործածվելով՝ հանդես է գալիս որպես որոշիչ, ինչպես օրինակ՝ Ռուսիո հայ գրականություն:

Թվական+ածական+գոյական կառուցը կիրառական է տաղաշափության մեջ, այս կապակցության առաջին բաղադրիչը կատարում է որոշիչի դեր, իսկ երկրորդ և երրորդ բաղադրիչները որոշիչ որոշյալի կապակցության մեջ են, ինչպես օրինակ՝ առաջին պետական ուսանավոր, երրորդ պետական ուսանավոր, չորս վաճեցրի ոտք և այլն:

Եռանդամ տերմինային բառակապակցությունների կերտմանը մասնակցում են նաև այլ խոսքի մասեր, ինչպես՝ դերայը, դերանումը և շատ սակավադեպ՝ մակրայը, որոնք չնշին տոկոս են կազմում:

Դերբայի մասնակցությամբ դիտարկվում են հետևյալ կառույցները.

Դերբայ+ածական+գոյական կառույցը՝ երկու որոշիչի և մեկ որոշյալի գործառությամբ, ինչպես օրինակ՝ գրված հին բանաստեղծություն («գրափոր հին գրականություն» նշանակությամբ):

Դերբայ+գոյական+գոյական կառույցը՝ որոշիչ, հատկացուցիչ և հատկացյալ գործառությամբ բաղադրիչներով, ինչպես օրինակ՝ կրկնված հնայունների նույնություն:

Ածական+դերբայ+գոյական կառույցը ներկայացնում է երկու որոշիչ և մեկ որոշյալ շարահյուսական կապակցություն, ինչպես օրինակ՝ երկրորդական գործող անձինք:

Եռանդամ գրականագիտական տերմինային կապակցությունների դիտարկումից պարզվում է, որ այս կառույցը ավելի հաճախական է, որի առաջին երկու բաղադրիչները տերմիններ չեն, տերմին է վերջին բաղադրիչը:

Ոչ տերմին+ոչ տերմին+տերմին կառույցի օրինակներ. ազգային նախական բանաստեղծություն, արևելյան ժողովրդական ժառանգություն, ժողովրդական բանավոր գրականություն, աշխարհիկ նորագույն վիպագրություն, հնագույն գերմանական ուսանավոր և այլն:

Ոչ տերմին+տերմին+տերմին կառույցի օրինակներ. ժողովրդական լիրիկական երգեր, ժողովրդական վիպական երգեր, ընդհանուր գրականություն պատմություն, մաքուր յամրական ոիքմ, սոցիալիստական գեղարվեստական գրականություն և այլն:

Տերմին+տերմին+տերմին կառույցի օրինակներ. բարդունյա յամրական ուսանավոր, ժողովրդական երգային բանատող, նույնանդամ ազատ ուսանավոր, վերջաշեշտ վանկերով ուսանավոր, վեցատող տներով բանաստեղծություն, ուսանավորի ոիքմական ուտեր և այլն:

Տերմին+ոչ տերմին+ոչ տերմին կառույցի օրինակներ. հանգերի անմիջական հաջորդություն, սյուժեի բաղկացուցիչ մասեր, շեշտերի կանոնավոր դրություն և այլն:

Տերմին+տերմին+ոչ տերմին կառույցը շատ ավելի քիչ է հանդիպում, օրինակ՝ խոսքի պատկերավորության միջոցներ:

Տերմին+ոչ տերմին+տերմին կառույցի օրինակներ. պարզունյա խառն ուսանավոր, հնելինակի անհատական ոճ, հներուների լեզվական անհատականություն, բարդունյա խառն ուսանավոր և այլն:

Ոչ տերմին+տերմին+ոչ տերմին կառույցի օրինակներ. մաքուր յամրական հատկություն, նոր ուսանատիկական դպրոց:

Նկատելի է, որ որոշ դեպքերում եռանդամ կառույցների առաջին երկու կամ վերջին երկու բաղադրիչները ներկայացնելով անկախ եղանդամ տերմինային բառակապակցություններ, գործառում են և ա-

ուանձին, և մեկ այլ բաղադրիչի հետ, ինչպես՝ ժողովրդական լիրիկական երգեր կառուցի վերջին երկանդամը՝ լիրիկական երգեր և ազգային բանաստեղծության պատմություն կառուցում՝ ազգային բանաստեղծություն առաջին երկանդամը:

Նշենք, որ ավելի հաճախական է առաջին դեպքը:

Հնարավոր է նաև առաջին և երրորդ բաղադրիչների միասին երկանդամ գործառությունը, ինչպես օրինակ՝ ժողովրդական երգեր և ազգային պատմություն, սակայն, ինչպես տեսնում ենք, երկրորդ դեպքում երկանդամ կապակցությունը շատ ընդհանուր հասկացություն է արտահայտում, նույնիսկ դուրս է գալիս գրականագիտության սահմաններից, մինչդեռ առաջին օրինակում նույնպես ընդհանուր հասկացություն արտահայտելով, մնում է գրականագիտության համակարգում:

գ) Քառանդամ տերմինային բառակապակցությունները թվով շառչեն, կազմվում են հետեւյալ բաղադրիչներով.

առաջին երկու բաղադրիչները ածական և վերջին երկուսը՝ գոյական անուններ, ինչպես օրինակ՝ զիսավոր ոիքմական շեշտերի դրություն, ժողովրդական երգիծական ներքիարի մշակում, ազգային բանաստեղծական արվեստի պատմություն և այլն:

Քառանդամ կապակցության երկրորդ կառուցում ածական և գոյական անունները դասավորված են մեկընդմեջ, ինչպես օրինակ՝ արեմբայան հայոց արդի գրականություն կամ արեմտյան հայոց նոր գրականություն:

Հանդիպում է նաև երեք-չորս ածական և մեկ գոյական անուններից բաղկացած բառակապակցություն, ինչպես օրինակ՝ նին գոտանական ժողովրդական երգեր, նույնութեայ յամբական բառավանկ պարզունյա ուանավոր:

Թվական անունները մասնակցում են քառանդամ կապակցություններ կազմելուն՝ թվական, երկու ածական և մեկ գոյական անուն հերթագյությամբ, օրինակ՝ նինգ շեշտանի յամբական ոտանավոր: Այս կառուցը սահմանափակվում է տաղաչափական հնարավոր ձևերի սահմաններում:

Հաջորդ քառանդամ կառուցը ունի մեկ ածական և երեք գոյական կազմություն, ինչպես օրինակ՝ տարբեր ոտերի խառնուրդով ոտանավոր:

դ) Հնգանդամ տերմինային բառակապակցությունները կենսունակ չեն. հանդիպել է մակրայ+դերբայ+ածական+ածական+գոյական անուն հերթագյությունն ունեցող կանոնավորապես դասավորված ոիքմական զորեղ շեշտեր անվանումը:

Ուսումնասիրության նյութ ծառայող հայերեն գրականագիտական գրականությանը ծանոթանալիս՝ կազմել ենք 1850 թվից մինչև մեր օրերը գրականության մեջ հանդիպող գրականագիտական տերմինների ու տերմինային արտահայտությունների ցանկ: Ի՞նչպէս, հավակնությունն ըստնենք կարծելու, թե այն ընդգրկում է հայ գրականագիտական տերմինային ողջ համակարգը, քանի որ անհնարին է սպառել հայերեն համապատասխան ծովածավալ գրականությունը և հավաքել ամբողջ տերմինաբանությունը, ուստի առայժմ բավարարվելով մեր ձեռքի տակ հղած ցանկով, փորձենք ներկայացնել ուսումնասիրած ժամանակահատվածում և այժմ գործառության մեջ գտնվող տերմինների զարգացման պատկերը:

Բացի այդ, գրականագիտական տերմինների համակարգում առկա համանշությունը վերացնելու և միօրինակացման գործին օգնելու նպատակով առանձնացրել ենք ներկայիս առավել կենսունակ բառաձեկոն ու տերմինները:

Առավել գործածական  
տերմիններ և անվանումներ

աղգասիրական

ակնարկ

անհատական երգեր  
աշխատանքային երգեր

աշխարհիկ

առակագիր

առակագիրք, առակների  
ժողովածու

առակագրություն

առաջարան, նախարան

Գրականուրյան մեջ գործածված  
տերմիններ և անվանումներ

աղգային

նացիոնալիստական

հայեցվածք

հայացք

անձնական երգեր

աշխատավորական երգեր

աշխատանքի երգեր

աշխարհական

առակաբան

առակախոս

աղվեսագիրք

աղվեսավեպ

առակաց գիրք

առակաբանություն

առակախոսություն

ընծայական

կանխարանություն

հառաջարան

հառաջարանական խոսք

հառաջարանություն

	<b>մուտք</b>
<b>առասպել</b>	նախաբանություն
<b>առասպելական</b>	նախադրություն
<b>ասացվածք</b>	պատրաստություն
<b>ասուլիթ</b>	առասպելաբանություն
<b>արարված</b>	առասպելիք
<b>արևելահայ (գրականություն)</b>	լեզենդար
<b>արևմտահայ (գրականություն)</b>	լեզենդարական
<b>արձակ</b>	ասացված
<b>բանաստեղծ</b>	ասություն
<b>բանաստեղծական տուն</b>	արար
<b>բանաստեղծություն</b>	կովկասահայ
<b>բոտանիկություն</b>	կովկասյան հայոց
<b>բուսաբան</b>	ռուսահայ
<b>բուսիոն հայոց</b>	Ռուսիոն հայոց
<b>արևմտյան հայոց</b>	արևմտյան հայոց
<b>երգիչ</b>	թուրքահայ
<b>ոտանավոր գորոդ</b>	թուրքիոն հայոց
<b>պոետ</b>	տաճկահայ
<b>տաղաչափ</b>	պրոզա
<b>տուն</b>	երգիչ
<b>քառատող</b>	ոտանավոր գորոդ
<b>քանաստեղծական ստեղծագործություն</b>	պոետ
<b>ոտանավոր</b>	տաղաչափ
<b>բանաստեղծուհի</b>	քերթող
<b>բանավոր</b>	տուն
<b>բանավոր</b>	քառատող
<b>բանաստեղծական ստեղծագործություն</b>	բանաստեղծական ստեղծագործություն
<b>բանաստեղծուհի</b>	շափածող
<b>բանավոր</b>	շափածող
<b>բանավոր</b>	քերթողական գրված(ք)
<b>բանավորություն</b>	քերթողություն
<b>բանաված</b>	քերթված
<b>բանավորություն</b>	քերթություն
<b>կին-բանաստեղծ</b>	կին-բանաստեղծ
<b>քերթողուհի</b>	քերթողուհի
<b>անգիր (գպրություն)</b>	անգիր
<b>բերանացի</b>	բերանացի
<b>բերանե բերան</b>	բերանե բերան

բարձրակետ	բերնե բերան բերնով գագաթնակետ կիղակետ կուլմինացիա բնապատկեր պերզած տիպական տիպիկ
բնանկար	գաղափարային էսթետ
բնորոշ	ճաշակագետ
գաղափարական	գեղագրական էսթետիկ
գեղադիտական	էսթետիկական գեղջուկ (աժ.) գյուղական (երգեր)
գլուխգործոց	գլխավոր երկ գլուխ(-)գործոց
գյուղագիրներ	գավառացի արձակագիրներ
գովերգ	գովասանական (գ.) գովասանական երգեր
գոեհկացում	գոեհկանացում վուգարիզացիա
գրախոսություն	գրախոսական թղթակցություն հոդված
գրական լեզու	մատենախոսություն գրականական լեզու գրավոր լեզու գրոց լեզու
գրականության պատմություն	գրական պատմություն գրականական պատմություն մատենագրական պատմություն մատենագրության պատմություն պատմության մատենագրություն գրագիտություն դպրություն մատենագրություն
գրականություն	

ԳՐԱՎՈՐ

**գրաքննադատություն, գրական  
քննադատություն**

## ԳՐԵԼ, ՍՄԵՂԺԱՎՈՐԾԵԼ

ուսումնականություն  
ուսումնասիրություն  
գրագիտական (ժամանակ)  
գրագիտություն  
գրադատական (գ.)  
գրադատություն  
գրականական քննադատություն  
գրաքննադատական հոդված  
կրիտիկա  
քննադատություն  
արտադրել  
անաստեղծել  
դրի անցնել  
օրկասիրել  
նեղինակել  
ուրինել  
արադրել  
արահարել  
լիպագրել  
երթողաբանել  
դրագետ  
եղինակ  
ատենագետ  
տեղծագործող  
ոգիլք  
աղասաց(ք)  
լասիկ  
լասիկական  
լասիկային  
ամանակագրական բաժանմունք  
լասիփիկացիա  
ատերգակ  
ատերգու  
ատերգակ  
ատերգական գրականություն  
ստրերգություն  
եռեռո

፳፻፭፻

## գուսան, տաղերգու

## Դասական

## Դասակարգում, դասակարգություն

ԴՐԱՄԱԹՈՒՐԻ, ԹԱՄԵՌՈՎԱՅԻՆ

Պրամատուրգիա, թատերագրու-  
թուն

## Եղերգություն

<b>երգիծաբան</b>	<b>երգիծաբան քերթող երգիծող (գ.) երգիծող բանաստեղծ կատակաբան կատակերգակ կատակերգու սատիրիկ գրող երգիծական երկեր երգիծողովայում երգիծություն զավեշտ զավեշտախաղ ծաղը ծաղրաբանովայում ծաղրածություն ծաղրական վեպ հեգնաբանովայում սատիրա</b>
<b>երգիծական</b>	<b>երգիծաբանական երգիծող (գրականովայում) երգիծողական զավեշտական զվարճալի զվարճացնող ծաղրաբան ծաղրական ծիծաղելի կատակերգական հեգնաբան ֆանտազիա աշխատանք աշխատասիրովայում աշխատություն արդյունք արտադրություն գիրք գործ գրովայուն երկասիրություն</b>
<b>երևակայություն երկ, ստեղծագործություն</b>	

Հեղինակություն	
մատյան	
քերթված	
քերթություն	
դրուցաբանություն	
երես	
դրամատուրգիական	
թատերգական	
թատրոնական	
թեատրոնական	
«թարգմանությանը վերաբերող,	
թարգմանության» իմաստով	
«թարգմանչին վերաբերող,	
թարգմանչի» իմաստով	
թափառական	
թափառիկ	
արդի	
ներկա	
հավաքածող	
հավաքածու	
հավաքում	
ուամկական	
ուամկորեն	
ուեալ	
օպտիմիզմ	
սիմվոլիկ	
սիմվոլիստական	
կեղծանուն	
կեղծ(-)անուն	
պսեդոնիմ	
դեպքերի դասակարգություն	
հյուսվածք	
շինմածք	
հերոս	
տիպ	
տիպար	
կոմեդիա	
առեղծված	
բունգն (բունկն)	

Հատված

Հեքիաթասաց, Հեքիաթագիր  
Հոգեոր երգեր, գրականություն  
Հրապարակագիր, Հրապարակա-  
խոս  
Հրապարակագրություն, Հրապա-  
րակախոսություն  
Ճառ  
Ճակողիր

Ճանկական  
Ճանկական գրականություն  
Ճենագրություն  
Ճենախոսություն

Ճիշաղեպ

Ճիշնաղարյան

Նատուրալիզմ  
Նատուրալիստ

Նատուրալիստական  
Ներածություն  
Նկարագիր  
Նկարագրություն

Նկարագրություն  
Նորավեպ

Նույնանիշ  
Չրշանաբաժանում

Կտոր

Հատակտոր

Հեքիաթչի

Եկեղեցական երգեր

Կրոնական երգեր

Հոգեոր

Ճառախոս

Հոգտորություն

Ճարտասանություն

Ճառախոսություն

ածական

էպիտետ

Վերադիր

Երեխայական (երգեր)

մանկագրություն

մոնոգրաֆիա

ինքնախոսություն

մոնղող

դրվագ

էպիզոդ

Ճիշին դարերի

Ճիշին դարու

բնապաշտություն

բնապաշտ

բնութինապաշտ

բնապաշտական

ներածական (գ.)

«մարդու բնութագիր» իմաստով

«նկարագրվածը, նկարագրելը»

իմաստով

ստորագրություն

նովել(ա)

նովել

նույնանշան (բառեր)

բաժանում

կարգաբանություն

շրջաբանություն

պերիոդիզացիա

ողբ, ողբերգ

ողբերգություն

շափազանցություն

շափածո

պանդիստական

պատմագրություն

պիես

ռեալիզմ

ռեալիստ

ռեալիստական

սիրերգ

սկսնակ

սիյուռքահայ

ողբասացություն

վշտակության (տաղեր)

տիրության (երգեր)

եղերգ

եղերգություն

եղերերգական խաղարկություն

տրագեդիա

հիպերբոլ (ա)

բանաստեղծական

ոտանավոր (ած.)

շափաբանական

շափաբերական

շափական

շափավոր

տաղաշափական

տաղաշափյալ

դարիպական (երգեր)

պանդիստային

պանդիստի

պանդուխտի

պատմական գրվածք

թատերախաղ

թատերագրություն

թատերակ գրվածք

թատերական գործ

թատերական երկասիրություն

թատերական քերթված

թատերգ

թատերգություն

իրապաշտություն

իրապաշտ

իրապաշտական

սիրահարական երգեր

սիրային երգեր

սիրապատում վիպասանություն

սիրո երգեր

սկզբնակ

եվրոպական հայ (մատենագրություն)

վեպ

վերլուծություն

վերնագիր, խորագիր

վերջաբան

վիճակախաղ

վիպագրություն

վիպասան

վիպասանություն

վիպասանուհի

տառ

տաղաշափություն

տաղաշափություն

տարբերակ

տրամաբանական

տրամաբանություն

փուլ

վիպագործություն

վիպական քերթված

վիպասանական գիրք

վիպասանություն

անալիզ

վերլուծում

անուն

հորչորչում

մակագիր

մակագրություն

ելք

լուծում

վախճան

ֆինալ

վիճակ

վիպական գրականություն

վիպասանական բանաստեղծություն

վիպասանություն

վիպագիր

վիպագրող

«վիպասան լինելը, վիպագրությամբ զբաղվելը» իմաստով

կին(-)գրող

կին վիպասան

հեղինակուհի

վիպագրողուհի

երգ

խաղ

խաղերգ

տաղերգ

մետրիկա

թվականություն

շափականություն

վարիանտ

փոփոխակ

լոգիկական

լոգիկա

ժամանակ(ներ)

Քնարերգու

միջոց

շրջան

պերիոդ

լիրիկ

քնարական բանաստեղծ

քնարերգակ

քնարերգու բանաստեղծ

քնարական բանաստեղծություն

քնարերգական բանաստեղծություն

թյուն

լիրիկա

մատենախոս

կրիտիկոս

օրհնանք

օրհնություն

օրորներ

օրորոցի երգեր

քննադատ

օրհներգ

օրորոցային երգեր

Այս համառոտ ցանկից ակնառու է դառնում, թե զարգացման ինչ-պիսի ճանապարհ են անցել գրականագիտական ժամանակակից տերմինները և, թե ինչպես համընդհանուր գործածական բառերից ու արտահայտություններից շատերը տերմինացվել են ու աստիճանաբար կայունանալով ամրացվել որոշակի հասկացությունների:

Առաջմ գրականության մեջ, մանավանդ բանավոր խոսքում, առկա են զուգարանություններ, սակայն, ինչպես ցույց է տալիս պատմությունը, ժամանակի ընթացքում, աստիճանաբար զուգահեռ ձևերից, համանիշներից կհաղթի մեկը, կկայունանա լեզվում և կհամապատասխանի որոշակի հասկացության տվյալ տերմինահամակարգում:

## ՀԱՄԱԴՐԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ—Ա. Արփիարյան, Պատմություն ԺԲ դարու Թուրքիո հայոց գրականության, Դահիրն, 1943:

ԱՏ—Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ, Երևան, 1944:

Ա. Արխանոսիլ, Պոետիկա, Երևան, 1955:

ԳԱ—«Դրբերի աշխարհ»:

ԳաԲ.—Հ. Գարբրեյան, Պատմություն մատենագրության հայոց, Վիեննա, 1851:

ԳԲ—Էդ. Զրբայշյան, Հ. Մականագիտական բառարան, Երևան, 1972 և 1980:

ԳԵ—Գ. Ենգիբարյան, Մատենախոսություն, Թիֆլիս, 1909:

ԳԲ—«Դրական թէրթ»:

- ԳԺ—Դրական ժանրեր, Երևան, 1973:  
 ԳՀ—Գ. Լևոնյան, Երկեր, Երևան, 1963:  
 ԳՎ—Գ. Վահանյան, Հայոց լեզվի ոճարանության ձեռնարկ, Երևան, 1956:  
 ԳՏՄ—Գ. Տեր-Մկրտչյան, Հայկականք ԺԴ—ԺԹ, Վաղարշապատ, 1899:  
 ԳՌՏԲ—Լ. Տիմոֆեև և Ն. Վենցը, Դրականագիտական տերմինների համառոտ բառարան, Երևան, 1957:  
 ԳՕ—Գ. Օզանյան, Պատմություն Հայ լեզվի և բանահյուսության, Մարզվան, 1913:  
 ԳԴ—Ե. Դուրյան, Պատմություն Հայ մատենագրության ի վաղ ժամանակից մինչև մեր օրերն, Կ. Պոլիս, 1885:  
 ԵԾ—Ե. Շամազիկ, Խորենին արք. Գալֆայան և Նալբանդյանի Աղջմիքը, Թիֆլիս, 1904:  
 ԶՃ—Ա. Երեմյան, Զահարմահալի Հայ ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923:  
 ԶՀԴ—Գ. Զարբինանայան, Հայկական Հին դպրության պատմություն (Դ—ԺԴ դր.), Վենետիկ, 1897:  
 ԶՀՄ—Գ. Զարբինանայան, Պատմություն Հայերեն դպրությանց, Ա, Հին մատենագրություն, Վենետիկ, 1865:  
 ԶՆՄ—Գ. Զարբինանայան, Պատմություն Հայերեն դպրության, Բ, Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878:  
 ԷԶ—Էդ. Զերայշյան, Դրականության տեսություն, Երևան, 1962, 1967, 1972, 1980:  
 ԺԴՀ—Ժամանակակից գրականության հարցեր, Երևան, 1963:  
 ԺԹ—Ժ. Ա. Քալանքարյան, Ժամանակակից սովորական գրականության ձեռագրեան շրջանում, Երևան, 1974:  
 ԿԵԲ—Ռուսաց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, 1828 և 1904:  
 ԱՄ—Լ. Մանվելյան, Ռուսաց գրականության պատմություն, Ա—Գ, Ալեքսանդրապոլ, 1909—1910, Դ, Թիֆլիս, 1911 և Ա—Բ, Թիֆլիս, 1913, XIX դ., մասն 3, 1917:  
 ԽԱՀ—Խ. Արովյան, Գրական-բանասիրական հետազոտություններ, Գիրք երրորդ, Երևան, 1948:  
 ԽԱԼԱՐ.՝Բ. Խալարյանց, Հայ ժողովրդական դրացազնական վեպը հանդերձ քննադատությամբ, Վիեննա, 1903:  
 ՀԱԱ—Հ. Անայիան, Պատմություն Հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906:  
 ՀԲ—Էդուարդ Հյումյուսյան, Առձեռն բանաստեղծութիւն, Վենետիկ, 1839:  
 ՀԴԻՑ.՝Ե. Հյումյուսյան, Առձեռն դիցարանութիւն կամ Առասպելախառն վէպք գդից և զդիցազանց, Վենետիկ, 1840:  
 ՀԶ—«Հայրենիքի ձայն»:  
 ՀՃԱՐ.՝Ե. Հյումյուսյան, Առձեռն ճարտասանութիւն, Վենետիկ, 1856:  
 ՀՆԳԹ—Հայ նոր գրականության պատմություն, Հ. 1, 2, Երևան, 1962, Հ. 3, 1964, Հ. 4, 1972, Հ. 5, 1979:  
 ՄԱՄ. Արենյան, Երկեր, Ա—Ե, Երևան, 1966—1971:  
 ՄԱՏՄ. Արենյան, Հայոց լեզվի տաղաշափություն (մետրիկա), Երևան, 1933:  
 ՄԷ—Մ. Էմին, Վէպք հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850:  
 ՄԷԵ—Մ. Էմինի երկասիրությունները, Մոսկվա, 1898:  
 ՄԽԳԹ.՝Մ. Խորենացի, Նախակրթութիւն հռետորական ասացեալ Գիրք Պիտոյից, Վենետիկ, 1796:  
 ՄԽԳ.՝Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:  
 ՄՆ—Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953:  
 ԶԱԼԻՄ.՝Գ. Զալսուշյան, Մտքեր, Խոռհեր, գեմքեր, Թիֆլիս, 1914:

- ԱՀԳՊ—Սովետահայ գրականության պատմություն, հ. 1 (1317—1941), Երևան, 1961 և  
հ. 2 (1941—1964), 1965:
- ՄՆ—Մ. Խազարյանի երկերը, հ. 1, Թիֆլիս, 1913:
- ՄՊ—Մ. Պալասանյան, Պատմություն Հայոց գրականության, հ. 1, Բանավոր գրականու-  
թյուն, Թիֆլիս, 1865:
- Սովորամթ.—Սովորամթյան, Հայ գրականություն, հ. 2, Երևան, 1926:
- ՎՎ—Վ. Տեր-Մինասյան, Անգիր գլուխություն և առակք, Կ. Պոլիս, 1893:
- ՎՓ—Վ. Փափաջյան, Պատմություն Հայոց գրականության, Թիֆլիս, 1910:
- ՑԽ—Ց. Խանզադյան, Հոգվածների ժողովածու, Երևան, 1963:
- ՔՀայ—Մ. Մինասարյանց, Քնար Հայկական, Մ. Պետերբուրգ, 1868:

### Ս Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Առայժմ հրատարակված են Կազանչյան Լ. Օ., Системно-структурный анализ аре-  
мийских лингвистических терминов, Ереван, 1975 (թե՛կնածուական գիսերտա-  
ցիայի ավտոռուֆերատ): Լ. Զ. Ղազանչյան, Հայերեն լեզվաբանական տերմին-  
ների համակարգային-կառուծվածքային վերլուծություն, Լեզվի և ոճի հարցեր, հ. IV,  
Երևան, 1977, էջ 200—335; Է. Բ. Աղայան, Տերմինագիտություն, Երևան, 1978:  
Մ. Ա. Խշինյան, Ակնարկ հայերենի տերմինաշնորհյան, Երևան, 1981:

2 ՀԱՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում (հեղինակ՝ Կիցա Պետրոս-  
յան) կազմվել է այդպիսի տերմինարանի նախագիծ, որը տակավին լին հրատարակված:

3 «Հայ գրականագիտական, ոճագիտական և տաղալափական տերմիններ» ասելու  
փոխարեն համառոտության համար այսուհետև կգրքածենք միայն գրականագիտական  
բառը՝ ընդհանուր իմաստով:

4 Փակագծերում նշվում են Արխատուելի «Պոետիկա», Երևան, 1955 թ. էջերը Այսու-  
հետև՝ փակագծված թիվը նշում է աշխատության էջը, որի մասին խոսվում է տեքստում:

5 Նրա կարծիքով, կոմեդիան առաջացել է այն բանից, որ գերասանները սովորաբար  
թափառում էին կոմաներում (քաղաքը շրջապատող բնակավայրերն այդպիս էին կո-  
չում Պելեպոնեսի բնակիչները, իսկ աթենացիները՝ դեմոններ):

6 Արխատուել, Պոետիկա, Երևան, 1955, էջ 156:

7 Սրբոյ քերթողահօր մերոյ Մովսէս Խորենացայ նախակրթութիւն հռետորական ա-  
ստեղեալ Դիբը Պիտոյից, Վենետիկ, 1796:

8 Տե՛ս Գ. Զահոնյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և  
միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.), Երևան, 1954, էջ 31—41, Գ. Բ. Զահոնյան,  
Գրաբարի քերականության պատմություն (XVII—XIX դդ.), Երևան, 1974, է. Ա-  
ղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958, էջ 74—80, Ա. Մո-  
ւարյան, Հունարան գարողը և նրա դերը հայերենի քերականական տերմինարանության  
ստեղծման գործում, Երևան, 1971:

9 Տե՛ս Ա. Մուրադյան, Նույն տեղում, էջ 156—162:

10 Տե՛ս Բ. Բլագոյ Դ. Դ., Необходимо упорядочить литературоведческую  
терминологию, Известия АН СССР, отд. лит. и яз., 1961. т. XX, вып. 3, էջ  
199—206. Մուս գրականագիտական տերմինարանություն և բառարանների մասին

«*Современная литературоведение*» П. Н. Берков. Очерк развития русской литературоведческой терминологии до начала XIX в., Известия АН СССР, отд. лит. и яз., 1964, т. XXIII, вып. 3, № 238—247.

11 *Տե՛ս Լ. Գևորգյան*, Գրականագիտական տերմինների համառոտ բառարանը, Աղվանական գրականություն, 1959, № 3, էջ 143—147:

12 Եղասիր Հյուրմյուզյան, Առձեռն բանաստեղութիւն, Վենետիկ, 1839:

13 Եղասիր Հյուրմյուզ, Առձեռն ճարտասանութիւն, Վենետիկ, 1856:

14 Եղասիր Հյուրմյուզյան, Առձեռն դիցարանութիւն կամ առասպելախառն վեպք գդից և զդիցազանց, Վենետիկ, 1840:

15 Հ. Ճաղարիսյան, Բանահյուսության տեսություն, Թիֆլիս, 1894, էջ 12:

16 Վերանն Զալբյան, Քերականութիւն հայկական լեզուի, աշխատասիրեալ ի Հ. Արսէնէ Վ. Այտբընեան, Վիեննա, 1855:

17 Հանգամանորեն տե՛ս Սարգսի Հարուրյանյան, Մանուկ Արեգյան, Կյանքի ու դորձը, Երևան, 1970:

18 Հ. Գարրենյան, Պատմություն մատենագրության Հայոց, Վիեննա, 1851:

19 Ստ. Պալատանյան, Պատմություն հայոց գրականության, հ. I, Թիֆլիս, 1865, էջ 7:

20 Հարեւանցի հայեցվածք (ուստերեն բեցլայ աշխատ) այժմ թարգմանվում է՝ «Թուուցիկ ակնարկ», «Թուուցիկ հայացք», իսկ «ծրագիր» (օբозрение) այժմ՝ «տեսություն»:

21 Տե՛ս Ստ. Նազարյանի Երկերը, հ. 1, Թիֆլիս, 1913, էջ 223—236:

22 Գ. Զարբենանյան, Պատմություն հայերեն դպրությանց, հ. Ա, Հին մատենագրություն, Վենետիկ, 1865, Հառաջարան:

23 Տե՛ս Ա. Արգիփարյան, Պատմություն Ժթ գարու Թուրքիո Հայոց գրականության, Դահիք, 1943, էջ 30:

24 Բ. Խալարյանց, Հայ դողովդրական դյուցազնական վեպը, Վիեննա, 1903:

25 Լև, Ռուսահայոց գրականությունը, Վենետիկ, 1928, էջ 15: Խոյնի առաջին հրատարակությունը, Վենետիկ, 1904:

26 Հ. Անայիան, Պատմություն հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906, էջ 3:

27 Հ. Անայիան, նշվ. աշխ., էջ 41:

28 Գ. Ենգիբարյան, Մատենախոսություն, Թիֆլիս, 1909:

29 Լ. Մանելիսյան, Ռուսահայ գրականության պատմություն, Ա. Ալեքսանդրապոլ, 1909, էջ 3:

30 Վ. Փափաջյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910:

31 Գրականագիտական տերմինների բառակազմական միջոցները հանգամանորեն կներկայացվեն բառակազմական վերլուծության բաժնում և կաղապարները քննելին:

32 Եղենք, որ գրական տերմինների գրային տարրերակները գլխավորապես օտար փոխառություններին են վերաբերում:

33 Գրանց տարրերակ կոչվելը նույնիսկ սխալ է, քանի որ գրանք ոչ թե զուգահեռ ձևեր են, բառեր, այլ նույն տերմինի տարրեր գրությունը:

34 Ռուբայաթ հողնակի նշանակություն ունի, սակայն որոշ հեղինակներ գործածում են եղակի նշանակությամբ, օրինակ՝ «Երգում էին իրենց դյուքական ուրբայալները սիրո կրակով կրակված» (Ավ. Խանիալյան, Երկեր, 1951, 3, էջ 180, նաև «Գիտություն և տեխնիկա», 1977, 11, էջ 24):

35 Որոշ գեպերում գրության տարրերությունները ստանում են բառային նոր ի-

յասու, ինչպես դարձված ձեզ քերականական տերմինային հապակցության բաղադրիչ է, օրինակ՝ դերայական դարձված, իսկ ոճագիտության մեջ գործածվում է դարձված:

36 Թարգմանական և քարգմանշական, քառերգակ և քատերգակ, քատերգություն և քատերգություն զուգարանությունները առաջանում են նույն արմատով կազմված տարրեր բառերի ածանցումից, ինչպես՝ թարգմանականը՝ թարգմանել-ից, թարգմանշականը՝ թարգմանիլ-ից և այլն:

37 Օրինակների մեջ տրվում են նաև նախածանց ունեցող վերջածանցավոր տերմինները:

38 Տե՛ս Լ. Հ. Ղազանշան, Հայերեն լեզվարանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, Լեզվի և ուսի հարցեր, հ. IV, Երևան, 1977, էջ 299.